Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՉՈՐՐՈՐԴ ԸՆԹԵՐՑԱՐԱՆ

ԿԱՄ

ԳԻՏԵԼԻՔ ՈՒ ՊԱՐՏԻՔ ՏՂՈՑ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

ԵՐԳԻՆԵՑ

Մ. ՄԱՄՈՒՐԵԱՆ

ՅՐԴ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

31.99-8
Մ-22

ԻԶՄԻՐ
ՏՊԱԳՐ. ՄԱՄՈՒՐԵԱՆ
1992

ՉՈՐՐՈՐԴ
ԸՆԹԵՐՑԱՐԱՆ

ԿԱՄ

ԳԻՏԵԼԻՔ ՈՒ ՊԱՐՏԻՔ ՏՂՈՑ
ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

ԳՈՐԻՆԵՑ

Մ. ՄԱՄՈՒՐԵԱՆ

ՏՐԴ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

معارف نظارت جلیله‌سنك ٥٦٨ نومرولی و١٥ تشرین اول ١٣١٤
تاریخلو رخصتنامه‌سیله طبع و نشر اولنمشدر

ԻԶՄԻՐ
ՏՊԱԳՐ. ՄԱՄՈՒՐԵԱՆ
1902

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Նախակրթական դասարանների համար յօրինուած ընթերցարանների մէջ թէ՛ ոգի եւ թէ՛ իմաստի աստիճանական կարգ մը պահել եւ աշակերտներու ընդունակութեան եւ մտային կարողութեան յարմար նիւթեր աւանդել անհրաժեշտ լինելով՝ արժան դատեցինք մեր Երեխայ ընթերցարանները վերայարդարել եւ էջ շատ ոռնացնելով փոփոխել։

Այդ՝ մեր Ա. Ընթերցարանն եղաւ՝ որ 6 — 7 տարեկան աշակերտներու պատկան է, Երկրորդն փոքր ինչ դժուարին ու խրթին գտնելով 7 — 8 տարեկան տղոց համար, անոր տեղ ուրիշ մ'աւելի դիւրընթերցելի՝ յօրինեցի, կամ արդեն տարիներ առաջ մեր յօրինածն (Մանր վիպակներ ու դասեր) համանոցեր ու ամ փոփելով հրատարակեցինք, Երրորդ կարգն (9 — 10 տարեկան տղոց յարմար) տալով մեր Երկրորդ Ընթերցարանն, եւ Երրորդ Ընթերցարանն (Գէոգրաֆիա ու պատմութիւն) Չորրորդ կարգի վերածելով։

Ա. յոյսս աշակերտ մ'Ա—ՋԻՆ Ընթերցարանին սկսելով կարող պիտի լինի աստիճանաբար յառաջանալ եւ մինչեւ 11 — 13 տարեկան հասակն Չորրորդը գործածել, որ արդեն — Ընթերցարանի տպագրութեան հասած լինելով, աւելորդ է ըսել, որ թէ ազգային ուսուցիչներու կողմէ գնահատուած է եւ թէ աշակերտներու ըստ կարի մտքի ու սրտի սնունդ հայթայթող օժանդակ գործի մ'եղած է։

Հետեւապէս՝ —ՋԻՆ, Երկրորդ, Երրորդ եւ Չորրորդ Ընթերցարան անուանելը, հրատարակուած են այդ դասական գրեանքներ։

Աւելորդ չեմ համարիր մեր Գէոգրաֆիա — պատմութիւն Ընթերցարանին Ա. յ—Ջ—Ն մէջ ըրած դիտողութիւնն այս առթիւ կրկնել թէ Արդոյ դասատուներն՝ որ ի հարկէ աշակերտին ընթերցասիրութեան ճաշակին հետ իմացողութիւնն ալ մշակելու կը ջանան, քանի որ այնքան կարեւոր եւ գրեթէ անհրա-

ժեշտ պայման մ'է հաստատուած չար դասդիարակութեան, որոշ, յստակ ու պայծառ առողջութեան եւ արտասանութեան դարձել աշակերտներն, մինչեւ իսկ բարձր կարգերու մէջ, Այդոյ դասատուները կ'ըսեմ պարտին զուն զործել մեն մի ԸՆԹԵՐՑՈՒՆ մէջ պարունակուած բարոյական եւ կարգ գիտական դասերը բացատրել եւ շուտաթանել՝ այնպիսի հարցու�մներով որ աշակերտներուն միտքը բանալու եւ սիրտը կրթելու օգնեն։ Եւ մեր ԸՆԹԵՐՑՈՒՆԵՐՆ ուեղի գործնական արդիւնք կրնան յառաջ բերել անշուշտ, եթէ ազգային ուսուցիչներն այլ եւ այլ առարկայից հաւասածոյ մ'ունենալով իրենց ձեռքին տակ, աշակերտներուն ցոյց տան, որպէսզի ինքնին տեսնեն ու ճանչնան անոնց հանգամանքն եւ զանազան բաղդատութիւններ ընելով՝ օգտակար եւ շուրջ եզրակացութիւններ հանելու առաջնորդուին։

Զմիւռնիա, Յունուար 1900 Ս. Ս.

ՉՈՐՐՈՐԴ

ԷՆԹԵՐՑԱԲԱՆ

Ի՞ՆՉ Է ՊԱՏՃԱՌԸ

Ամեն ուշիմ տղայ՝ երբ չորս դին ուշադիր կը նայի, շատ բաներ կը տեսնէ և բնապէս կը հարցնէ ինքնիրեն կամ իրմէ աւելի հմուտ ու փորձ անձի մը — ի՞նչ է այս, ի՞նչ է այն, ինչո՞ւ համար օդը տաք է այսօր, ինչո՞ւ համար ուրիշ օր կը ցրտէ, ի՞նչ են արևը, լուսինը, աստղերը — և հարկաւ կը փափաքի այս ամենուն դոյութեան պատճառները իմանալ։

Կ՚ուզէ նաև հասկնալ թէ՝ ի՞նչ պարտք ունի երկրիս վրայ՝ առ Աստուած, առ ծնողս, առ ընկերս, ի՞նչպէս պարտաւոր է վարուիլ իր նմաններուն հետ, և ի՞նչ պաշտօն ունի աշխարհիս վրայ։ Մինակ ուտելու, խմելու և խաղալու համար ծնա՞ծ է թէ ոչ ուրիշ գործեր ալ ունի կատարելիք, որպէս զի բարի, ազնիւ և օգտակար կեանք մը կարենայ վարել իր ընտանիքին և ընկերութեան մէջ։

Ահա այս ամեն հարցումներուն պատասխանը կրնան տալ իրեն իր ծնողքը, եթէ կարող են, իր դաստաուները կամ գիրքերը, եթէ կարդալ ու գրել սորվի։ Եւ որքան հաճոյք պիտի զգայ լաւ և հետաքրքիր աշա-

կերտ մ՝եթէ քիչ քիչ իրեն մութ, անծանօթ երեւցած բաներուն տեղեկանայ։

Այսպիսի գիրք մը պիտի լինի և այս ընթերցանութեան գիրքն, որ՝ կարելի եղածին չափ՝ մտադիր ու ջանասէր աշակերտներու պիտի բացատրէ գանազան բաներ, որոց ուսումը շատ պիտանի է։ Այս դասերով պիտի փարժիք ճշմարտութիւնը փնտռել, վասն զի աշակերտի մ՝առաջին պարտաւորութիւնն է սիրել ինչ որ ճշմարիտ է, ինչ որ արդար է և ազնիւ։

Հետեւապէս՝ այս գիրքին մէջ պիտի գտնէք թէ պատմական, թէ ուսումնական և թէ բարոյական դասեր, որոց միտքը լաւ ըմբռնելով՝ պիտի պատմէք ու բացատրէք ձեր դասատուին, և երբեմն ալ գրի առնելով պիտի շարադրէք։

Յուսալի է, որ գոհ պիտի մնաք այս՝ թէև անկապ, այլ օգտակար ընթերցումներով, և քանի յառաջանաք, այնքան աւելի լուրջ և դժուարին բաներ սորվելու պիտի աշխատիք։

ՏՂՈՒՆ ՊԱՐՏԻՔԸ

Ամեն էակ էրեսուն ունի և պոչուն։ Իրաւունք ունի ապրելու, ուսանելու, խորհելու, բայց պարտիք ալ ունի ուրիշին իրաւունքը չարգելու։ Այս բաւական չէ, քանի որ Աստուած այլ և այլ հնարքներ տուած է քեզ, ինչպէս օգը, ջուրը, արեւը, պատուղներ զոր կ՝վայելես, բարի ծնողներ՝ որ քեզ կ՝խնամեն, հետեւապէս ունիս պարտք։ Այս պարտիքն են. զանի սիրել, պաշտել և անոր տուած պատուէրները պահել։

Բայց ծնողդ ալ քեզ համար կ'աշխատին, քու բարիքդ կ'ուզեն, քեզ կ'կերակրեն ու կ'կրթեն, և քու ներկայ ու ապագայն երջանկութեանդ համար ամեն զոհողութիւն յանձն կ'առնեն: Ուրեմն ունիս պարտք ու ծնողը: Այսինքն պարտաւոր ես անոնց հնազանդիլ, անոնց խրատները մտիկ ընել և ջանալ բարի, պարկեշտ և բարեկիրթ մարդ մ'ըլլալ:

Եթէ աշխարհիս մէջ միս մինակ՝ անտառներու մէջ ապրէիր, տղաս, բնաւ պարտիք չպիտի ունենայիր, վայրենի կեանք մը վարելով, քու բոլոր պիտոյքդ, այս է կերակուրդ, հագուստդ, բնակարանդ դու ձեռքովդ պիտի ճարէիր: Եւ ի՞նչ թշուառ կեանք պիտի ըլլար վարած կեանքդ: Անդադար վայրի կենդանիներու դէմ պիտի կռուէիր, քարայրներու մէջ պիտի բնակէիր, վայրի պտուղներ պիտի ուտէիր, մինչդեռ հիմակ կանոնաւոր քաղաքի մը մէջ կ'ապրիս, ուր մաքուր ճամբաներ, կամուրջներ, երկաթուղիներ կան, ուր ամեն պիտոյքդ դիւրաւ ձեռք կրնաս ձգել, ինչու որ ուրիշ մարդիկ քեզ համար կը պատրաստեն այդ բաներն և մեր կեանքը, պատիւը և ստացուածքը կը պաշտպանեն: Ուրեմն մեր նմաններէն շատ ծառայութիւններ կ'ընդունինք, հետևապէս ահա մարդկային պարտք ունինք և մենք կատարելու:

Այս ամեն պարտիքն առ Աստուած, առ ծնողս՝, առ նմանս կարելի է դիւրաւ կատարել եթէ միայն վարժինք բարի, փաղփաքար, ազնիւ և աշխատասէր ըլլալ և ահեղ յարգանք և սէրով վարուիլ:

ԱՇԼԱՏԵՍԱԿ ԱՌՀԱՐԱՆՔՆԵՐ

Դան առարկաներ որ բնական կամ արհեստական պատհարան կամ ժամացոյց ունին, բայց առարկային նայելով պատհարաններուն անունը կը փոխուի։ Օրինակի համար կ՚ըսեն թ՝ ընկայդին, հա կիմիին նուշին էտոնը, ձաւկին թեթը, կրիային խեցին, նարնջին, կիտրանին, հացին կեղեւը, իշաւն հոտը, ոսկին էնճեկը, անկայնին ձառնոցը, գրքին կոտէը կամ խփանէը, բարձին երէսը, ակնոցին քոռէը, օձին խուլը, նամակին էռնիրը, ձիաւն ձառնոցը։ Երեսի տօզը, գլխու ապրօշը։

ԿԵՆԴԱՆԻՆԵՐՈՒՆ ԼԵԶՈՒՆ

Կենդանիները ձայներ կը հանեն որպէս զի իրենց ուրախութիւնը կամ ցաւը յայտնեն։ Անասունոց ամէն է իրենց խօսելու եղանակը, վասն զի իրենց ազազակին ու երգին այնպիսի հնչիւն մը կուտան՝ որ կ՚երեւի իրենց զգացածին յայտատարը նշանն ըլլալ։ Ինչ չուն մը կը հնծեծէ ու կ՚արտնջայ, իսկոյն կը հասկնանք որ ցաւ մը կ՚զգայ ու կուլայ։

Անասուններն այլ եւ այլ ազազակներ կը հանեն, որ տարբեր տեսակներ ունին։ Ինչպէս չուները կը հաչէ, ջաղը կը կռնչէ, դայլը կ՚ոռնայ, էշը կը գոռայ, ձին կը ճրնչէ, ոչխարը կը հոլէ, կովը կը բառաչէ, փիղը կը էլէ, խոզը կը խռնչէ, արջը կը տռռայ, աղուեսը կը հռնչէ, եղջերուն կը փսէ, եղնորդը կը խորդայ, աղուէսն ու ձագարը կը ջղանչէ, վագրը կը խռնչէ, կատուն կը ճլռտէ, կոկորդիլոսը կ՚ուլիսէ, գորտը կը կռնչէ, ագռաւը կը փռգռայ, աբրագիլը կը խռկէ, արծիւը կը կռռայ, ագռաւը, ճգռաւը կ՚երգեն, սիրամարգը կը ճչէ, հաւն ու աւնձեղը կը խուխուչեն, վառեակը կը ճչէ, հնդկահաւը կը ջղանչէ, սագը կը ռնչէ, օձը, կիռ-

Վեր՝ ու սարեկիրկը ու ---ՔՆ, լորը կը կոչկոչէ, աղաւնին կը ճկէ, սատրակը կը քոռքոռայ, թուխմակը կը խօսի, արտոյտը կը թեղթէ, ճնճղուկը կը ճռուռնի, բուն կ՚ադաղակէ, սոխակը կը դայլայլէ, ճանճը, մեղուն եւ եղնակը կը բզզան։ մարդը միայն իր միտքը կը բացատրէ խօսելով, վասն զի այն զիտէ իր հանած ձայներուն իմաստ մը տալ։

ԽՈՒՄԲ

Մինչեւ չատ մը անասուններու՝ նոյնպէս եւ մեկ քանի անկենդան բաներու խումբեր՝ զատ զատ անուններ ունին։ Օրինակի համար անասուններու խումբին կ՚ըսենք ջուն, ոչխարներու հօտ, եղերու անդէս, խոզերու երամակ, այծերու հօրան, գայլերու ու շուներու ֆոնտակ, ձուկերու վարա, թռչուններու երամ կամ դար, աղաւներու ջուլէր, կառներու դարմ, ասաղերու հոյլ, ծաղիկներու բոյլ, խոտերու դէզ, ցորենի օրան, ջուրի շեղ։

ԲԱՂԴԱՏՈՒԹԻՒՆ

Երբոր բան մը կը քննենք հասկնալու համար թէ արդեօք ուրիշ բանի՞ մը կը նմանի թէ ոչ, Բաղդատութիւն ըրած կ՚ըլլանք։

Բաղդատելով կ՚ըսենք, սիրամարդի պէս գեղեցիկ, արեւուն պէս գայլոն, բանճարի պէս կարճ, դեղի պէս դառն, զառնուկի պէս անմեղ, ժայռի պէս կարծր, կապարի պէս ծանր, փետուրի պէս սև, Յոր նահապետին պէս աղէտաւոր, մարմարի պէս պաղ, փղին պէս ոխակալ, շան պէս հաւատարիմ, թռչունի պէս ազատ, ջորիի պէս յամառ, հովի պէս ընթացիկ։

ՀԻՆԳ ԶԳԱՑԱՐԱՆՔ

Որչափ մատ՝ նոյնչափ զգայարանք ունինք, համարենք. Ա. ըշելիք, Բ. տեսանելիք, Գ. լսելիք, Դ. հոտոտելիք, Ե. ճաշակելիք։ Ուստի հինգ զգայարանք ունինք։

Աչքով կը տեսնենք, լեզուով ու քիմքով կը ճաշակենք, մատով կը շօշափենք, ականջով կը լսենք, քիթով հոտ կ՚առնենք։ Իսկ գլխուն կ՚անուանենք ինչ ախորժելի կամ անախորժ բան որ զգանք։

Թռչունները սուր աչք ունին. նապաստակը նուրբ լսելիք ունի. շան հոտառելիքը շատ զգայուն է. կոյրերը փափուկ շօշափելիք ունին, և փափկակերներն՝ որ ընտիր սնունդ կը սիրեն, շատ լաւ ճաշակելիք ունին։

Մեր զգայարանքի գործարաններն ի բնէ լաւ վիճակի մէջ են, բայց պէտք է չափով գործածել զանոնք, ապա թէ ոչ կը վնասուին, կը տկարանան։ Ամէն մէկն իր պաշտօնն ունի. անոնց միջոցաւ կ՚որոշենք շատ բաներ։

Քիմիը անուշահոտ իրեր հոտուբուրելու համար չէ միայն, այլ զանազան նիւթերու և կերակուրի հոտաւէտ յատկութիւնները հասկնալու համար է։ Լեզուն ու քիմքը մեր սխալներուն դրդռելու համար չեն, այլ զայն գոհ ընելու։ Բնութիւնը մեզի ձեռք տուած է, չէ թէ մարդիկն ու կենդանիներն ծեծելու, այլ աշխատելու համար։ Պէտք չէ որ ականջները սնոտի ու անիմաստ բաներ լսեն, բանաստեղծութեան և սուտութեան ձայնը մտիկ ընեն, այլ միշտ ընտիր և օգտակար ձայներ ընդունին։

ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆ ՍԷՐԸ

Ճշմարտութիւնը մեր առաջին պարտականութիւնն և մեր առաջին պիտոյքն է։ Ուստի ստութիւն, որ այս պարտքը կը բռնաբարէ և այդ պիտոյքը կը մատնէ, ամենուն աչքին առջև թէ ամօթալի և թէ աղիտաբեր պակասութիւն մ'է։ Սատիրոս մ'և սատիրուհի մ'ամեն մարդու առելի և զզուելի են։ Ամեն մարդ անոնցմէ կը խոյանի, վասն զի անոնց ընկերութիւնը կրնայ վնաս և անպատուութիւն բերել։

— Իմ սիրելի զաւակս, կ'ըսէր մայրը մ'իր որդւոյն, չկայ ճշմարտութենէ աւելի մեծ բան մը, չկայ բան մ'որ այնքան մեր ակնածութեան ու համբաւին աւելի արժանի լինի։ Բաւական է ճշմարիտը խօսիլ և ամեն մարդ անոր ուժն ու մեծութիւնը կ'զգայ։ Ճշմարտութեան սէրն, անկեղծութիւնը մանկանց հոգւոյն ամենէ գեղեցիկ և ամենէ սիրալիր զարդերն են։ Իվ որ այդ յատկութիւնն ունենայ ուրիշ շատ պակասութիւններու ներում կը

գտնէ։ Զկայ յանցանք մ՚որ մառամբ չթեթեւնայ եթէ յանցաւորը անկեղծօրէն խոստովանի զայն։

Մարդ մը կրնայ շատ խելացի, շատ գիտուն ըլլալ, բայց եթէ ճշմարտութեան հակառակ գործէ, եթէ խաբելու, ուրիշին չարիք հասցնելու աշխատի, ամենէ վատ և ամենէ վտանգաւոր մարդը կրնայ համարուիլ, և իվերջէ՝ իր ստախօսութիւնը միայն իր դժբաղդութեան պատճառ կ՚ըլլայ։

ԳԻՏՈՂՈՒԹԻՒՆ

Տէրվիշ մը միայնակ կը ճամբորդէր անապատի մը մէջ, երբ յանկարծ երկու վաճառականներ իր առջև կ՚ելնեն։

— Կարծեմ թէ ուզտ մը կորուսած է՛ք, ըսաւ նա այդ վաճառականներուն։

— Այո՛, կորուսինք, պատասխան տուին։

— Մի՞թէ աջ աչքը կոյր չէ՞ր և ձախ ոտքը կաղ, ըսաւ Տէրվիշը։

— Այո՛, ըսին վաճառականները։

— Եւ մի՞թէ մէկ կողմէն մեղրով և միւս կողմէն աղիւրով բեռնաւորուած չէ՞ր։

— Ճիշդ այդպէս, պատասխան տուին վաճառականները, և քանի որ այդպէս մնաէն տեսած և յստակապէս գիտած ես այդ ուզտն, կարող ես ուրեմն անոր տեղը մեզ ցոյց տալ։

— Բարեկամներ, ըսաւ տէրվիշն, ես բնաւ չտեսայ ձեր ուզտն և ոչ իսկ անոր վրայ տեղեկութիւն մ՚առի եթէ ոչ ձեր բերնէն։

— Ձշմարիտն՝ ապուր առասպել մը, ըսին վաճառականները, Ջրայց ո՞ւր են այն գոհարներն որ բեռին մի մասը կ՚կազմէին։

— Ես ոչ ձեր գոհարներն և ոչ ձեր ուղտը տեսած եմ, կրկնեց տէրվիշը։

Այս խօսքին վրայ՝ վաճառականները բռնեցին տէրվիշն և իսկոյն գատաւորին առջև տարին։ Բայց իրեն վրան գլուխը փնտռելէ ետև, բան մը չգտան, և ոչ վկայ մը, փաստ մ՚ունէին տէրվիշին ստութիւնը կամ գողութիւնն երևան հանելու համար։

Եւ քիչ մնաց զինք իբրև վհուկ պիտի հալածէին, երբ տէրվիշն հանդարտ ու անվրդով այսպէս խօսեցաւ ատեանին առջև.

— Ձշմարիտը՝ ձեր գարմանքը բաւական դուարճացուց զիս, և կը խոստովանիմ որ քիչ շատ իրաւունք ունէիք իմ վրայ կասկածելու։ Բայց պիտի բացատրեմ այս գաղտնիքը։ Ես շատ երկար ժամանակ մինակուկ ապրած և գիտցուցեան ընդարձակ առպարէզ մը գըտած եմ՝ մինչև իսկ այս անապատին մէջ։ Ի՞նչպէս իմացայ որ մոլորած ուղտ մ՚անցած է իմ քալած ճամբէս, վասնզ՚ ոչ ոչ որ նոյն ճամբուն մէջ մարդկային քայլափոխի մը հետքը չկար։ Հասկցայ որ կենդանին միականի էր, վասնզի միայն ճամբուն մի կողմի խոտերը կերեր էր, և թէ մէկ ոտքը կաղ էր. վասնզի այդ ոտքով թեթև մը կոխած էր աւազին վրայ։ Իսկ բեռին գալով՝ ժիր մրջիւններ ցոյց տուին ինձ որ մէկ կողման բեռը ցորեն էր, և ճանճերու երամն ցոյց տուին որ միւս կողման բեռը մեղր էր։

ԾԱՆՐՈՒԹԵԱՆ ԿԵԴՐՈՆ

Գ. — Ինչո՞ւ համար, ըսէ նայիմ դու Մարկոս, երբ մի ձեռքդդ ծանր բեռ մ'ունենաս կը ծռիս։

Մ. — Վասն զի եթէ չծռիմ վար կ'իյնամ։

Գ. — Պատճա՞ռ։

Մ. — Զգիտեմ։

Գ. — Մտիկ դրէ բացատրեմ։ Ամէն հաստատուն մարմին նշանաւոր կէտ մ'ունի որ ԾԱՆՐՈՒԹԵԱՆ ԿԵԴՐՈՆը կը կոչուի։ Ցորչափ այդ կէտը մարմնոյն ծանրութեան հաւասար զօրութեամբ մը չպահուի, հաւասարակշռութիւնը կը կորուսէ եւ վար կ'իյնայ։ Տեսէք սա գրաւէմը, կարող եմ չիտակ հաւասարակշիռ կենցնել մատիս վրայ, ճիշտ մատս մէջտեղը դնելով, այնպէս որ հաւասար ծանրութիւն մը բոլորտիքը տարածուի։ Այսպէս բռնուած գրաւէմը վար չիյնար, իսկ եթէ մատս ուրիշ կէտի մը վրայ դնեմ գրաւէմը չկրնար չիտակ կենալ։ Այդ կէտը գրաւէմին ԾԱՆՐՈՒԹԵԱՆ ԿԵԴՐՈՆՆ է։

Մարդու մը ծանրութեան կեդրոնն իր երկու գիտերուն միջեւն է։ Եթէ կոնակին վրայ բեռ մը կրէ, պէտք է որ ընդառաջ հակի, եթէ իր բազուկներուն վրայ կրէ, պէտք է որ յետկոյս հակի։ Այդ շարժումն անգէտս կ'ընէ։ Որքան կոնակի վրայ տարուած ծրարներն թանձր են, ինչ որ լինի ծանրութիւնն, նոյնքան պէտք է դէպ յառաջ ծռիլ որպէս զի արուեստն հաստատուն մնան։ Զիաւոր մարդ մ'աւելի հաստատ կայք ունի երբ հաստ ու խոշոր կօշիկներ հագած է։ Այդ բանը քաջ գիտեն կառապաններն եւ իրենց ահագին կօշիկները կ'արդիլեն որ վար չիյնան, մինչեւ անգամ երբ իրենց գլուխը գինիով ծանրացած է։

Անվտանգ կարելի է քալել գերանի մը վրայ թեւերը մերթ աջ եւ մերթ ձախ կողմը տարածելով։ Լարախաղացները՝ կըշռորդ մը կը բռնեն զոր այս կամ այն կողմը կը տանին, 'այն կամ այս կողմն կը հակին։

Իտալիա՝ Բիզա քաղաքին աչտարակը չատ գեղեցիկ է, բայց չիտակ չէ, այլ վայրահակ, եւ սակայն վաղուց չինուած է եւ վար չգլորիր։ Իր ծանրութեան կեդրոնին ուղղահայեաց գիծը ճիչտ խարիսխին ներքին կողմը կ՚իյնայ։ Եթէ գործաւորն աւելի բարձր կամ ծռած չինէր, այդ գիծը խարիսխէն դուրս պիտի մնար, եւ աչտարակն այդ վիճակին մէջ պիտի կենար միայն չազախին դիմադրութեան բերմամբ, ուրիչ ոյժ մը գոր պէտք է ի հաչիւ առնուլ։

ԿԱՂՆԻՆ ՈՒ ԾԱՌԱՏՈՒՆԿԸ

Օր մը՝ խելացի ու խոհեմ դաստիարակ մը կ՚ըսէր իր աչակերտին. «Զարե՛հ, կը տեսնե՞ս սա ծառատունկն որ հովէն գետինը ծռեր է. խնդրեմ գնա՝ անոր բունը ուղղէ։» Զարեհ որ իր ոյժը ցոյց տալ կ՚ուզէր, ուրախ զուարթ ծառատունկին քովը վազեց և անոր բունն ուղղեց։ «Դատ աղէկ, ըսաւ դաստիարակը, բայց հիմա սա հին կաղնին ալ տես որ նոյնպէս ծռած է, միթէ չե՞ս ուզեր այդ խոչոր ծառն ալ բարակ ծառին պէս ուղղել։» Զարեհ իր աչքը վարժապետին դարձուց ու ըսաւ. «Միթէ կատա՞կ կ՚ընէք. խե՞նդ եմ որ այդպիսի բան մը փորձեմ։» — «Կ՚իմանամ միտքդ, պատասխանեց դաստիարակը. անչուչտ կը կարծես որ այդ բանն ուժէդ վեր է։ Բայց երբ այդ կոճղը բարակ տունկ մ՚էր կը կարծէի՞ր թէ չատ մեծ ճիգ պէտք էր զայն ուղղելու համար։» — «Չեմ կարծեր, պատասխանեց Զարեհ, վասն զի այն ատեն աւելի դիւրին պիտի ըլլար հրամանդ կատարել։» — «Լաւ ուրեմն, սիրելի տղաս, նոյն բանը կրնանք ընել մեր պակասութեանց համար. մեր մանկութեան ժամա-

նակ դիւրին է ուղղել մեր թերութիւնները. իսկ երբոր մեծնանք, անոնք կ'արմատանան և՝ ծուռ կացնիին պէս՝ շակերը շատ անդամ անկարելի կ'ըլլայ։ Հիմակ կը հասկնա՞ս, Զարեհ, թէ ինչո՛ւ համար պէտք է մանկութեան ժամանակ լաւ բնութիւն և բարք ու վարք ունենալու ջանալ։»

ԱՅՈՒԵՍՏ ՈՒ ՊԱՇՏՕՆ

Սովորաբար փոքրաւոր կամ բանւոր կ'ըսուին այն մարդիկ՝ որ գործով կ'զբաղին և օրապէտք կ'առնեն, վաճառականն ապրանք կը գնէ ու կը ծախէ, հողագործը երկիրը կը մշակէ, հոգաբարձը հաց կը շինէ, բժիշկը զանազան հիւանդութիւններ կը բուժէ, ինքնաբոյժը աչքի ցաւ կը բուժէ, վիրաբոյժը վէրքեր կը դարմանէ, կօշկակարը մուճակ և կօշիկ կը շինէ, հիւսանը սեղաններ ու աթոռներ կը շինէ, ինքնագործը գոհարներու առուտուր կ'ընէ, ոսկերչին արծաթեղէն ու ոսկեղէն անօթներ կը շինէ, գինեպանն ոգելից ըմպելիներ կը վաճառէ, խողխորդը կաշի կը շինէ, դերձակը

հագուստներ կը ձևէ ու կը կարէ, դարբինն երկաթեղէն գործիներ կը դարբնէ, որմնադրիը տան պատերը կը շինէ, պոյտարը ձիուն և իշուն պայտերը կը դամէ, գրաքանչիը գիրք կը ծախէ, գրագիրը գիրք կը շարադրէ, մանկավարժը տղայքը կը կրթէ, նաւաստիը գիրքեր կը կազմէ, անդեորդը կովերը կ'արածէ,

Բրոդը կաւէ ամաններ կը շինէ, աղջիկը ցորեն կ'աղայ, յինուրն ուռկանով ձուկ կը բռնէ, հայրերը օրայ կը քշէ, կոտորածը կառք կը վարէ, լոմայոֆոխը սատակ կը փոխէ, յեռոֆէրը այլ և այլ կտաւներ կը տարաղէ, աղբերը հաւառօտ կը գրէ, ինչբոֆէրը լրագիր կը հրատարակէ։

ԲԱՐԻ ԳԻՇԵՐ ԵՒ ԲԱՐԻ ԼՈՅՍ

Աղջիկ մը սիրուն ծառին տակ նստեր՝
Աղուորիկ կ'երգեր ու կար կը կարէր։
Երբ մութը կոխեց իր կարը ծալեց,
Եւ ըսաւ. «Իմ կար, քեզ բարի գիշեր։»

Գիսուն վրայեն՝ յանկարծ որիներ,
Պօռալով «կրռ կրռ» երթային թառեր.

Ըսաւ դիտելով անոնց այս բոիչ,
«Սեւուկ թոչնիկներ, ձեզ բարի գիշեր:»

Երբ ձին վրնջեր, գոչեին կովեր,
Մայելով յառաջ գային ոչխարներ,
Հանդարտ ու զուարթ կարծես կրսեին,
«Սիրուն փոքր աղջիկ, քեզ բարի գիշեր:»

Զրսաւ արեւուն, «քեզ բարի գիշեր:»
Թէեւ տեսաւ զայն, ճիշդ վատ մի գունդ էր,
Վասն զի գիտէր որ Աստուծոյ ժամն
Աշխարհի վրայ պիտի ցուցրներ:

Ուռեց իր գլուխ անուշիկ յասմիկ
Նիջեց գեսիներ հեզ մանուշակիկ,
Իսկ սիրուն Լուսիկ հիւսեց իր մազեր,
Եւ ծուռ դնելով՝ ասաց աղօթքներ:

Եւ երբ իր գլուխն էր վրայ սնարին,
Քնանար մինչ շոյս նման հրեշտակին.
Բոլոր բնութիւն սիրուն արեւուն
«Մեր գործն սկսանք, բարի շոյս» ըսին:

ՋՈՒՐ

Յովհաննէս բան սրտիկ կ'ուզէ։ Ուստի ամեն իրիկուն՝ պառկելէն առաջ, իր Աւագ հաւուն հետ կը խօսակցի։

«Յովհաննէս, գիտե՞ս արդեօք թէ ուսկից կուգայ ՀԻՆԵՐՈՒՆ եւ ԾՈՎԵՐՈՒՆ ՋՈՒՐԸ» կը հարցնէ Աւագ։

— Այո՛, գիտեմ, հայրի՛կ, ԷԼԵՒԷՆ կուգայ ՋՈՒՐԸ։

— Հապա գետերուն ՋՈՒՐԸ ուսկի՞ց կուգայ։

— ԳԵՏԱԿՆԷՐԷՆ։

— Հապա գետակներուն ՋՈ՞ՒՐԸ։

— ԱՒՈՒՆԷՐԷՆ։

— Հապա աւուններուն ՋՈ՞ՒՐԸ։

— ԱԿՈՒՆԷ կը բխի։

— Հապա ակունքի ՋՈ՞ՒՐԸ։

— Ա՛հ, այդ չգիտեմ։

— Ձե՞ս գիտեր, բսիր։ բայց գիտես որ հողը կը ծծէ անձրեւի ՋՈՒՐԸ . . . ։

— Իրաւ է, ՋՈՒՐԸ ստորերկրեայ փոսերուն մէջ կը դիզուի, այսինքն խոշոր ծակերու մէջ, եւ ընդարձակ ՍՈՒՌԱՆՔԷՐ կը ձեւանան։

— Շատ լաւ, հապա երբ ՋՈՒՐԸ գետնէն կ'ելնէ ի՞նչ է։

— Աղբիւր կամ ԱԿՈՒՆ։

— Ահա՛ գտար։ Երբոր ՋՐՇԷՂՔ բաց է, այն տեղն ՀՈՒՍ մ'է։ ՋՐՇԷՂԻՆ մնայուն ՋՈՒՐԸ տղմուտ ու մօրուտ է։ իսկ ակունքի ՋՈՒՐԸ սովորաբար յատակ է։ Երբոր պղտոր է՝ չխմուիր եւ գէշ համ ու նողկալի հոտ կ'ունենայ։ Ուստի պէտք է գտնել։ Հիմա, Յովհաննէ՛ս, կրնա՞ս ինձ ըսել թէ ուսկի՞ց կուգայ անձրեւի ՋՈՒՐԸ։

— Անշուշտ, հա՛յրիկ, երկինքին ամպերէն կը վազէ։

— Այդ ճշմարիտ է, բայց ի՞նչպէս կը շինուին։

— Կարծեմ թէ այդ գժուարին է բացատրելը . . . ։

— Ընդհակառակն, շատ դիւրին է, տղաս։ Ծովու ու գետի

ջրերէն կը չինուին ամպերը։ Երբոր օդը տաք է, ջուրը վեր կ'ելնէ ջրէն պէս։ Շոգիները ջուրի մանր կայլիներ են որ կը թռին, տամուկ մասյլ, մշուշ է։

— Հա՛, հիմա իմացայ, հա՛յրիկ։ Երբոր մայրս թրջած լաթեր արեւուն կը փռէ, կամ երբոր ոանին ջուրը կրակին վրայ է, թեթեւ մուխ մը կելնէ։ կարծեմ այդ մուխն է շոգին։ Ծանր ծանր օդին մէջ կը բարձրանայ շոգին եւ ամպեր կը շինէ։ ամպերը կը խոշորնան, կը խտանան եւ ծանրանալով անձրեւի պէս վար կը վազեն։

— Այդպէս է, Յովհաննէս։ Բնագէտները գործիք մ'ունին որով կը գտնեն թէ ո՛րչափ անձրեւ վազած է։ այս գործիքն անչրեալաչափ է։ ուրիշ գործիք մ'ալ կայ որ օդալափ կ'ըսուի եւ ցոյց կուտայ թէ անձրեւ պիտի գա՞յ թէ ոչ։

— Այո՛, այո՛, գիտեմ, քեռիս հատ մ'ունի տունը։ Ուրիշ աւելի պզտիկ գործի մ'ալ ունի, որ պատուհանին մէջ կախած է։ ի՞նչ բան է այն։

— Ջերմալափ մ'է, տղա՛ս։ Օդաչափէն տարբեր գործի մ'է եւ ուրիշ բանի համար կը գործածուի։ Օրուան մէջ ինչ աստիճան տաք կ'ընէ՝ անով կ'իմանանք։ Դորիչելլի անուն գիտունը հնարեց այս գործին։ . . . Բայց, տղա՛ս, կը նայիմ որ աչքերդ կը գոցուին, քունդ եկեր է։ Վաղը կը շարունակենք մեր այս խօսակցութիւնը։ Հիմա գնա քնացի՛ր։»

Յովհաննէս իր հաւուն ձեռքը կը պագնէ, աղօթքը կ'ընէ, անկողին կը մտնէ եւ մուշ մուշ կը քնանայ։ Հանգիստ է ու երջանիկ, ինչու որ անմեղ տղայք միշտ երջանիկ են ու անուշ քուն կ'ունենան։

ՊԶՏԻԿ ԱՄՏԱՆԱԲԱՇԽԸ

Հորս կողմն անցած բաները մտագիր գիտելով՝ մարդիկ շատ բաներ կը սորվին։ Շատ բաներ միշտ տեսնելով մեզի սովորական կ'երևին և հետաքրքրութիւն չեն շարժեր։ բայց եթէ անոնց ի՛նչ ըլլալը բացատրել ուզենք՝ կը տեսնենք որ ադէտ են։ Մարդ մը չկրնար իրեն ամեն պէտք եղած գիտելիքը դպրոցէն և գիրքերուն մէջէն սորվիլ։ պարտաւոր է որ ինքն ալ իր աչօքը քննէ, բաղդատէ, դատէ և իրերու տեսակներն ու մարդիկը ճանչէ։ Այսպէս գիտելով՝ շատ մարդիկ խելացի եղած և շատ ճշմարիտ ու օգտակար բաներ գտած են։ Օրինակներ պակաս չեն։

Պետրոս անուն տղայ մը կար։ չորս տարեկան էր։ Շատ անգամ ախոռի մը վրայ կ'ելնէր և վարդապետի պէս քարոզ կուտար։ իր եղբայրներն ու քոյրերը մտիկ կ'ընէին և երբեմն կը խնդային։ Երբ Պետրոս քիչ մը տարիքն առաւ՝ միտքն ուրիշ բանի դարձուց։ Շատ կ'ախորժէր ցերեկը լեռները, դաշտերն ու արևը դիտել, իսկ գիշերը՝ լուսինն ու աստղերը։ Այս փափաքն օրէ օր աւելցաւ։ Եօթը տարու էր միայն երբ շատ անգամ՝ անկողնէն դուրս կը ցատկէր և պատուհանն երթալով՝ կը նայէր երկինքը, լուսինն ու մոլորակներն որ կը դառնային։

Իրիկուն մը պարտէզը կը պտտէր իրեն տարեկից մէկ քանի տղոց ու աղջիկներու հետ։ Երկնից երեսը կը փայլէր լուսնոտինն և հովին թեթև ամպեր կը շարժէին։

Նոյն միջոցին տղայք սկսան վիճաբանիլ թէ արդեօք լուսինը կը շարժի թէ ոչ ամպերը։ Ամենքն ըսին. «Անշուշտ ամպերն անշարժ են և լուսինը միայն կը քալէ։» Բայց Պետրոս այս կարծիքը չունէր։ Նա ըսաւ որ լուսնի շարժումը որոշ չերևիր, հապա՝ ամպերն են որ շուտ շուտ կ՚անցնին։ Ընկերներն ասոր չհաւատացին։ Այն ատեն Պետրոս գանոնք համոզելու համար հնար մը մտածեց։ Մեծ ծառի մը տակ կանչեց գանոնք և ըսաւ որ ճիւղերուն մէջէն լուսնին նային։ Յիրաւի տղայք տեսան որ լուսինն անշարժ կ՚երևէր նոյն տերևներուն ու ոստերուն մէջ տեղը, մինչդեռ ամպերը կը սահէին կ՚անցնէին։ Այն ատեն ամենքը ստիպուեցան ըսելու որ Պետրոս իրաւունք ունի։ Այս էր Պետրոս Գասանդի, որ մեծնալով երևելի աստղաբաշխ մ՚եղաւ։

ՋԵՐՄԱՉԱՓ

Յովհաննէս առջի օրուան խօսակցութիւնը չէր մոռցեր. ուստի իր հարցումն ըսաւ։

«Հայրիկ, պիտի բացատրե՞ս թէ ի՞նչ է ջերմաչափը։

— Հապա՛, որդեակ. ուրախ եմ որ հետաքրքիր ես օգտակար բաներ սորվելու։ Ինչպէս որ ըսի, ջերմաչափը պզտիկ տախտակի մը մէջ դրուած բարակ ապակիէ խողովակ մ'է, որ օդին ջերմութիւնը կամ ասոր աստիճանը կը չափէ։ Այդ խողովակին մէջ մոխրի գոյն հեղուկ մը կայ։ Երբ ցուրտ ըլլայ, հեղուկը կ'իջնէ, երբ օդը տաքնայ, հեղուկը վեր կ'ելնէ. այնպէս չէ՞. փորձէ՛։

— Բայց հեղուկն ի՞նչ է։

— Մեղիկ է, տղաս։

Հիմակ դիր խողովակը հալած ձիւնի մէջ, հեղուկը մինչեւ կէտ մը կ'իջնէ, որուն վրայ 0° կը դրուի. ապա՝ եռացեալ ջրի մէջ դիր խողովակը, կը տեսնես որ ապակիին հեղուկը վեր կ'ելնէ մինչեւ կէտ մը որու վրայ 100 կը գրուի։ Վերջը գրօրին ու 100ին մէջ գտնուած միջոցը հարիւր հաւասար մասի կ'բաժնեն։ Այս մասերը կ'ցուցնեն ջերմութեան աստիճանները։ Կարելի է գրօէն վար եւ 100էն վեր ալ մանր բաժանումներ ընել։ Ուստի ջերմութիւնը հարիւր աստիճան ունի, հալող ձիւնէն մինչեւ եռացող ջուրը։ Այս ջերմաչափը կ'ըսուի Հ-ՐԷ-ՐԷՆԷ։ Բնագէտ մը կար որ աստիճաններն 80ի կը բաժնէր եւ իւր անունով այդ գործին Ռէ-Օ-ր կ'կոչուի։ Ուստի չատ անգամ ջերմաչափին մէկ սիւնակը 100 աստիճան կը բաժնեն, միւս սիւնակը 80 աստիճան։ Տարբերութիւնն կէն 5

է։ Ա. յսինքն՝ Բէօմիւրի 24 ասոլիճանը՝ Հարիւրեանի Ջերմաչափին 30 ասոլիճանին հաւասար է. իմացա՞ր տղան։

— Այո՛, հա՛յրիկ։

— Անգլիացիք, Ամերիկացիք եւ՝ Ռուսք ուրիշ Ջերմաչափ մը կը գործածեն որ կ՚ըսուի Ֆարէնհայթ։

ՀԱՆԵՐԻ Դ. ԵՒ ԳԻՒՂԱՑԻՆ

Ֆրանսայի՛ թագաւոր՝ Հանրի՛ Դ. որ շատ ազնուամիտ եւ ժողովրդասէր իշխան մ՚էր, օր մը մի քանի մանկլաւիկներով որսի կ՚ելնէ, եւ ասդիս անդին արշաւելով իր մարդիկներէն կը հեռանայ եւ անտառի մը մէջ կը մոլորի։ Անհնար կը լինի իրեն ելք մը գտնել եւ իր հետեւորդներուն միանալ, եւ մնայոյզ չորս գին կը նայի, երբ այն պահուն գիւղացի մը կը տեսնէ եւ կը հարցնէ թէ ո՞րն է ատենէ կարճ ճամբան որսորդներուն ժամադրավայրը գնալու համար։ Գիւղացին կ՚առաջարկէ զանի որոշեալ տեղն առաջնորդելու։ Թագաւորն աւելի շուտ հասնելու համար գիւղացին իր ձիուն գաւակին վրայ կը նստեցնէ, ճամբան կը հարցնէ անոր թէ արդեօք տեսա՞ծ է երբէք թագաւորը։

— Ո՛չ երբէ՛ք, կը պատասխանէ գիւղացին, բայց կը փափաքէի տեսնել զանի, վասն դի կ՚ըսեն թէ շատ բարի մարդ մ՚է։ Այդ, յարեց, ի՞նչպէս կարելի պիտի ըլլայ զանի ճանչել իր հետ գտնուած բազմաթիւ պալատականներուն մէջ։

— Այդ շատ դիւրին է, ըսաւ Հանրի։ Բոլոր իշխաններն իրենց ձեռքը բռնած պիտի ունենան գլխարկներն,

թագաւորը միայն իր գլխարկը գլխուն վրայ դրած պիտի ըլլայ։

Ի վերջէ՝ կը հանին այն վայրն ուր բոլոր որսորդները հաւաքուած էին։

— Լաւ ուրեմն, այս ամեն պարոններուն մէջ չէ՞ք տեսներ թագաւորն, հարցուց Հանրի։

— Իրաւ որ, պարոն, պատասխանեց գիւղացին, կամ դու և կամ ես եմ թագաւորն, վասն զի միայն մենք մեր գլխարկները չենք հանած։

Վերջապէս գիւղացին դուշակեց թէ ո՛վ է թագաւորն, մանաւանդ երբ Հանրի անոր ափին մէջ մի քանի ոսկի դրաւ։



ԵՐԿԻՐԸ ԿԸՇԴԱՌՆԱՑ

Քանի մը աշակերտ ժամին բակը կը խաղային։ Յանկարծ իրենց մէջ վէճ մը ծագեցաւ։ Յովհաննէս կ՚ըսէր որ երկիրը կլոր է. Պետրոս՝ որուն ձեռքը չոնչան մը կար, կ՚ըսէր թէ երկիրը տափակ է։ Նոյն միջոցին Գալուստ վարժապետը ժամէն կ՚անցնէր. Պետրոս անոր մօտեցաւ ու քաղաքավարութեամբ հարցուց.

«Վարժապե՛տ, ի՞նչ ձեւ ունի երկիրը. Յովհաննէս կ՚ըսէ թէ կլոր է։

— Յովհաննէս իրաւունք ունի, բսաւ Գալուստ վարժապետը։ Արի՛ քեզի երկիրը նկարագրեմ, աչքերդ բաց դաս մը տամ։ Իրաւ, երկիրը գրեթէ կլոր է, բայց չէ թէ պանրի կամ սկաւառակի մը պէս տափակ ու կլոր, ինչպէս կը կարծէին մեր հայրերը, այլ գնտակի պէս բոլորակ։ Փորձը կ՚ուզե՞ս։ Շատեր Մակելլանի պէս, երկրիս չրջանը ըրին։ Եթէ Պոլիսէն ելնենք, ժամացոյցին սլաքին պէս դառնալով, կրնանք նոյն տեղը դալ։ Ուրիշ ապացոյց մ՚ալ տամ։ Երբոր ծովեղերը կենաս, նախ հեռուէն եկող նաւուն կայմերուն ծայրերը կը տեսնես, եւ քանի նաւը մօտենայ անոր միւս մասերն ալ հազիւեւ կ՚երեւին։ Տուր ինձ գնդակդ, Յովհաննէս, նաւակ մը չինէ, վարդի թերթիկ մը գնդասեղ մը անցուր եւ առագաստի մը պէս թղթէ նաւակին մէջ դիր, հիմա գնդակին վրայ սահեցո՛ւր նաւակը, կը տեսնե՞ս, քանի կը հեռանայ՝ նաւակին գոգն ամենէն առաջ անհետացած կը լինի, յետոյ կամուրջը, վերջը կայմը։ Ինչէ՞նէ։ միթէ պատճառը գնդակիդ կլորութիւնը չէ՞։ Նոյնպէս է եւ երկիրը, որ եթէ տափակ ըլլար, ամբողջ նաւակը պիտի տեսնէինք՝ որչափ որ մեր աչքը զօրէր։

Պետրոս։— Բայց լսած եմ որ ամենէն յանդուգն ճամբորդը չէ կրցած Երկրիս երկու ծայրերէն անցնելու։

Պ. Գալուստ։— Իրաւ է։ այն կողմերը սառոյց շատ կայ, վասն զի արեւը վեց ամիսը անդամ մը կ՚երեւի։ ընդհակառակն՝ տաքը գրեթէ անտանելի է արեւադարձներուն տակ, հասարակածին ամեն կողմն, այսինքն՝ երկրագունտին ուռած գօտիին վրայ, որ միշտ արեւէն կը տաքնայ։ Բայց ուղեւորներն աւելի բարեխառն երկիրներէ կը ճամբորդեն։

Ներսէս։— Երկրիս վրայ ծովեր ու լեռներ կան, Պարոն Գալուստ։ արդեօք ոտքո՞վ թէ լողալով կ՚անցնին այդ տեղերէն։

Պ. Գալուստ։— Չէ՛, տղաս, վասն զի անկարելի է այդ։ Մարդիկ չէն երկիրներէ կառքով կամ չոգեկառքով կը ճամբորդեն, անապատներէն անցնելու համար ուղտի վրայ կը հեծնեն, իսկ ծովէն անցնելու համար նաւ կը մտնեն։

Ղեւոնդ. — Ուրեմն չատ զարմանալի բաներ կը տեսնէ մարդ այսպէս ճամբորդելով։

Պ. Գալուստ. — Աշխարհիս հինգ մասերը կը տեսնէ. նախ՝ Եւրոպա, ուր մեզի պէս ճերմակ մարդիկ կը բնակին. յետոյ Ասիա, ուր չատ բնակիչներ դեղին գոյն ունին՝ Չինացւոց պէս. վերջը Ափրիկէ՝ որու բնակիչները սեւամորթ, խափշիկ են. Ամերիկա, որու բնիկ ժողովուրդը կարմիր է, եւ վերջապէս Ովկիանոս, որ Ովկիանոսի չատ մը կղզիներէն ձեւացած է։

Յովսէփ. — Հապա ո՞ւր են հակառակեալք, Պարո՛ն, միթէ ասոնք ալ մա՞րդ են։

Պ. Գալուստ. — Անշուշտ, հակառակեալ մարդիկ ճիշդ մեր ստորեւն են. իրենց ոտքը մեր ոտքերուն հակառակ են։ Բայց մենք ալ անոնց հակառակեալներն ենք։ Անոնց եւ մեր դիրքն ի՞նչպէս են, գիտէ՞ք, երկու ճանճերու պէս, որոց մէկը խնձորի մը վրայի կողմը կը դանուի եւ միւսը խնձորին տակը։

Պետրոս. — Բայց կ՚ըսեն թէ Երկիրը կը դառնայ. եթէ դառնար՝ արդեօք վար պիտի չիյնայի՞նք։

Պ. Գալուստ. — Ո՛չ, ինչու որ Երկրիս բոլորտիքը Պա-ՏԱՐԱՆ կայ, կամ օդի դունտ մ՚որ դրեթէ տասն հազար կանգուն խտութիւն ունի. այս օդի սիւնակը մեր վրայ կը ծանրանայ եւ մեզ Երկրիս երեսը կը պահէ. ուստի եթէ հողն թոյլ ըլլար՝ անոր խորը պիտի իջնէինք, ինչպէս որ կը պատահի երբոր տղմի մէջ իյնանք։

Պետրոս. — Բայց չեմ հասկնար թէ Երկիրն ի՞նչպէս կը դառնայ . . . :

Պ. Գալուստ. — Ինչու որ դու ալ անոր հետ կը դառնաս։ Պետրո՛ս, նայէ՛, հիմա արեւն ո՞ւր է, քիչ մը եռքը նոյն տեղը պիտի չտեսնես զայն։

Նեղսէս. — Կը նայիմ որ կը քալէ, Պարո՛ն։

Պ. Գալուստ. — Ընդհակառակն, Նեղսէս, Երկիրն է շարժողը թէ որ նաւակի կամ շոգեկառքի մէջ դանուիս, այնպէս կը կարծես որ ծովեղերը կամ ծառերը կը քաշուին, թէեւ իրօք նաւակը կամ կառախումբն է որ կը վազէ։ Յովհաննէս, նայիմ սա չունչանդ դարձուր։

Յովհաննէս. — Անաւասիկ կը դառնա՛յ, Պարոն։

Պ. Գալուստ. — Լա՛ւ, հիմա դու ալ Պետրոս, չուտ գետինը խոշոր քար մը դիր, այնպէս որ չունչանը դառնալու ատեն՝ քարին բոլորտիքը քալէ։

Պ. Գալուստ. — Լաւ, տղայքս, հիմա կը տեսնէք։ Ենթադրենք թէ Երկիրն չունչանն է, ինք իր վրայ քսանչորս ժամու մէջ կը դառնայ որով օր մը կ'ըլլայ, եւ ասկէ դատ, մէկ տարուան միջոցին մէջ կը բոլորէ քարն, որ Արեւուն տեղը բռնած է։ Միթէ հասկցա՞ք ըսածս։

Ամենքը. — Այո՛, Պարո՛ն, Երկիրն Արեւուն բոլորտիքը կը դառնայ չունչանի պէս։

ՄԿՈՒՆԳ

«Բո՛ւրիկ, խապա՞ր էք, փորձանքի մէջ ենք, մուկն ըսաւ մկան՝ նաւու մը վրան։ — Բա՛, ի՞նչ կայ, ըսէ։ — Ի՞նչ ըլլայ աղէկ՝ նաւը ջուր կ'առնէ, վա՛ր իջէք տեսէ՛ք։ այնքան ջուր կայ նաւուն վարի անպարը որ քիչ մնաց հասնէր դունչիս ալ ծայրը (բայց չիտակն եթէ ըսել նա ուզէր, թաթիկներն հաղիւ էին թրջուեր)։ Զարմանք ալ չէ, բո՛ւրիկ, միթէ չե՞ս տեսներ, նաւապետին կամ դիմով է կամ յիմար, իսկ նաւաստիք մէկմէկէ ծոյլ, վատանուն։ մէկ խօսքով ոչ կարող կայ այս տեղ ոչ կանոն։ Քիչ մ'առաջ բոլոր ուժովս ճըլացի, նաւերնիս հիմա կ'ընկղմի, ասացի։ որո՞ւ կ'ըսես, մտիկ ընող մ'ալ չեղաւ, իբր թէ իմ հանածս ըլլար սուտ համբաւ, բայց յայտնի է — թէ վար իջնես մէկ անգամ, կը տեսնես որ դիմանքք չատ չատ — մէկ ժամ։ Բո՛ւրիկ, ինչո՞ւ մենք ալ նոցա հետ մեռնինք։ երթանք չուտով՝ փախչինք նաւէն՝ ազատինք։

Նեռուեցան՝ մկներն՝ ընկան ծովուն մէջ, ցամաքը հեռու, ալիքներն անվերջ։ քիչ մը լողացին, խեղդուեցան։ Իսկ նաւը ճարտար ձեռքով շակուած, նաւանանգիստ հասաւ անփորձ անվնաս։

ՊԻԻԼՈՎ.

ԲՆՈՒԹԻՒՆ

Բնութիւն անունը կուտանք այն ամէն բաներուն որ Արարչին ձեռքէն ելած են։ Բնութիւնը երեք կարգ կը բաժնուի. հանքային կարգն, որու մէջ կը պարունակուին բոլոր հանածոյք, այսինքն քարեր և մետաղներ։ Բուսական կարգն, որու մէջ կը պարունակուին բոյսերը կամ ծառերը, այսինքն խոտերը, թուփերը, ծառերը։ Կենդանական կարգն, որու մէջ են կենդանիները, այսինքն անասունները, նոյնպէս մարդը։

Կենդանիները գործարաններ ունին, այնպէս որ կը կերակրուին, կը շարժին, կը մտածեն. մէկ խօսքով կ'ապրին, ասոր համար ընտրոտ արարածներ կ'ըսուին։

Բոյսերն ալ գործարաններ ունին սնանելու համար, բայց մինակ կը բուսին, վասն զի չեն կրնար ոչ տեղէ տեղ շարժիլ, ոչ զգալ, ոչ մտածել, ուստի անզգայ են և անկենդան։ Իրօք ո՞վ տեսած է ծառ մը որ խնդայ, երգէ, քալէ։

Իսկ հանքերը, անգործարան մարմիններ կամ առարկաներ են, ինչու որ գործարան չունին. ոչ կենդանիներուն և ոչ բոյսերուն պէս կ'ապրին, այլ միայն երկրի վրայ անշարժ կը մնան և հանքահանները հողին տակէն կը հանեն ահագին ծակեր բանալով։

ՁԱՐՏԱՐՈՒԹԻՒՆ

Մարդ շատ բաներու պէտք ունի. կերակուր, զգեստ, բնակարան կ'ուզէ։ Արդեօք այս պիտոյքը պատրաստ կը գտնուին երկրի վրայ. ո՛չ։ Երկիրը բարերար է, բայց ինքնին շատ բան չի տար մեզի. պէտք է աշխատիլ այդ մեր պիտոյքը հոգալու համար։ Եթէ երկիրը չհերկենք ու չցանենք, ցորեն ու հաց չենք ունենար. եթէ գետինը փորելով քարեր ու մետաղներ չկարենք, եթէ անտառներէն փայտ չկտրենք, գործիք, տուն ու բնակարան չենք կրնար շինել. եթէ ոչխարներ չպահենք և անոնց բուրդը չմանենք ու չհիւսենք, զգեստ չենք կրնար շինել։ Ուստի այն մարդն որ կ'ուզէ ապրիլ և օգտակար բաներ վայելել, պարտաւորէ աշխատիլ ու ճարտար ըլլալ։ Այն մարդը որ մարմնով ու մ' քով տկար է, չի կրնար աշխատիլ։

Այն ժողովուրդը որ չաշխատիր և միայն վայրի պըտուղներով կը սնանի, վայրենի վիճակ ունի։ Այսպիսի վայրենիներ կան աշխարհիս այլ և այլ կողմերը։ Անոնք ողորմելի կեանք ունն, հանդիսատ բնակարան, զգեստ ու կերակուր չունին, և որովհետև նեղութեան օրերու պաշար չեն պատրաստեր. շատ անգամ անօթութենէ կը մեռնին։

Երբ ժողովուրդ մը ժիր ու ճարտար է՝ աւելի հանգիստ կեանք կ'անցընէ։ Աբաւեր կը մշակէ, արջառներ կը պահէ, տուներ ու մեծ շէնքեր կը շինէ, գործարաններ կը բանայ, ուրիշ ժողովուրդներու հետ առուտուր կ'ընէ, և օրէ օր նոր արուեստներ ու գիտութիւններ կը գտնէ, որով աւելի շատ գիւրաւ բաներ կ'արտադրէ։ Այն երկիրներն՝ ուր ճարտարութիւնը ծագկած է, աւելի բազմամարդ են քան թէ այն տեղերն՝ ուր ճարտարութիւն, ապրուստ չըլլալով՝ շատ քիչ մարդիկ կը գտնուին։



ԲԵՆԻԱՄԻՆ

Ամերիկայի Պոսթօն քաղաքը Բենիամին անունով տղայ մը կար։ Հայրն ապքատ էր և չէր կրնար իր որդւոյն պիտոյքը հոգալ։ Բենիամին իր հօրը վրայ բեռ չըլլալու համար տպարան մը մտաւ ու գրաշար եղաւ։ Բայց ուսմունքն ալ շարունակեց։ Առանձին կ'աշխատէր։ Շատ կը սիրէր գիրք կարդալ և իր աւուրչէքէն աւելցած

ստակով գիրքեր ծախու կ'առնէր։ Կանուխ կ'արթննար, ժամանակին իր գործը կ'սկսէր և ժամ մը պարապ չէր անցըներ։ Բենիամին օրէ օր յառաջ կ'երթար թէ՛ արուեստին և թէ՛ ուսմունքին մէջ։ Երբոր տասն եօթն տարու եղաւ, Ֆիլատէլֆիա գնաց և գրաչարի արուեստը շարունակեց։

Ուշիմ ու ժրաջան էր Բենիամին։ արդէն կարող էր մաքուր ու կոկիկ ոճով նամակ գրել։ Բաղաքին կառավարիչն անոր մէկ նամակն տեսնելով՝ շատ հաւնեցաւ, և զանի պաշտպանեց։ Բենիամին Լոնտոն ճամբորդեց և այն տեղ ալ գործը շարունակեց։ Երբ ուրիշ գործաւորներ շարաթը չորս հինգ շիլին դարձնուրի կուտային, Բենիամին կ'զգուշանար ոգելից ըմպելի խմելէ և ասոր համար միտքն աւելի բաց, առողջութիւնն աւելի կայտառ էր և աւելի շատ ստակ կը խնայէր։ Քսան տարու էր երբոր նորէն Ֆիլատէլֆիա դարձաւ։ Շատ աւելի ճարտար ու խելացի եղեր էր Բենիամին։ Ոչ միայն տպարանի գործը կը կատարէր, այլ և իրեն համար մանր թերթ մը կը տպէր և բարեկամներուն կը ցրուէր։ Իր ժիր, պարկեշտ և ուղիղ վարքով ամենուն սիրելի եղեր էր Բենիամին և օրէ օր յարգ ու յաջողութիւն կը գտնէր։ Քիչ ատենէն ինքն իր գլխուն գործ մը սկսաւ։ լրագիր մը հրատարակեց, անոր մէջ իմաստալից բաներ գրեց և բաւական ստակ շահեցաւ։ Բայց Բենիամին, թէև աւելի ունեւոր էր, միշտ ժուժկալ կեանք մը կը վարէր. քիչով կ'ապրէր, պարզ կը հագուէր և շատ անգամ ինք լրագրին համար առած թուղթը սայլակով տպարան կը կրէր։

Բենիամին քիչ քիչ գործը մեծցուց. թղթի խանութ մը բացաւ, և սկսաւ գրքեցոյց մը հրատարակել, որուն մէջ շատ ընտիր խրատներ կային։ Այս ծանր զբաղմունքին

մէջ ժամանակ ալ կը գտնէր նոր նոր բաներ սորվելու։ Շատ չանցաւ կառավարութեան պաշտօնի մէջ մտաւ ու մատենադարան և ուսումնարան հաստատեց իր հայրենակիցներուն օգտակար ըլլալու համար։

Բենիամին թէպէտ երեսուն տարեկան եղեր էր, բայց միշտ նոր բան սորվելու կ'աշխատէր։ Ինք գտաւ շնորհքը գործիք մ'է այս որ կ'արգիլէ կայծակը տուներու վրայ իջնելու և մարդոց վնաս տալու։ Ամպոտ օր մը թրուցիկ թռցնելու առեն այս գիւտն ըրաւ, որով բոլոր Եւրոպայի մէջ մեծ անուն հանեց։ Բենիամին շատ ծառայութիւններ մատուցց իր հայրենիքին։ Ազքատ տղայ մ'էր, բայց իր աշխատութեամբը, խելքովն ու իր արդարասիրութեամբը մեծ պատիւ ու հարստութիւն ստացաւ։ Այս Բենիամին ՓՐԱՆՔԼԻՆՆ է, որու յիշատակն այսօր ամէն մարդ կը սիրէ ու կը յարգէ։

ԳՐՈՒԹԻՒՆ

Ինչպէս մանր ժիր մեղուն, օդին մէջ շուտ կը սահի, մեղր ծծելով օրն ի բուն, ամէն նորաբոյս բարմ ծաղկէ. — Նոյնպէս ես պիտ' ըլլամ ժիր ամեն դասի ու գործի։ Դու ալ, ընկեր, շո՛ւտ փախիր ծուլութենէն ջարոգի։ — Իմ նոր տարիք թող անցնի, ուսմունքով ու ոդջ խաղով, որ կարենամ նոր ժամի, համարս տալ գոն սրտով։ —

ԵՐԿՐԱՇԱՐԺ, ՀՐԱՖՈՒՆ

Քանի մը տարի պարտէզի մը մէջ հանդարտ կը խաղային, երբոր յանկարծ ահ ու դողով սկսան տարին անգին վազվզել, եւ Սահակ որ ուժի տարեկան էր, պոռաց։

«Հողը կ'երերայ տարիս տակ, որովհետ տատանա՞ն կը չարժէ երկիրը»։

Գրիգոր իր եղբօրն Սահակին ազազակը լսելով՝ դուրս պարտէզը վազեց ու ըսաւ։ — Մի վախնար, տղա՛յք, երկրաշարժ է։ վտանգ չկայ։

Սահակ։ — Ի՞նչ է երկրաշարժը։

Գրիգոր։ — Երկրին խորը կրակ կայ։ այս կրակէն շատ մը նիւթեր կը հալին, կ'եռան եւ դուրս պոռթկալ կուզեն, երբոր ծակ մը չգտնեն՝ տեղ տեղ հողը կը ցնցեն։ Այս ցնցումն կ'ըսուի երկրաշարժ, որով երբեմն հողը կը պատռի, ծառեր կը տապալին, տուներ կը փլին, քաղաքներ կը կործանին։ Սովորաբար այս ցնցումներն երկար չեն տեւեր։ քիչ մը տաքն հողին մէկ մասը կ'երերայ, ինչպէս նաւակ մը ջուրին վրայ։

Սանակ. — Այդչափ ոյժ ունի՞ կրակը։

Գրիգոր. — Անշո՛ւշտ։ Ա՛ռ սան մը, մէջը ջուր դիր, բեռանը լաւ մը գոցելով՝ կրակին վրայ դիր. պիտի տեսնես որ սանին խուփը վեր պիտի ցատկէ չոգիացած ջրէն։ Նոյնպէս երկրին խորերը գտնուած մետաղները հեղուկ կոյտ մ՚են որ չարունակ կ՚եռան։

Երկրաշարժներ աւելի շատ կը պատահին այն երկիրներն ուր հրաբուխներ կան։ Հրաբուխը լեռ մ՚է որու գագաթէն կրակ կ՚ելնէ։ Ատեն մը երկրին կեդրոնին կրակն անոր կեղեւը պատռած է, այսինքն այն անապին ժայռերն որ հողէն եւ աւազէն վար կը գտնուին, եւ այսպէս ելուները ձեւացած են։ Խառնարան կ՚ըսուի հրաբուխին բերանն որմէ վար հոսի պէս է։ Խառնարանն, որ ձագարի ձեւ ունի, երբեմն կէս մղոն լայն է եւ հալած ու այրած նիւթեր դուրս կը նետէ, ինչպէս ծծումբ, ջուր, քար, այնչափ որ բոլոր շրջակայ տեղերը կը ծածկեն։

Ասիոյ մէջ շատ հրաբուխներ կան, բայց ամենէն շատ Ամերիկա կը գտնուին։ Ակոսի ու Դուին քաղաքներն երկրաշարժէ կործանած են։ Երեւելի են Եանա, Վէսուվ եւ Հեքլա հրաբուխներն Եւրոպայի մէջ։

Ծովուն տակ ալ տեղ տեղ հրաբուխներ կան, այնպէս որ երբեմն կղզիներ ջրին երեսը կ՚երեւին, երբեմն ալ կը կորսուին։

ՀԱՄԵՍՏՈՒԹԻՒՆ

Երբոր տղայ մ՚ինքզինքը կը գովէ կամ իր վրայ շատ կը խօսի ու կը պարծի՝ ուրիշներուն ծիծաղը կը շարժէ։ Ուստի պարտաւոր ենք ոչ միայն համեստ ըլլալ, այլ ուրիշներուն տուած գովեստը խոնարհութեամբ ընդունիլ։ Արժանաւոր մարդն անգամ երբոր կը գովուի՝ ուրիշներուն համարումը կը կորսնցնէ, ո՛չ թէ ինքնահաւան

ու տգէտ մարդն, որ գոռոզութեամբ կը կարծէ թէ ամէն բան գիտէ և ամէն տեսակ լաւ ձիրք ունի։

Պէտք չէ որ մարդ ինքն իր վրայ մեծ համարում ունենայ և ուրիշներուն կարծիքն արհամարհէ, վասն զի մեր կարծիքն ալ կրնայ սխալ ըլլալ։ Պէտք է որ մարդ միշտ մտածէ թէ սրչափ լաւ յատկութիւններ ունենայ, իրմէ աւելի բարի, աւելի արդարասէր, աւելի ազնիւ, աւելի խելացի մարդիկ կրնան գտնուիլ աշխարհիս վրայ, և իր վարմունքը չսիկէ։

ՍԱՀԱԿ

Շատ անգամ գիտուն ու մեծ մարդիկ աւելի համեստ կ՚ըլլան քան թէ տգէտ ու անգիտան մարդիկ։ Սահակ որ շատ ուշիմ եւ արիւն ազայ մ՚էր, պարծենկոտութիւն չունէր։

Երբոր դպրատուն կ՚երթար, լսիկ մնչիկ իր գասերով կը պարապէր։ Յետին ծայր ճարտար էր եւ խազի ժամերը կ՚անցընէր շատ հետաքրքրական բաներ չինելով։ Այլ եւ այլ ազոցներ, մուրճեր, հերիւններ ունէր եւ գործածելը գիտէր։ Իր տան քովը հովաչափ ազօրի մը կար։ Սահակ ամէն օր կ՚երթար այս ազօրին կը քննէր որ հասկնայ թէ ի՛նչպէս կը դառնայ։ Երբոր անոր այլ եւ այլ մասերը դիտեց, նատաւ մանր ազօրի մը չինելու, մեծին նման, իր գանակով, ազոցովն ու մուրճովը։ Շատ սիրուն ու կոկիկ ազօրի մը չինեց։ Երբեմն կ՚ելնէր տանիքին վրայ կը դնէր ազօրին որ հովէն դառնայ։ Նոյնպէս ջանաց իր ազօրին մուկի մը դարձնել տալու։ Գոգաւոր անթի մը մէջ կը դնէր այս պզտիկ կենդանին որ քանի դուրս ելնելու համար ճիգ կը թափէր, ազօրին կը դառնար։

Անուին տակը քանի մը ցորեն ալ կը գտնէր եւ երբոր մուկը ցորենն առնելու կը ջանար, աղօրին կը դարձնէր։ Իր սենեկին պատերուն վրայ ածուխով տեսակ տեսակ նկարներ չինած ունէր։

Երբոր Սահակ քիչ մը մեծցաւ, վարժարան մտաւ։ Շատ կը փափաքէր գիտնալ թէ ի՞նչ է ջուրը, օդը, Արեւը, Լուսինն ու աստղերն։ Երբոր օր մը պարտէզին մէջ մինակ նստեր էր, յանկարծ ծառէն խնձոր մ՚ընկաւ։ Այն տեղն ինքն իրեն հարցուց թէ ի՞նչ պատճառաւ խնձորը գետին ընկաւ։ Արդեօք խնձորին ծանրութիւ՞ննն էր պատճառը՝ թէ ոչ երկրին մէջ զօրութիւն մը կար որ խնձորը իրեն կը քաշէր։ Բաւական խորհելէ ետք, տեսաւ որ երկիրն էր որ իրեն կը քաշէր եւ այս քաշելը բնութեան օրէնքներէն մէկն է։ Անոր ուժովն է որ թեթեւ առարկաներ երկրիս երեսը կը մնան՝ օդին մէջ թռչելու տեղ։ Առարկաներուն ծանրութիւն տուողը ձգողութիւնն է։ Սահակ երեւան հանեց որ մարմին մ՚իր մեծութեան ու հեռաւորութեան համեմատ ձգողութիւն ունի։ Այսպէս երկիրը կը քաշէ Լուսինն, իսկ Արեւը բոլոր մոլորակներն։ Այս է պատճառ որ երկինքի մարմիններն իրենց տեղը կը պահեն եւ չեն խառնուիր։

Սահակ այս եւ ուրիշ գիւտեր ալ ըրաւ եւ մեծ անուն ստացաւ։ Ինքն ցցուց որ ամէն ճերմակ ճառագայթ եօթը տարբեր գոյներ ունի։

Սահակ շատ անուշ եւ հանդարտ բնաւորութիւն ունէր։ բնաւ չէր բարկանար։ Պզտիկ չուն մ՚ունէր, որու անունն Ադամանդ էր։ Օր մը դրասենեակէն դուրս կ՚ելնէ գործի մը համար եւ սեղանին վրայ կը թողու բոլոր դրած թուղթերն։ Ադամանդ սեղանին վրայ կը ցատկէ եւ կանթեղը վար կը ձգէ, այնպէս որ բոլոր թղթերը կ՚այրին մոխիր կը դառնան։ Սահակ նեղս կը մտնէ եւ եղածը կը տեսնէ, չունը չի ծեծեր, այլ այսչափ կ՚ըսէ.

— Ա՜խ Ադամա՜նդ, Ադամա՜նդ, գիտե՞ս արդեօք որչափ վնաս տուիր ինձ։

Իրաւ Սահակ չաա խմաատուն ու գիտուն մարդ մ՚էր, բայց բնաւ պարծենկոտ չէր. ընդհակառակն խոնարհ եւ հեզ։ Ամենուն հետ սիրով կը վարուէր, եւ մեռնելէն քիչ մը առաջ կ՚ըսէր.

«Իմ բոլոր գիտութիւնս բան մը չէ՝ չգիտցած բաներուս հետ բաղդատելով»։

Ահա՛ այս էր ՍԱՀԱԿ ՆԻՒԹԸՆ, բոլոր աշխարհի մեծ մարդերէն մէկը։

Ի Դ

Տղաս, կրնա՞ս ըսել ինձ թէ՝ ինչո՞ւ համար ամառը աւելի տաք կ՚ընէ քան թէ ձմեռը. պատճառը գիտե՞ս, Միհրան։

— Հա՛յր իմ, այս գիտեմ որ քանի վառարանին մօտենամ, այնչափ կը տաքնամ. ուստի կը մտածեմ որ եթէ ամառը տաք է, պատճառն այն է որ Արեւը մեզի աւելի կը մօտենայ քան ձմեռը։

— Այդ ըսածդ սխալ է, տղա՛ս. ինչու որ ձմեռ առեն երկիրն Արեւուն աւելի մօտ կը գտնուի։ Եթէ ձմեռը ցուրտ է, պատճառն այն է որ Արեւուն ճառագայթները մեր վրայ չիփ չիտակ չեն իջներ, եւ Արեւն ուշ երնելուն եւ կանուխ մարը մտնելուն, ինչպէս կ՚ըսեն, քիչ կը տաքցնէ Երկիրը։

— Հայրի՛կ, ըսածդ լաւ չեմ հասկնար, կաղաչեմ բացատրէ։

— Շատ աղէկ, տղա՛ս։ Ամառ օր կէսօրին արեւուն նայէ եւ պիտի տեսնես որ գլխուդ վրայ է, եւ ճառագայթներն ԿՈՐԵՐԷՆ պէս չիտակ վար կ՚իջնեն. նոյն ժամուն ձմեռ առեն ալ նայէ՝ եւ արեւն այնքան ցած կը գտնես որ պիտի կարենաս տեսնել առանց գլուխդ վեր վերցնելու։

— Այո՛, այդ բանը գիտեցի։ Սակայն ամառը կան օրեր որ ցուրտ են, եւ ձմեռն ալ երբեմն տաք է։

— Իրաւունք ունիս, ապա։ Օդի այդ փոփոխութեան պատճառը հովերն եւ մթնոլորտի մէջ գտնուած շոգիներուն խառնարն է. եւ որոշեալ ջերմութեան աստիճանը կը փոխուի, քիւրդ չատ անգամ ջերմաչափին կը նայի։

— Բայց հովերն ուսկի՞ց յառաջ կուգան, հայրիկ։

— Երբ օդը շարժի, հով կը հանէ։ Այն շարժումն ալ օդին տաքութեան տարբերութենէն յառաջ կուգայ։ Երբ տեղ մը տաք է եւ ուրիշ տեղ ցուրտ, օդի հոսանք կամ հով կ'ելնէ։ Ինչպէս, երբ սենեկի մը մէջ կրակ վառի, օդը տաքնալով կը թեթեւնայ, վեր կ'ելնէ եւ կրակարանին բոլորտիքը պարապ կը մնայ. եթէ դրսէն օդ բանի, պարապ տեղը կը լեցուի եւ չարունակ հոսանք մը հաստատուելով՝ հով կելնէ, որ կրակ վառելու համար պիտանի է։

Ծովեղերեայ քաղաքները՝ սովորաբար ցերեկ տաքն, հովը ծովէն կը բանի, իսկ գիշերը՝ ցամաքէն. ինչու որ օդը ցամաքի վրայ աւելի կը տաքնայ քան թէ ծովու վրայ, այնպէս որ վեր կը բարձրանայ եւ ծովէն բանող աւելի զով օդն անոր տեղը կը բռնէ։ Իսկ գիշերն ասոր հակառակը կը պատահի, քանի որ ծովուն օդը աւելի տաք է քան ցամաքինը։

Զորս հով կայ որ երկրիս չորս կողմէն կը փչեն. հիւսիսային հով, հարաւային հով, արեւմտեան հով որ անձրեւաբեր է, վերջապէս արեւելեան հով որ չոր է։ Մուրճիկը բուռն հով մ'է որ Ասիրիէէ կ'ելնէ եւ առաջը ծովու ալիքներու պէս կը շարժի մինչեւ վեց կանգուն բարձր, եւ չատ անգամ ճամբորդները կը կորսուին։

— Հայրի՛կ, անսահմանակոյս ջերմութիւնը մինչա արեւէն մեզի չի հասնիր, վասն զի անցածները, երբ քիւրս սղոցով փայտ կը կտրէր, ձեռքս սղոցին վրայ դրի եւ տեսայ որ տաստիկ տաք էր։

— Այդ դիտումդ չատ ճիշտ է, Մ[illegible]։ Իրաւ է, ամէն շարժումէ տաքութիւն կը ծագի. եթէ ձեռներդ չփես, կը տաքնան, եթէ քալես, ոտներդ կը տաքնան. երբ ջուր քաշելու համար չուանը ձեռքիդ մէջ սահի որ դոյլը հորին յատակն

իջնէ, կ'զգաս որ ձեռներդ ապրցեր են։ Վայրենիներն երկու չոր ճիւղ իրարու չփելով՝ կրակ կը վառեն, մինչդեռ մենք հրահանով եւ մանաւանդ ծծմբառով կրակ կը հանենք։ Մինչ բա՛ն, կը խրատեմ քեզ որ ծծմբառի չդպչիս։ Շատ տղաք մեռած են բոցերու մէջ սատիկ տանջուելով, վասն զի այս խրատին հակառակ վարուած են։

— Ո՜հ, այդ խրատդ չպիտի մոռնամ, Հայրիկ, քիչ մ'ալ ուրիշ բաներու վրայ խօսինք։ Դիտեմ ցորեն ի՞նչ է։ Սովորաբար գարնան ու աշնան ժամանակ կը պատահի, երբ արեւը քիչ մը շատ կը տաքցնէ։ Երկիրն եւ անկից չոգի կը հանէ։ Իսկ գիշերը գով ըլլալով՝ չոգին կը խտանայ եւ մանր կաթիլներու պէս վար կ'իջնէ։ Դիտեմ նաեւ թէ Եղեռնէ ցրտէն սառած ցօղ է։ Դիշերուան թանձր մշուշը կը խտանայ առաւօտեան ցրտէն եւ մանր սառոյցի կաթիլներու պէս կը ծածկէ պաղ առարկաները։ Տեսեր եմ որ մշակն իր տունկերն եղեռամէն պահպանելու համար՝ անոնց վրայ կտաւ կամ փսիաթ մը կը ծածկէ։ Պ—ոդիէ՝ ալ բարակ անձրեւ մ'է որ պաղ հողին վրայ կը սառի։ Իսկ սառն ալ ջուր է որ ցուրտ օդէն կը պընդանայ։ — Բայց Յիսուն ու Կարկուտ ի՞նչպէս կը շինուին։

— Միտ՛ան, կարկուտն անձրեւ մ'է որ փոթորկի ժամանակ օդին մէջ կը սառի։ Ընկուզի չափ խոշոր կարկուտներ իջած են։ Կարկուտը տեղացած տեղն այնպէս աղմուկ կը հանէ որ կարծես թէ ընկուզի պարկ կը պարպուի։ Երբեմն դաշտեր ու պարտէզներ կ'աւրէ։ Իսկ ձիւնը խտացած անձրեւ է որ մանր աստղիկներու պէս կը սառի երբոր պաղ հովի հոսանքի մը մէջէն կ'անցնի։ Կան լեռներ, ինչպէս, Մոնթ—Պլան՝ որու գագաթին վրայ երբէք ձիւնը չի հալիր։

— Միթէ ստուգիւ ձիւնն օգտակա՞ր է, հայրիկ։

— Այո՛, տղաս։ Երբեմն ձիւնը լեռներու վրայ հալելով՝ ողողումներ յառաջ կուգան։ իրաւ է որ վնասներ կը պատճառէ, բայց դաշտերու մեծ օգուտ ունի, վասն զի բոյսերը կը ծածկէ եւ չի թողուր որ ցրտէն սառին։

ՄԵԾ ՄԱՐԴԻԿ

Պողոս. – Հայը իմ, միթէ իրօք Դ°ՀԵՆ այն հարէն որ արտասովոր տաղանդ ու ճարտարութիւն ունէին։

Հայր. – Այդ ԴԵՀ բառը տարբեր իմաստներ ունի։ Իրաւի մեծ կ'անուանեմ այն մարդն՝ որ ԴԵՀ ԲԱՆԵՐ ԿԸ ԳՐԵՆԷ ԷՐ ՅԱՌԱՆՑ ՍՅԷԼԷՐՈՎԸ։ Շատ անգամ մեծ կարողութիւն ու ճարտարութիւն ի գործ կը դրուին անոտի բաներու համար, կամ ի զուր կը վատնուին։ Մեծ մարդ է այն՝ որ իր տաղանդը կը գործածէ մեծ ու կարեւոր նպատակի մը համար՝ ուժգնութեամբ եւ յարատեւութեամբ։

Պ. — Պատմութեան մէջ կը կարդամ որ թագաւորներ, զօրավարներ, իշխաններ, նախարարներ կամ բարձրագիր անձեր իրրեւ մեծ մարդիկ կը նկատուին։

Հ. — Ի հարկէ՝ բնական է որ մեծ կոչուին անոնք որ մեծ եւ հզօր ներգործութիւն մ'ունեցած են մարդկային ազգի վրայ։ Սակայն այն մարդիկ որ օգտակար արհեստները կը հնարեն, կարեւոր ճշմարտութիւններ կը գտնեն՝ ապագայ սերունդին երջանկութեան համար, աւելի մեծ իրաւունքներ ունին, աւելի հիմնաւոր արժանիք ունին մեծ մարդոց կարգը դասուելու։

Եթէ կուզես գնահատել թէ բարձրագիր մարդ մ'ինչ բաժին ունեցած է այն դէպքերու մէջ՝ որ իրեն կը վերագրուին, մտովին մերկացուր զայն իր կացութեան եւ զօրութեան յարակից առաւելութիւններէն, եւ դիտէ թէ ինչ դեր պիտի կատարէր եթէ այդ արտաքին չնորհներէ զուրկ մնար — կամ անոր տեղ սովորական մարդ մը դիր, եւ նկատէ թէ գործերն միեւնոյն ուղղութիւնը պիտի ունենային՞։

Պ. — Միթէ Պետրոս, Ռուսիոյ Զարը, մեծ մարդ մը չէ՞ր։

Հ. — Երբեմն ժամանակակից մարդիկ պատմութեան տալիք վճռոյն հակառակ վճիռ մը կարձակեն նշանաւոր կարծուած մարդերու նկատմամբ։ Պետրոս մեծն կը կոչուի այդ Զարն...

Պ. — Միթէ մեծ մարդիկ պարտաւոր չե՞ն նաեւ բարի մարդիկ լինել։

Հ. — Անշո՛ւշտ, ճշմարիտ մեծութիւնն բարութեան հետ կապուած է։ Մեծ մարդոց նպատակը պարտի լինել հանրութեան բարիքը։ Մեծ էին Նեբուքէս եւ Մեսրոպ, վասն զի մեծ էր իրենց նպատակն ու գործն, այս է ժողովրդեան մը բարոյական եւ մտաւոր լուսաւորութիւնն ու վերաշինութիւնն։ Յուլիոս Կեսար եւ Բրոմուէլ կարող էին մեծ բաներ բնել, բայց այդ բաներն իրենց յատուկ փառասիրութեան համար ժողովրդեան բարօրութեան նպատաւոր էին։ Սակայն մարդ մը չկրնար մեծ լինել եթէ չատ տարբերն յատկութիւններ չունենայ։ Նա պարտի լինել կորովամիտ, ժիր, անվեհեր եւ իր վատ կրից տէրը։ Եթէ այս բարոյական վսեմ ձիրքէ զուրկ մնայ, ինչպէս չատեր, չէ կարող մեծ անուան արժանանալ։

Պէտք չէ մոռնալ, որ լաւ եւս է բարի քան մեծ մարդ լինել, եւ առ հասարակ այն մեծ մարդիկ որ մարդկութիւնն այլ եւ այլ բարոյական, մտաւորական եւ գիտական բարիքներով օժտած են, բուրգ մարդիկ եղած են։

ԾՆՈՂԱՍԻՐՈՒԹԻՒՆ

Շատ տարիներ առաջ՝ Լանա հրաբուխը կը բռնկի։ Խառնարանէն հրեղէն նիւթեր թափելով դուրս՝ բոլոր շրջակայ գիւղերը կ'այրեն ու կը ծածկեն։ Օդը հրաններով ու մխոցով կը խտանայ։ Մօտակայ գիւղերու բնակիչներն ասդիս անդին կը փախչին, իրենց թանկագին բաները մէկտեղ տանելով։ Այս փախստական մարդոց մէջ որ մինակ իրենց ինչքն ազատելու հոգն ունէին, երկու պատանիներ կը դտնուէին, մէկուն անունն էր Անտիպատ, միւսին Ամփանիմոս, որ բոլորովին ուրիշ տեսակ բնաւ մը

չալկեր էին։ Միայն իրենց ծերունի ծնողքը կը կրէին որ անկարող էր քալելու։

Այս պատանիներուն ընթացքին վրայ ամենքը սքանչացան։ Կերևի թէ ասոնք այնպիսի ճամբայ մը բռնեցին փախչելու համար ու բ այլոց նիւթերը չհասան, և վերջէն նոյն տեղը գալարուտ մնաց, մինչև որ չորս կողմը գըտնուած հողերը այրեր ասչորեր էին։ Յոգոմորդն՝ որ շատ ագէտ էր, բայց լաւ զգացումներ ունէր, կարծեց թէ հրաչքով պահպանուեր էր այն տեղը, որ վերջէն Բուրեպուշին քաղաքը կոչուեցաւ։

ԿԵՆԴԱՆԻՔ

Կենդանիներու պատմութիւնը Կենդանաբանութիւն կ'ըսուի։

Այլ և այլ տեսակ կենդանիներ կան, այսինքն՝ բոլորն ալ նոյն կերպին չեն, և ոչ նոյն գոյնն, ոչ նոյն գեղեցկութիւն, ոչ նոյն ընդունակութիւն, և նոյն ընտանիքին եղածներուն մէջ ո՞եղամ տարբերութիւններ կը գտնուին։

Կան կենդանիներ որ կը թռչին, կը սողան կամ կը դարձեն երկրի վրայ, կան նաև այնպիսիներ որ օդին մէջ կը ՞ռչին, ուրիշներ ալ կան որ երկիրը կը փորեն, և վերջապէս կան կենդանիներ ալ որ կը նրնեն կամ կը մնան փայտը։

Ոմանք տաք արիւն ունին, ոմանք ալ պաղ արիւն։

Ոսկրներ ունեցող կենդանիներն ողնայու�կ'ըսուին, անոնք որ ոսկր չունին՝ անողնայուր կը կոչուին, իսկ ձուկերուն

ոսկրները ֆ-ոչ կ'ըսուին։ Զրէոդանինները չորս ոտք ունին, երկոդանինները՝ երկու ոտք։

Առիւծը, գայլը, շունը, կատուն, մողէսը, կոկորդիլոսը, գայլաձուկը, որ ուրիշ կենդանիներ կը կլլեն՝ կոկորդ ունին։ Փիղը, ձին, կովը, էշն, ոչխարն, որ խոտ կ'ուտեն, քերան ունին, որով ցորենը կը կարեն։



Եզը կնճիռ ունի, կովը, եզջերուն, շունն, եւ ագուէսը՝ ցոռոկ կինոճը՝ խալամ մը։ Բոլորն ալ ունին ֆլոխ մը, ինչպէս նաեւ ձուկն, ձին, օձը, թռչուններն ու ճանճը։

Ձին, ուղտն, կովը, խոզն, այծն, ոչխարն որոնք ունին։ շունը, կատուն, նապաստակը, գայլը, մուկն, առիւծը, գորտը, թռչունները ճիրաններ, ոտքեր ունին։ բայց արծիւն ու անգղը հաֆիներ ունին որպէս զի իրենց որսը բռնեն։

Այն կենդանիներն որ մէջ կուտեն, ինչպէս բոլորնին, անգղը, շունը, հաղեր են, անոնք որ խոտ կուտեն, ինչպէս ոչխարն,

այծը, խոտակեր են. անոնք որ պտուղներ կուտեն, պտղակեր են՝ կապիկներուն պէս՝ անոնք որ հունտ կ'ուտեն, հնդակեր են. անոնք որ միջատներ կը լափեն, բուռուռակեր են. արիւն ծծողներն են, ինչպէս տզրուկն, ոչխարաբուծ. իսկ անոնք որ ամէն բան կ'ուտեն մարդուն պէս՝ ամենակեր են։

Բոլոր կենդանիները վայրենի վիճակի մէջ էին. մարդիկ կարող եղան զանոնք ընտանի ընել. հովուին շունն ընտանեցած

գայլ կ'երևի։ Ընտանի կենդանիները սովորաբար այլ եւ այլ ցեղերու կը բաժնեն. արջառներն՝ արջառային ցեղէն են, ոչխարներն՝ ոչխարային ցեղէն, ձիերը՝ ձիական ցեղէն, խոզերը՝ խոզային, շուները՝ շնային եւ կատուները՝ կատուային ցեղէն։

ՉԱՓԱՒՈՐՈՒԹԻՒՆ

Ամեն մարդ, թէ՛ մեծ թէ պզտիկ, անուանդի պէտք ունի որ ապրի։ ոմանք շատ անուանդ կ'ուզեն, սմանք քիչ։ Ուժեղ և քաջառողջ մարդը շատ աւելի կերակուր կ'ուտէ քան թէ տկար ու փափուկ մարդը։ Բայց ամենուն համար չէ՛ մը կայ և պէտք չէ այս չափէն անցնիլ, որպէս զի անհանգիստ չըլլայ։

Ով որ չափէն աւելի կ'ուտէ ոչխարհոլ կ'ըսուի, ո՛վ որ փափուկ կերակուրներ կը սիրէ ֆոֆկոնէր կը կոչուի։ Որկրամոլն ինչ որ գտնէ կ'ուտէ՝ չը նայելով որ կերածն օգտակա՞ր թէ վնասակար է իրեն։ փափկակերն ընտրելով կ'ուտէ և իր բոլոր խելքը լաւ ու ազնուր կերակուրի հետ է։ Անշուշտ մարդ իկ ապրելու համար պէտք է որ կերակրին, բայց պէտք չէ որ իրենց բոլոր բանն ու գործը կերակուրն ընեն, և կարծեն թէ երջանիկ են, երբոր միայն կ'ուտեն։ Որկրամոլն ատելի կը դառնայ ամենուն։ Խոհեմ՝ զան ամեն բանի մէջ չափաւոր կ'ըլլայ և ասով իր առողջութիւնը կը պահպանէ։

ԵՐԿՈՒ ՄԵԳՈՒ

Մայիս ամսուն՝ շատ ազնուր առաւօտ մ'էր, երբոր երկու մեղու եկան որ մեղր փնտռեն։ Մէկն ուշիմ ու ժուժկալ էր, միւսն անհոգ ու խենդուկ։ Քիչ մը ետքը պարտէզ մը հասան, ուր անոր շահամ խոտեր, հոտաւէտ ծաղիկներ ու շատ համեղ պտուղներ կային։ Բաւական

ատեն այս ապ ու բանները ճաշակեցին։ Մին ատեն ատեն իր փոքրիկը կը լեցնէր մամով, որպէս զի իր փեթակը չի-նելու նիւթ ունենայ։ Միւսը մինակ անուշ նիւթերը կը ծծէր և իր հաճոյքը կը մոռանէր։

Վերջապէս մեծկակ աման մը գտան որ դեղձի մը ճիւղէն կախուած էր։ այս ամանին մէջ մեղր կար։ Շուտ մը անխոհեմ շատակեր մեղուն գլուխն ամանին մէջ խո-թեց և ակռաւ ուրախ զուարթ քաշել, թէև իր ընկերը կը խրատէր որ չափէն աւելի չճաշակէ։ Իսկ խելացի մե-ղուն՝ քանի մը վայրկեան քիչ քիչ ծծեց։ Ըմպելիին համը թէև անուշ էր, չսիրեց և կարծեց թէ անոր մէջ վատ-գաւոր բան մը կայ։ ուստի ձայն տուաւ իր ընկերին, նորէն պտուղներուն ու ծաղիկներուն վրայ թռաւ և իր անուշը չափով կերաւ։

Երեկոյեան դէմ գնաց իր ընկերին մօտ որպէս զի մէկտեղ փեթակը դառնան։ բայց ի՞նչ տեսնէ ապէկ։

Շատակեր մեղուն այնչափ ուռեր էր որ չէր կրնար շարժիլ։ Իր թև՛ն անուշին կպչեր էին, իր ոտքերը թմրեր էին և բոլոր մարմինը ջլատեր էր, մեռնելու վրայ էր։ Հազիւ կրցաւ իր վերջին բարևը տալ իր ընկերին, ապրաց՝ թէև ուշ՝ իր անխոհեմ ու անզգոյշ ընթացքին վրայ և շունչը փչեց։

ՀԱՑՆ Ի՛ԴԶՊԷՍ ԿԷ ՇԻՆՈՒԻ

Տղա՛յք, արդէն գիտէք որ ամեն մարդ արհեստ մը կը բա-նի, գործ մը կ՚ընէ որ իր օրական ապրուստը ճարէ։

Կան շատ մարդիկ որ երկիր կը գործեն։ Ասոնք երկրագործ կամ հո՛ն կ՚ըսուին։ Մշակին գործը շատ օգտակար ու ծանր

է։ Նախ երկրագործն անմշակ խոտերը կը հերկէ թիով։ Երկիրը պարարտ ընելու համար սայլակով աղբ կը թափէ անոր վրայ, ինչու որ եթէ հողը լաւ պարարտի՝ եռապատիկ, մինչեւ անգամ հնգապատիկ աւելի բերք կուտայ։ Վերջը մշակը կը մտնէ, այսինքն ակռոներ կը բանայ, իր սրբոցովը, հողը կը պատռէ ու կը փորէ։ Երբոր վարուցան ընելու ատենը գայ, ցորեն կը ցանէ, ըշտրը կը գլորէ ու կը ծածկէ ցորենը, յետոյ քաղնիչով անպիտան խոտերը կը խլէ, որ հացկատակ խոտեր են, եւ ուրիշ բոյսերու վնասելով կ'ուռճին։ Մշակութեան համար գործածուած գործիքները կ'ըսուին մշակոնոցներ։

Երբոր ցորենը կը զալարի եւ ապա կը դեղնի, կ'իմացուի որ հասած է։ Այն ատեն հնձողը կուգայ, բունները կը կտրէ մանգաղով, որոնք կը չենէ եւ յարդի կամ պրտուի թելերով կը կապէ։ Յետոյ՝ որանները կը դիզէ դաշտերուն մէջ եւ վերջապէս կալորայն կը տանի որ չորնան։

Վերջը՝ մշակը ռմբին կ'առնէ, ցորենը կը ծեծէ որ հասկերէն հատիկները դուրս ելնեն, խարբալով կամ մաղով կը մաղէ. աւելցուկ նիւթերը դուրս կը վանէ՝ ինչպէս հողը, մանր յարդերն, որոմներն, եւ այլն։

Մշակը՝ ցորենը այսպէս մաքրելէն ետեւ՝ ջրաղացը կամ հողմաղացը կը տանի։ Այն տեղ աղբիւրները ցորենը կ'անցընէ

երկանաքարէն։ Այս քարին տակ ցորենը կը ճզմուի, մ-ոլոը կ'ըսակուի, նոյնպէս ԲԵՓԸ կ'ելնէ եւ կը մնայ ալ-ը։ Այս գործողութիւնն ալ-ը է։ Ալիւրն պարկերու մէջ կը դնեն եւ հացավաճառին կամ խանութպանին կը տանին որ ծախէ։

Հացագործն ալիւրը ֆ-ուրն մէջ կը դնէ, անոր մէջ տաք ջուր կը թափէ եւ կ'սկսի ալիւրը ջրին հետ խառնել ու ՀԱՑԸ այնպէս որ խմոր կ'ըլլայ եւ կը պնդանայ։ Խմորին մէջ առաջուց կամ հաքէն խ-ը (մայա) կը դնեն եւ բաւական չաղելէն ետեւ տաշտին մէջ խմորը կը ծածկեն կամ պ-ուկ-ուէ մէջ կը դնեն կնտելով։ Քիչ ժամանակ անցնելէն ետեւ խմորը կ'ուռայ, կ'ուռի եւ այն տեղն կ'ըսեն որ հացին խաչն եկեր է։ Երբոր խաչ չդրուի խմորին մէջ՝ հացը Բ-ԱՐԷ կ'ըլլայ, որ այնչափ ախորժելի չէ, վասն զի կունտ կը մնայ եւ դժուարամարս է։

Եաքը՝ կնտուած խմորը փուռը կ'ուղարկեն եփելու։ Երբոր կ'եփի, փոնապանը հացը կը հանէ եւ հացագործին կամ տունը կ'ուղարկէ։

Կան հացեր որ գուտ ալիւրով կը չինուին, հացեր ալ կան որ հաճարով կը չինուին, երբեմն ալ խառնած կը շաղեն։ Հացն ալիւրի տեսակին նայելով՝ ճերմակ, թուխ, կամ սեւ կ'ըլլայ։

Մեր սեւ հացը շատ աւելի աղուոր է քան թէ վայրենիներուն կերած արմատներն ու իւղոտ հողը։ Ուստի պէտք է մշակութեան հոգ տանիլ որ ցորենն առատ ըլլայ։ Կ'ըսեն թէ Չինաստանի կայսրը հասկցնելու համար որ երկրագործութիւնն որչափ կարեւոր բան է, ինք անձամբ ամէն տարի դաշտ կ'իջնէ եւ առաջին ակօսը կը բանայ։

Իմաստունն ըսաւ։ — «Անօթութիւնն աշխատասէր մարդուն դռնէն կը նայի, բայց ներս մտնելու չի համարձակիր։»

ԳԻՋՈՎ ԳՈՀ ԸԼԼԱԼ

«Հայրիկ, կ'ըսէր Պօղոս, շատ անդամ վարժապետս կը խրատէ որ քիչով գոհ ըլլամ, բայց կը նայիմ որ անոնք միայն էնէվ գոհ կ'ըլլան որ շատ չունին։ Այս գոհութիւնն ալ ակամայ է։ Աղքատին էնը կտոր մը չոր հաց է. իմ կարապետ դասընկերիս էնը մաշած զգեստն է, իմ էնը հին գիրք մ'է. հիմա աղքատը կտոր մը հացովը, կարապետ մաշած հագուստովը, ես իմ հին գիրքովս պէտք է որ գոհ ըլլանք միշտ . . . ։

— Ցղաս, դու՝ վարժապետիդ խրատը ծուռ կը հասկնաս։ Քէնէվ գոհ ըլլալ ըսելը, մեր կարողութենէն վերբանի չփափաքիլն է, ինչու որ եթէ մեր գլխէն վերբաներու աչք տնկենք, շատ դժբաղդ կ'ըլլանք։

Հապա՞ ես փափաքներ ունիմ. կը փափաքիմ ամեն օր նոր ու օգտակար բաներ ունիլ, կը փափաքիմ դաս փոխել, աղուոր զգեստ ունենալ, կը փափաքիմ պիտանի մարդ ըլլալ, քեզի օգնել։ Այս փափաքներս ճնաասակա՞ր են։

— Զէ՛, որդեակ, կան փափաքներ որ լաւ են, կան որ գէշ են։ Պէտք է չափ մը դնել մեր փափաքներուն։

— Ի՞նչ է այդ չափը, հայրիկ։

— Այդ չափը մեր կարողութիւնն է։ Լաւ ու վատ գոհութիւն կայ։ Երբոր մարդ անախորժ վիճակի մէջ է, պարտաւոր է այդ վիճակէն ելնելու ջանալ։ Մեր սնունդը, մեր հագուստը և ուրիշ պիտոյքներ կրնան պակաս ըլլալ. այս պակասը լեցնելու համար աշխատանք և խելք պէտք են, և յանցանք չէ աշխատիլ ու խելք ունենալը։ Երբ մարդ շատ կարևոր բաներէ զուրկ է, յանցանք կը

գործէ եթէ իր այս վիճակէն գոհ ըլլայ. այս վրայ ֆոհ�-ՊԷՆ է։ Եթէ հիւանդ ըլլանք ու դեղ չառնենք, եթէ աղտոտ ըլլանք և չմաքրուինք, եթէ պատռած հագուստ հագնինք և չկարկատենք, քիչով գոհ ըլլալու է ըսելով՝ այս վատ գոհութիւն է։ Եթէ մարդիկ սկզբանէ գոհ ըլլային իրենց վիճակէն, հիմա վայրենիներու պէս պիտի ապրէին երկրիս վրայ։

Երբ մարդ քիչ շատ լաւ վիճակի մը կը հասնի և հանգիստ կեանք մը վարելու միջոցներն իր ճարպիկութեամբը ձեռք կը ձգէ, պէտք է որ գոհ լինի։ Այն որ իր լաւ վիճակէն գոհ չի լինիր և աւելի լաւին հասնիլ կ'ուզէ, ֆոհ-ՊԷՆ կ'ըսուի։ Կայ փառասիրութիւն որ գովելի է։ Կայ որ դատապարտելի է։ Այն որ մարդկութեան համար օգտակար բան մը գտնելու կ'աշխատի, գովելի փառասէր է, ինչպէս գիտունը և գտիչը. այն որ չարիք կը հասցունէ, չար է, բայց երկուքն ալ գոհ չեն։

ԳՈՅՆԵՐԸ

Պ. Գալուստ։— Կարապետ, մթթէ գիտե՞ս թէ ինչո՞ւ համար պարտիզպան Թորոսն աղցանները կը կապէ։ Երբոր բաւական մեծցած են։

Կարապետ։— Այո, Պարոն, կը կապէ որ չբարձրանան և հունտ չբռնեն։

Պ. Գ.։ – Մթթէ ա՞յդ է բուն պատճառը։

Կ.։— Զգիտեմ, Պարոն։

Գ.։— Տունկը դեռ չկապուած ի՞նչ գոյն ունի։

Կ.։ – Կանաչ գոյն։

Գ.— Հապա կապուելէն քանի մը օր ետք ի՞նչ գոյն կ՚առնեն ներքին թերթերը։

Կ.— Դեղին գոյն։

Գ.— Անշուշտ կերած ես հազար, կամ վայրի եղերդի աղցանն, որ քիչ մը դառն է, եւ երկայն նեղ թերթեր ունի դեղնագոյն։ Եւ միթէ այս իր բնական գո՞յնն է։

Կ.— Ձեմ գիտեր, Պարոն։

Գ.— Ի բնէ կանաչ է, եւ իր բունն ու թերթիկներն այնքան երկայն չեն։

Կ.— Բայց ի՞նչ կ՚ընեն այդ վիճակին բերելու համար։

Գ.— Ահա ըսեմ։ Բայց գիտես որ տունկերը օդի կարօտ են, անյապաբար օդ կը փնտռեն որ ապրին։ Իսկ եթէ անօդ վայր մը փակուին այնպէս որ միայն օդը ծակէ մը գայ, դէպի այդ բացուածքը կ՚ուղղուին, կ՚երկննան չարունակ մինչեւ որ ամբոր հասնին։ Մառանի մը մէջ գետնախնձորներ դիր, գարնան սկիզբն անոնք կը բողբոջին եւ երկայն բուներ կ՚ունենան որ դէպի լուսամուտը կ՚ուղղուին։ Այդ միջոցը կը գործածեն նաեւ եղերդի թերթիկները երկնցնելու, որ օդին պակասութենէն կը ճերմկին, ինչպէս հազարնալ կապելով։ Տունկ մը մութին մէջ գոյնը կը կորուսէ, կամ անգոյն կը մնայ։ Ոսնած տունկեր կը կոչուին։ Թորոս պարտիզպանն իր աղցանները կը կապէ որպէս զի ճերմկին։ Արտաքին թերթիկները կանաչ կը մնան, վասն զի արեւին ազդեցութիւնը կ՚ընդունին, իսկ ներքիններըը սպիտակ դեղնորակ կը մնան։

Եթէ հրատապ երկիրներ, ինչպէս հասարակածը, երթանք, աւելի փայլուն ճոխ գոյներ պիտի տեսնենք ոչ միայն բոյսերու՝ այլ եւ թռչուններու վրայ, որ կապոյտ ու ծիրանի երանգներով կը չողչողան։ Ընդհակառակն՝ բեւեռներու մօտ գոյները կը մարմրին, հիւսիսային սառոյցներու մէջ կենդանիները սպիտակ են։ Այսպէս լոյսին ներգործութիւնը մեծ է գոյներուն վրայ։ Կարապետ, բաց դեղին գոյն ունի սա երաժշտութեան տետրակիդ ծածկոցը։ Միթէ կանթեղին լոյսով նայա՞ծ ես այդ ծածկոցին։

Կ. – Այո՛, պարոն, կարծես թէ ճերմակ է։

Գ. — Եւ սա կանաչ թուղթն, իրիկունն նոյնպէս կանաչ կ'երեւի։

Կ. – Գրեթէ կապոյտ է։

Գ. - Այս ամենը տարօրինակ կը թուի։ Ահաւասիկ մարմիններ որ գոյն կ'փոխեն զանոնք լուսաւորող լոյսը փոխելով։

Կ. – Ի՞նչպէս, Պարոն, միթէ չարփուշ մը կարմիր չէ՞։

Գ. — Տեսա՞ծ ես երբեմն ծիածանը։

Կ. – Այո՛, Պարոն, երբոր անձրեւէ, եւ անձրեւին կը նայիմ կոնակս արեւին դարձնելով։

Գ. — Միթէ կարծե՞ս թէ երկինքն սքանչելի երանգներով ներկուած ժապաւէն մը կը գտնուի։

Կ. — Չեմ կարծեր։

Գ. – Ուրեմն կան գոյներ անմարմին։ Ահա տես արեւուն մի ճառագայթն որ պատուհանէն կ'անցնի. առ սա յուրանն եւ ջրով լեցուր։ Լա՛ւ։ Սա սպիտակ թուղթը սեղանին վրայ դիր, այն տեղն ուր արեւը կը զարնէ։ Հիմակ թղթին վրայ դիր յուրանն, այնպէս որ ճառագայթն ընդունի։

Բոլոր տղայք. — Ի՞նչ աղուոր գոյներ։

Կ. — Փոքրիկ Ծիածան մ'է։ Բայց ի՞նչպէս կը պատահի այդ։

Գ. – Ուրիշ անգամ պիտի բացատրեմ քեզ այդ երեւոյթը. մտածելու նիւթեր են սոոնք։ Դուք ալ մտածեցէք, տղայք, թերեւս պատճառը գտնէք, եւ այն ժամանակ աւելի ախորժ պիտի զգաք։ Պէտք է ծանր այլ ստոյգ քայլեր առնուլ, շուտ շուտ քալել առանց բան մը տեսնելու, ետ մնալու միջոց մ'է։

ՀՈՎԻՒԸ

Ատենօք Պարսից թագաւոր մը կը ճամբորդէր իր տէրութեան մէջ։ Ցաք օր մը՝ երեկոյեան դէմ անտառ մը հասելով՝ հովիւ մը տեսաւ որ ծառի մը տակ նստած՝ իր սրինգը կը փչէր։ Համեստ և վայելուչ դէմքով պատանի մ'էր։ Թագաւորն անոր մօտ գնաց և երբ սկսաւ հետը խօսիլ, դիտեց որ շատ ուշիմ և արթուն պատանի մ'է։ Ուստի միտքը դրաւ որ զանի իր հետը տանի և դպրոց ղրկելով՝ անոր կրթութիւն տայ։

Հովուին անունն Ապտուլլահ էր։ Թագաւորն իր միտքը անոր յայտնեց և Ապտուլլահ ակամայ արքունիքը գնաց։ Քիչ ատենէն այնչափ յառաջ գնաց իր ուսմանց մէջ որ Ապտուլլահ ամենուն զարմանք պատճառեց։

Թէպէտև թագաւորը իր զաւկին պէս կը սիրէր Ապտուլլահը, բայց պալատի մարդիկ անկէց կը նախանձէին և զինք կը բամբասէին։ Շատ անգամ Ապտուլլահ իր առջի խաղաղ և հանգիստ կեանքը կը փնտռէր։ Եթէ ազատ ըլլար՝ ամեն բան, ոսկի, գոհար, ընտիր հագուստներ, ձիեր և պատիւ պիտի թողուր և իր պարզ հովուի հագուստը հագնելով՝ նորէն իր ոչխարներուն քովը պիտի դառնար։

Թագաւորը մեծ պաշտօններ յանձնեց Ապտուլլահին, և վերջապէս իր գանձապետն ըրաւ։ Ան ատեն իր թշնամիներն աւելի բարկացան և սկսան անոր հորը փորել։ Բայց ինչ որ ըրին չյաջողեցան։ Երբոր Պարսից Շահը մեռաւ, անոր տեղը որդին աթոռը նստաւ։ Բսան տարեկան և անփորձ էր այս նոր թագաւորը։ Գովեստ ու շողոքորթութիւն կը սիրէր։

Ապտուլլահի թշնամիները յարմար առիթ գտան զինք ամբաստանելու թագաւորին առջև։ «Գանձապետ է, ըսին անոր, շատ հարուստ է, հօրդ ձգած գանձը կը կողոպտէ, ընտիր գոհարներ խորած է։ Իր տունը ծածուկ քարկիր սենեակ մը կայ, որ երեք կղպակ ունի։ Ամեն օր այդ սենեակը կ'երթայ կը փակուի որ խորած ոսկիները համրէ։»

Նորատի գահակալն, որ գիւրահաւան էր, հաւատաց այս զրպարտիչ խօսքերուն։ Ուստի առտու մը կանուխ ելաւ յանկարծ Ապտուլլահին տունը գնաց և անոր ըսաւ.

«Ցո՛ւր ինձ գաղտնի սենեկիդ բանալիները. ամէն օր շատ ժամեր այնտեղ կ'անցնես միայնակուկ և բնաւ բարեկամ մը ներս չես առներ. ի՞նչ գանձեր կան անոր մէջ։»

Ապտուլլահ իսկոյն հասկցաւ որ թշնամիները զինքը զրպարտեր են, և ժպտելով բանալիները Շահին տուաւ։

Կամարեայ սենեակը բացին և անոր մէջ գտան հովուի ցուպ մը, պարկ մը և սրինգ մը։

«Ահա նայէ՛, տէր իմ, ըսաւ Ապտուլլահ, իմ առաջին երջանիկ վիճակիս նշանները։ Այս տեղ պահեր եմ զանոնք. շատ անգամ կուգայի տեսնելու, որպէս զի չմոռնամ այն խաղաղ օրերն զոր իմ ոչխարներուս հետ անցուցի։ Ա՛ռ, ետ առ հօրդ բոլոր տուածները, բայց իմ հովուական զգեստս, ցուպս ու սրինգս տուր ինձ։»

Նորատի Շահին սիրտը շարժեցաւ։ Ապտուլլահի զրպարտիչները պատժեց, և խօսք տուաւ անոր որ աւելի բարձր պաշտօններու հասցունէ։ Բայց Ապտուլլահ իր ճոխ զգեստները հանելով նետեց, իր հովուի ցուպն առաւ և թագաւորին մնաս բարև ըսելով՝ գնաց։ Իր կեանքը դաշտերու և անտառներու մէջ անդորրութեամբ անցուց։

ԱՌԱԾՆԵՐ

Անճրեւոտ օրը հաւուն ջուր տուողը շատ կը լինի։ – Դուռը փակ պահիր, հարեւանդ զոռ մի բռնիր։ – Էն ջրիցը վախցիր, որ ոչ դղրչուում է, ոչ խոխոջում։ — Անը ծանր է, քանց մանը։ (ԿՈՒՆԿ)



ՇԱՔԱՐՆ Ի՞ՆՉՊԷՍ ԿԸ ՇԻՆՈՒԻ

Օր մը Պ. Գալուստ իր աշակերտներուն դաս տալու ատեն՝ Պողոս հարցուց.

— Վարժապետ, իրա՞ւ է որ շաքարը մեռած կենդանիներու ոսկորներէն կը շինուի։

Պ. Գալուստ. — Ո՞վ ըսաւ քեզի այդ բանն։

Պողոս. – Պետրոս ըսաւ. անի ալ իր եղբօրմէն իմացեր է։

Պ. Գալուստ. — Եղբայրը կատակ ընել ուզեր է։ Շաքարը չի շինուիր բնաւ ոսկորէ, այլ գայն մաքրելու համար կը գործածուի։ Մտիկ ըրէք՝ ձեզի բացատրեմ։ Գիտէք որ շաքարի համ ունեցող պտուղներ կան, ինչպէս սեխը, խաղողը, թուզը, տանձը։

Պողոս. — Իրաւ է թէ սեխն այնչափ անուշ է որ կարծես թէ շաքարով եփուած է։ Միւս պտուղներն ալ նոյնչափ անուշ են։ Ես շատ կը սիրեմ։

Պ. Գալուստ. — Տղաս, բաւական չէ միայն սիրելը, պէտք է հասու մեր սիրած բանը գիտնանք։ Եթէ այս պտուղները այդչափ անուշ են, ըսել է որ շաքար կը պարունակեն իրենց մէջ, իրենց մսին մէջ։

Պողոս. — Լա՛ւ, ուսկի՞ց կ՚առնեն՝ շաքարը։ Անշուշտ շաքարը տուող մը պիտի ըլլայ։

Պ. Գալուստ. — Այս շաքարը տուողը տունկն է, ծառն է։ Հա՛, տունկն է որ իր արմատներուն միջոցաւ հողէն կը քաղէ,

աղբերէն կը քաղէ, կը պատրաստէ շաքարը, բայց ի՞նչպէս, չգիտենք։ Այս միայն գիտենք որ սեխը, խաղողը պտուղ ըլ-լալէն առաջ՝ փտուն նիւթ մ'էին։ Միայն շաքարն այս աղտեղ կ'երպով չի հասնիր պտուղներու մէջ, այլ եւ ծաղիկներու ամենէն փայլուն հոտերն ու սիրուն գոյներն աղբերու արդիւնքն են։ Տունկին գործն է այս։ Քիչ մը հողով, օդով, ջրով ու արեւով տեսակ տեսակ գոյն ու համ կ'առնէ։ Այսպէս բնական շաքարն ընողը մարդը չէ, հապա տունկը։ Միայն մարդս տունկը կը ժողվէ եւ շաքարն անկից կը հանէ։

Պօղոս։ — Ի՞նչպէս կը հանէ։

Պ. Գալուստ։ – Հիմա պիտի ըսեմ։ Պարտիզի ու արտի մէջ՝ ամեն տունկ, ամեն բոյս քիչ շատ անուշ համ ունին։ Սէգն՝ որ ամենէ վեսակար խոտն է, շատ անուշ արմատ ունի։ Բանճարին անագին արմատն աւելի անուշ է։ Բայց քիչ տունկեր կան որ շատ շաքար ունենան։ Միայն երկու տունկ, որ առատ շաքարեայ հիւթ կը պարունակեն, բաւական են բոլոր աշխարհիս համար շաքար տալու։ Այս տունկերն են շ-ա-ք-ա-ր-ե-ղ-է-ղ-ն ու բանճարը։

Շաքարեղէղն երկու երեք կանգուն բարձր տունկ մ'է, որ ողորկ, չողուն է եւ քաղցր ծուծով լեցուն բուներ ունի։ Առաջ միայն Հնդկաստան կը բուսնէր, հիմա Ափրիկէի եւ Ամերիկայի տաք երկիրներու մէջ ալ կը մշակուի։ Այս տունկէն շաքար հանելու համար՝ բուները կը կտրեն երբ հասունցած են, տերեւները կը քաշեն եւ դատ դատ խուրձեր կապէլէն ետեւ՝ երկու գլաններու տակ կը ճզմեն։ Անկից վազած ջուրը կամ աւիշը եղէղնէ գէր կ'ըսուի։ Ետքը մեծ կաթսաներու մէջ կը դնեն այդ աւիշն ու կը տաքցուցնեն մինչեւ որ օշարակի պէս պնդանայ։ Տաք օշարակին մէջ քիչ մը կիր կը նետեն որ կը մաքրէ եւ աղտոտ մասերը կը գատէ։ Երբ որ բաւական եփի, օշարակը հոգէ կոնաձեւ ամաններու մէջ կը թափեն եւ անոնց սրածայր կողմն՝ որ յարդով ծածկուած ծակ մ'ունի, վար կը դարձնեն։ Ապա կը թողուն որ օշարակը պաղի ու սառի։ Վերջը խիցը կը հանեն որ չպնդացած հեղուկը դուրս

վաղէ։ Այս կերպով իսամ չաքարը կը չինուի, որ դեռ ճերմակ չէ բոլորովին եւ անախորժ համ մ՚ունի։

Պողոս։ — Ի՞նչպէս կը մաքրեն չաքարը։

Պ. Գալուստ։ — Ոսկորով, բայց երբեմն ոսկորով, որ ածուխին պէս հեղուկները կը դաւէ, թունաւորիչ նիւթերը քաշելով։ Ոսկը մը նեաւէ կրակին մէջ, պիտի տեսնես որ քիչ առնէն կը բորբոքի ու կը սեւնայ։ Եթէ երկար ժամանակ կրակին մէջ թողուս ոսկորին ածուխը՝ կ՚սպառի ու բոլորովին ճերմակ կ՚ելլայ։ Իսկ եթէ մոխիրը չը դարձած կրակէն հանես՝ սովորական ածուխի պէս սեւ նիւթ մը կ՚երեւի։ Այս ածուխը կը փչրեն եւ անոր փոշիովն է որ չաքարը կը շրեն։ Ամեն տեսակ ոսկրեղէն՝ խոնանոցէ, սպանդանոցէ, փողոցներէ կը հաւաքեն եւ փուռերու մէջ դնելով ածուխ կը դարձնեն, որ կեղծանական աշուխ կ՚ըսուի։ Այս ածուխն է որ չաքարին սպիտակութիւն կուտայ։

Եղէգի կամ բանճարի խամ չաքարը տաք ջրի մէջ կը հալեցնեն եւ կենդանական ածուխի հետ խառնելով կրակի վրայ կը դնեն, այնպէս որ ածուխը չաքարին դեղնորակ գոյնն ու անախորժ համը կ՚առնէ։ Յետոյ այս խառնուրդը բրդէ հատ կտաւի մէջ կը թափեն որմէ կը սրսկի։ Ածուխը՝ բոլոր աղտեղի նիւթերով՝ տակը կը մնայ եւ զուտ օշարակը կը թորի ակնաքարի պէս վճիտ։ Անկէ եռաբը չաքարեայ հեղուկը կրակով կը գնդանայ եւ սպիտակ գոյն ու խիստ անուշ համ մը կ՚առնէ։

Ֆրանսայի մէջ չաքարը բանճարէն կը հանեն, որ ընդարձակ դաշտերու մէջ կը մշակուի։

Պողոս։ — Բայց սովորաբար մեր դաշտերը բուսած բանճարները կարմիր են։ Ասոնք ալ չաքար ունի՞ն։

Պ. Գալուստ։ Ունին։ միայն սպիտակ բանճարներու մէջ աւելի կայ, ուստի ասոնք աւելի յարգի են քան թէ կարմիրները։ Բանճարին արմատները լաւ մը կը մաքրեն, ապա մեծ ջրէնքերով, որ մեքենաներու միջոցաւ կը դառնան, կը հաշեն եւ տունկին մնան բուրդէ պարկերու մէջ կը ձգեն։ Ելած աւիշն եղէգնաշաքարին պէս կը պատրաստեն։

ԵՐԿՈՒ ԳՐԵԱՆՔ

Դրավաճառի մը սեղանին վրայ՝ մօտ առ մօտ՝ երկու գիրք կային, մին՝ սիկակազմ և սկեզբ՝ նոր լոյս տեսած էր, միւսը պարզապէս թղթակազմ էր։

— Կորի՛ր գնա քովէս, ըսաւ նոր գիրքն իր դրացիին՝ ամօթ պիտի սեպեմ եթէ զիս քեզ հետ տեսնեն, դու որ այսպէս ողորմելի հագուստ մ՚ունիս։

— Կ՚աղաչեմ, ըսաւ թղթակազմ մատեանն, այդքան արհամարհոտ մի ըլլար, ի՞նչ ունիմ՝ այդքան արհամարհելի։ Կարող եմ, առանց պարծենկոտութեան, ըսել որ բաւական շահագրգիռ գիտութեանց տէրն եմ։ Շատ տըպագրութենէ անցած եմ և շատ բարեկամներ ունիմ։ Մինթէ դու կարո՞ղ ես բանով մը պարծիլ, տակաւին նոր ես, և հաւանական չէ որ յաջողութիւն գտնես աշխարհիս մէջ։ Կարելի է որ օր մը նպարավաճառը կամ մսագործն քեզ գնեն որպէս զի իրենց աճառն ու կողիկները պատատեն։

— Ներե՛ս, պատասխանեց սկեզբայլ գիրքն, ի՞նչպէս բերնիդ եկած յիմարութիւնները կը թափես։

— Թոյլ տուէք ինձ ըսելու...։

— Ո՛չ, քեզ մտիկ ընելու առեն չունիմ։

— Քիչ մը համբերէ, խնդրեմ, խոնարհամտութիւն ու համեստութիւնն ամեն ազնիւ մարդու կը վայելեն։»

Երբ այսպէս երկու դրացիներ կը վիճարանէին, գիտուն մը գրատունը կը մտնէ, և պերճաբէն կազմուած գիրքը տեսնելով կը բանայ զայն։ Նորատի բանաստեղծի մը թերթեր քերթուածներու հաւաքածոյ մ՚էր։ Գիտունը շուտ մը տեղը կը դնէ այդ փայլուն գիրքն արհամար-

հոտ նշանով մը և ապա անոր մօտ գանուածը կը բանայ և նիւթերուն ցանկն արտայօրէն աչքէ կ'անցընէ։ Այդ թղթակալը դիրքը կը հաւնի և յօժարամիտ կը դնէ։

Պէտք չէ մարդիկն իրենց արտաքին տեսքէն դատել

ԱՂՈՒԷՍ ԵՒ ԱՌԻՒԾ

Աղուեսին մէկը
Իւր կեանքին մէջը
Առիւծ ըսածը չ' ը տեսած.
Օր մը դիմացն ելաւ յանկարծ,
Խեղճին վախէն յեղին փքրրաւ.
Յետոյ նորէն երբոր տեսաւ,
Սիրտը այնքան չըդողաց:
Երրորդ անգամ որ դէմն ելաւ.
Բոլոր վախը մ կղի գնաց,
Առիւծին հետ երկար խօսքի այ մնաց:

ՔՈՒԻԼՈՎ.

ԲՆԱԳԻՏ ԵՒ ԱՐՀԵՍՏԱՒՈՐ

Բարիզի մէջ մեծ պարտէզ մը կայ ուր տեսակ տեսակ կենդանիներ կը դտնուին։ Այս կենդանիներն ողջ են եւ մասնաւոր տեղեր կը պահուին։ Կայ նաեւ բնական պատմութեան թանգարան մը, որու մէջ մարդու էֆիգիներ կը տեսնուին եւ հոգիներ, այսինքն՝ զմռսուած մարմիններ, որ հազարաւոր տարիներ առաջ ապրած ու մեռած են։

Անգամ մը այս պարտէզը կ՚երթան երկու բարեկամներ, որոց մին ՔՆՈՓԷՈ էր, այսինքն կենդանիներու, տունկերու եւ հանքերու յատկութիւնները գիտէր, եւ միւսն արհեստաւոր մը, այսինքն՝ այս բաներն ինչ օգուտ ունին՝ գիտէր։ Այն օրը չատ տղայք նոյն պարտէզը գացեր էին եւ հետաքրքիր աչքով կը նայէին այլ եւ այլ առարկաներու, թէեւ չատ բաներու անունն ու յատկութիւնը չգիտէին, մանաւանդ կապիկներու վանդակապատ բնակարանին առջեւ կեցած՝ անոնց խաղերը տեսնելով կը ծիծաղէին։

Նոյն միջոցին արհեստաւորը բնագէտին ըսաւ.

— Բարեկամ, դու բնագէտ ես. խնդրեմ նկարագրէ այս կենդանիները. երբ կարգը գայ՝ ես ալ պիտի ըսեմ թէ մարդս անոնցմէ ինչ օգուտ կը քաղէ։ Այսպէս ոչ միայն մեր ժամանակն օգտակար խօսակցութեամբ պիտի անցունենք, այլ եւ այս տղայքն, որ մեր բոլորտիքը կեցեր են, մտիկ պիտի ընեն եւ պիտի օգտին։

Բնագէտ. — Շատ աղէկ, բարեկամ։ Կաթնաբեր (1) կենդանիներէն սկսինք։ Այսպէս կը կոչուին, վասն զի ծիծեր ունին եւ իրենց ձագուկներուն կաթ կուտան։ Ահա այս կապիկներուն ապրելու եղանակը ամենէն հետաքրքրականն է։ Այս տեղ են Քառաձեռնեան (2) այսինքն՝ չորս ձեռք ունեցող կենդանիները, ինչպէս մարդ-կապիկը, օրանկ-ութանը, ոչխար եւ բուն կապիկը։

Արհեստաւոր. — Կան մուրացկաններ որ կապիկներ կը վարժեցնեն այլ եւ այլ ծիծաղելի

(1) Mammifère. (2) Quadrumane.

խաղեր ընելու, փողոցները կը պարացնեն եւ անցորդներէն ասակ կառնեն։



Ինագէտ։ — *Անցեալնք բանիարտորք* (*) *կենդանիներուն կողմը։ Ասոնց մորթը վահանի պէս կարծր է։ Ամենէն մեծերն են ֆիղը, ֆիլ-ֆիլ կամ ֆիլ ֆիլ եւ ռնֆիղիլ-ը։ Վայրի փիղն երկու հարիւր տարիի չափ կ'ապրի, տերեւներ ուտելով կը մնանի. ուրեմն խոտակեր է։ Երեք չորս կանգուն բարձր է. ահագին գլուխ մ'ունի ինչպէս կը տեսնէք, եւ լայն ականջներ, բայց շատ պզտիկ ու վառվռուն աչքեր։ Շատ տիրասէր է փիղն եւ ուշիմ։ Երբ նախատինք մ'ընդունի՝ չի մոռնար. ոխակալ է։ Այն խոզովակի պէս երկար քիթն որ առջեւն մը կը շարժէ եւ որով ասեղ մը անդամ գետնէն կրնայ առնել, պոռնիզ կ'ըսուի։ Բերանին երկու կողմէն գուրս ցցուած երկու ահագին ակռաներ իր ֆոնֆոն են։*

Արիեստաւոր։ — *Այս ժանիքը շատ օգտակար է։ Արհեստաւորները կ'առնեն եւ անով այլ եւ այլ թանկագին եւ սիրուն*

(*) Pachiderme.

բաներ կը չինեն, ինչպէս տուփ, կոճակ, գաւազանի կոթ եւ այլն։ Փիղը Հնդկաստանի մէջ իբրեւ սպասաւոր կը գործածուի, ծանր բեռեր կը կրէ եւ երբեմն որսորդները վրան մնակ չինելով մէջը կը նստին եւ վայրի կենդանիներ որսալու կերթան։

Բնագէտ։ — Այս կարգէն են կինճը, խոզը։

Աբեստաւոր։ — Ճիշդ է։ Որչափ օգտակար է խոզը։ Անոր ամեն մասերը կը գործածուին։ Իր գիսէն ապոխոյ կը շինեն, իր ուսերէն ապոխոյկ։ Իր մորթէն հաստ կաշի կը հանեն, իր կողերը ծոպ կուտան, որու թոյլ տեսակէն օձանելի կ'ընեն։ Իր աղիքը կը գործածուի երգին չինելու։

Բնագէտ։ — Կինճն ալ խոզի կը նմանի, բայց ընտանի չէ։ Բերանին մէջ կարճ ժանիքներ ունի եւ ծառի արմատ ու կաղին կ'ուտէ։

Աբեստաւոր։ — Այս կենդանին խոզին չափ օգտակար չէ։ Որսորդները զանի կը զարնեն երբեմն եւ անոր մէկ քանի մասերը կ'ուտուին։

Բնագէտ։ — Հաւատիկ չկ, որ մինչեւ երեսուն տարի կ'ապրի։ Իր էգը որ ղամբէկ կ'ըսուի եւ իր պզտիկներն որ ֆոքոն կ'ըս-



ուին, իր բոլորտիքն են։ Այս ամենէն ազնիւ ու աղուոր կենդանիին մօտ կը գտնուի համբերող, հեզ ու ժուժկալ էլը մատակ իշուն եւ էշ-կին հետ։ անդին կ'երեւին ջրին ու վոշրոյին։

Արիեատաւոր։ — Զին չատ աւելի օգուտներ ունի մարդուն քան թէ ուրիշ չատ կենդանիներ, վանդի խելացի, քաջ եւ ուժեղ է։ Բեռ կը կրէ, կառք կը քաշէ եւ հեծանելի է։ Իր բաշէն կը շինուին խոզանակ, ջութակի թելեր, մաղ եւ բարձեր։ Տեղ տեղ մինչ ալ կ'ուտեն մարդիկ։ Էշն ալ թէեւ ձիուն չափ աղուոր չէ, բայց անթիւ ծառայութիւններ կը մատուցանէ մարդուն։ Տոկուն, աշխատասէր ու չարքաշ է։ Տասն եւ հինգ տարիի չափ կ'ապրի։ Իր մորթը յարգի է։ անով խարբալ, թմբուկ եւ մագաղաթ կը շինուի։

Բնագէտ։— Հիմա հասանք Որոճող կենդանիներուն, այսինքն անոնք որ կ'որոճան կամ իրենց կերած ու գնձը դրած կերակուրները նորէն բերանին կը բերեն, կը ծամեն ծանր ծանր եւ ապա կ'ուտեն։ Կ-ը որոճողներուն տիպարն է։ ա-բուն ցո-ւլ կ'ըսուի, էգը էրդ եւ փոքրը հ-ը։

Արիեստաւոր. — Կովը ձիուն չափ կարեւոր գործեր կ՚ընէ։ Շատ ուժեղ է. երկիրը հերկելու կը ծառայէ. անընդարար ու համով միս ունի։ Իր մազերով խոծուծներ կընեն, եղջիւրն այլ եւ այլ գործիքներ շինելու կը գործածեն։ Իր մորթով կաշի կը շինեն. արիւնն անգամ չաքարը զտելու կ՚գործածուի։ Իր ոսկորն, իր սմբակը խաշելով՝ սոսինձ կը շինեն։

Բնագէտ. — Կը տեսնենք նոյն տեղը՝ ուրիշ որոճողներ ալ, ինչպէս ուղտ, արուայնի, անալուկ, քոչիը եւ փորոյնը։

Արիեստաւոր. — Այո՛ ուղտը, զոր անապատի բնակիչներն ջամէլ Նաա կ՚անուանեն, Պարսկաստանի կենդանի է, երկու կուզ ունի. մինչդեռ արուայիկն, որ Արաբիոյ եւ Եգիպտոսի կենդանի է, մէկ հատ կուզ ունի։ Յետին ծայր համբերող, սակաւապետ եւ անխոնջ կենդանիներ են եւ մեր կողմերը, մանաւանդ Ափրիկէի մէջ մեծ օգուտ ունին առեւտուրի. բեռներ կը կրեն եւ երկարատեւ ճամբորդութիւններ կ՚ընեն։ Զորս օր առանց ուտելիքի ու ջուրի կրնան դիմանալ, վասն զի իրենց ստամոքսին մէջ պահուած սնունդը քիչ քիչ կը հանեն կը ծամեն։ Ուղտին կաթէն կերակուր կը շինեն, ատուէն՝ զգեստներ եւ չուաններ։

Բնագէտ. — Ա՛ռլ-ը՛ն ի՛նչ երկար վիզ ունի եւ մանր եղջիւրներ. հինգ վեց կանգուն բարձրութիւն ունի։ Անշնաս եւ հեզ կենդանի մ՚է։ Տերեւներով կ՚ապրի եւ խոտ կուտէ։

Արիեստաւոր. — Ափրիկէի ժողովուրդներն անալութին միսը կուտեն, մորթէն երկար փոկեր կը շինուին՝ մեքենական գործիքներու մէջ շարժումը փոխանցելու համար։ Իսկ գոմէշին սպունգի պէս կամ ծակուտ մորթովը՝ զինուորներու սեղանի սպասքը կը շինեն եւ կաթէն ալ պանիր։

Բնագէտ. - Քարայծը բարձր լեռներու սարերը կը գըտնուի։ Շատ դժուարին է որսալը. ձիգ եղջիւրներ ունի ճակտին վրայ՝ ծայրերը կոր։ Մորթէն շատ յարգի կաշի կը շինուի, գիտէ՞ք։ Պէտք չէ մոռնալ նաեւ եղջերուն, այծեամը, վիրը։

Արիեստաւոր. — Եղջերուն արագաշարժ է։ Որսորդները չուներուն օգնութեամբ կը հալածեն եւ կը բռնեն կամ կ՚ըսպաննեն։ Իր եղջիւրներն, որ տարին անգամ մը կ՚ելնան եւ դորէն կը բուսնին, դանակի կոթեր շինելու կը ծառայեն։ Իսկ

որովհար եղջերուն՝ որ Լապոնիա չատ կը գտնուի, ձիու տեղ կը գործածեն բնակիչներն ու անոր մորթով տնակներ կը չինեն։

Բնագէտ։ – Թէեւ ժամանակն ուշ է, քիչ մը ոչխարին ու այծին վրայ ալ խօսինք։ Ընտանի կենդանիներուն մէջ ոչխարն ամենէ հեզ, անմեղ ու անվնաս կենդանին է։ Արուն՝ կոր եղջիւրներ ունի եւ կ'ըսուի ԽՈՅ. եղջիւր չունի էգը եւ կը կոչուի ՀՈՒ. իսկ ոչխարին ձագը ՓՈՐՈՒՆ է։ Խոյը ոչխարին չափ հլու չէ եւ քիչ մը վայրենի բնութիւն ունի։ Երբեմն երկու խոյ իրարու դէմ կ'ելնեն ու ՀԸ ԽԵՐԿԵՆ։ Ահա մերինոս ոչխարն, ի՞նչ աղուոր է։

Արհեստաւոր։ – Իրաւ է որ ոչխարը մեզի բուրդ կուտայ հինելու։ մորթը սպիտակ աղնիւ կաշի կ'ըլլայ, մաքիին կաթով պանիր կը չինուի, բայց մերինոս ոչխարին բուրդը չատ աւելի ընտիր ու առատ է։ Ամեն տարի ոչխարները ՀԸ ԽՈՒՆԷՆ, մայիս ամսուն կը լուան, որպէս զի աղտը մաքրեն։ Անոնց աղիքով ջութակի թելեր կը չինեն, իսկ աղբովը կը պարարտեն դաշտերը։

Բնագէտ։ – Այծը երկար եղջիւրներ ունի եւ ծնօտին վրայ պզտիկ մօրուք մը։ Արուն ՆԻՈՒ կը կոչուի, իսկ ձագը՝ ՈՒԼ (արուն) եւ ՈՏԿ (էգը)։ Տեսակ մը վայրի այծ կայ որ այծոյ կ'ըսուի

Արիեստաւոր։ — Այծին միսը շատ ախորժելի չէ։ ուլինը բաւական համեղ է, մորթը սեկ չինելու կը գործածուի։ Երբեմն այծին մորթով տիկեր ալ կը չինեն եւ անոնց մէջ գինի ու եղ կը դնեն։ Այծին կաթը թեթեւ է ու դիւրամարս, համով այլ քիչ սեր կը պարունակէ եւ անոր կարագն ու պանիրը միջակ են։

Այծին ոլորած մազով զանազան կերպասներ կը չինեն։ Թէպէտ այծերը բարակ ատեւ մ՚ունին իրենց երկայն մազերուն տակ, որ ամեն տարի կը նորոգուի եւ որով ընտիր շալէր (ցփսի) կը չինուի, փոյմէրի շալ անուամբ։ Սակայն Քաշմիրի (Հնդկաստան) այծերն են որ ամենէն ընտիր եւ առատ ատեւ ունին։ Թիպէթի այծերն մուշկ ըսուած խիստ զօրաւոր նիւթն ալ ունին, որ անուշահոտ իւղերու եւ օծանելիքի մէջ կ՚դրուի։

Կովի եղջիւրներու պէս՝ այծինն ալ՝ այլ եւ այլ բաներ չինելու կը գործածուի։ Տաք ջրով եղջիւրը կը կակուղցնեն։ Կատրները կրնան հալիլ ու թափուիլ, սանտրեր, կոթեր ու կոճակներ չինուիլ։

ԱՐԹՈՒՆ ՄԻՏՔ

Կան մարդիկ որ վտանգ կը փնտռեն իրենց քաջութիւնը ցոյց տալու համար։ Այս յիմարութիւն է։ Երբոր մարդս յանկարծ վտանգի մը հանդիպի՝ այն ատեն միայն պարտաւոր է անչափօրէն եւ արթուն միտքով անոր առջեւն առնուլ։ Ձկայ մարդ մ՚որ իր կ՚նաց մէջ պատահումով

վտանգի չհանդիպի։ Մեր զգեստը կամ մեր բնակած տունը կրնայ յանկարծ կրակ առնել, կրնայ ըլլալ որ ծովը իյնանք, կամ երբ կառքով ճամբորդենք, ձին կրնայ խրտչիլ և արագ վազել։ Այսպիսի վտանգներու մէջ՝ եթէ մարդ զգոյշ և արթուն չըլլայ, շատ վնաս կրնայ կրել և մինչև անգամ իր կեանքը կորսնցուցնել։

Կան մարդիկ որ վտանգի ատեն այնքան կը շփոթին որ չեն կրնար ինքզինքին պաշտպանել և ազատումի միջոց մը գտնել։ Այսպէս վտանգը կրնայ աւելնալ և կորուստ պատճառել։ Պէտք է հանդարտ ու պաղարիւն ըլլալ որպէս զի ճար ճարակ մը գտնուի։ Պէտք է որ միտքն արթուն և անշփոթ մնայ։

Եթէ մէկուն զգեստը կրակ առնէ, պէտք չէ որ օգնութիւն կանչելու համար վազվզէ։ Եթէ ոտքի վրայ կեցնայ կամ վազէ՝ զգեստն աւելի շուտով կը բռնկի և բոլոր մարմինը կ՚այրի։ Աւելի աղէկ է գետինը պառկիլ և թաւալիլ, վասն զի այն ատեն կրակը չբռնկիր, եթէ հաստ ծածկոցով մը կամ օթոցով մը փաթթուի, անմիջապէս կրակը կը մարի։ Երբոր մէկն այրող տուն մը մտնէ՝ պէտք չէ որ չիտակ կանգուն քայէ, եթէ տունը մուխով լեցուն է, վասն զի այն ատեն կրնայ խղդուիլ։ Աւելի աղէկ է ծունկի վրայ կամ չորս ոտքով քաշել, ինչու որ յատակին մօտ օդը շատ աւելի մաքուր է։

Եթէ մէկը լողալ չգիտէ և ծովը իյնայ, պէտք չէ որ ջրին մէջ թաւալի, վասն զի այն ատեն խորը կը սուզի։ Պէտք է կոբէլի եղանչին չափ հանդարտ ձեռք ու ֆոտերը օդով լեցուն պահել, իր բերանը ջրէն վեր բռնելու ջանալով։ Մարդուս մարմինը ջրէն քիչ մ՚աւելի թեթև է, և անշուշտ անոր երեսը կ՚ելնէ, եթէ չտատանի և սաստիկ շարժումներ չընէ։

Եթէ թեթև կառքի մը մէջ գտնուելով՝ ձին կատղի և գլուխն առնէ երթայ, պէտք չէ որ շուտ մը կառքէն վար նետուինք, այլ պէտք է հանդարտ մնալ, եթէ կարելի է, և մոռնալ թէ վտանգէ ազատելու ամենէ լաւ միջոցն ո՞րն է։ Շատ հաւանական է որ ձին ինքնին կանգ առնէ, այն ատեն վտանգ մը չպատահիր։ Եթէ կառքէն վար իջնել հարկ ըլլայ, պէտք է թեթև մը գետինը իջնել դէպի առջևի կողմը։ Կարևոր է գիտնալ որ եթէ կառքին գացած հակառակ կողմը յատկենք՝ մենք ալ դէպի յառաջ կը մղուինք և չենք կրնար ինքզինքնիս բռնել։ Ուստի՝ կառքէն վար իջնելու ատեն՝ պէտք է կառքին դիմած կողմը բռնելով նետուիլ, որպէս զի շարժումը մեզ ուժով գետինը չզարնէ։

ՈՐԴԻԱՆԱՆ ՍԷՐ

Լիւդիոյ թագաւորը՝ Կրեսոս, որդի մ՚ունէր Ատիս անուն, ի ծնէ համր էր։ Հայրն բնութեան այս թերութիւնը բուժելու համար ամեն զոհողութիւն ըրած էր, բայց բժիշկներուն բոլոր գիտութիւնը չէր կրցած դարման մը բերել։

Երբ Լիւդիոյ մայրաքաղաքը՝ Սարտիկէ, յարձակմամբ Պարսիկներն առին, Ատիս տեսաւ որ զինուոր մը սուրը ձեռքը հօրը վրայ կը վազէր որ զանի սպաննէ։ Բոլորովին ահաբեկ և սրտադող՝ իր հօրը վտանգը տեսնելով, կը մոռնայ իր բնական տկարութիւնն, բերանը կ՚բանայ և իր բոլոր ոյժն կ՚ամփոփէ գոչելու համար։ Ի՞նչ հրաշքներ կը գործէ որդիական գորովն, իր լեզուն կապող զօգերն

յանկարծ կը քակուին, այս խոսքերն կ'արտասանէ ուժ-գին։

— Զի՛նուոր, խնայէ հօրս, նոյն ինքն Կրեսոսն է, թա-գաւորն է։

Այսպէս նորատի Ատիս իր հօրը կեանքը կ'ազատէ և իր որդիական սիրոյն վարձքը լիապէս կ'ընդունի, վասն զի՝ իր բոլոր կենացը մէջ դաղափարները յայտնելու թանկագին ձիրքը կ'ստանայ։

ԽԱՀՈՒԷ

Դիտե՞ս ինչ է Խահուէն, կը հարցնէր Մեսրոպ իր Սահակ ընկերին, երբոր դասարանէն ելնելով՝ մարգարան իջան խա-ղալու համար։

Սահակ. — Սե՛ւ ջուր է։

Մեսրոպ. — Սե՛ւ ջուր։ Այդ պատասխա՞ն է, բարեկամ։ Ամեն սեւ ջուր կը խմուի՞, միթէ մելանն ալ սեւ ջուր չէ՞։

Սահակ. — Ի՞նչ փոյթ։

Մեսրոպ. — Ես ալ այդպէս կ'ըսէի, բայց անցեալ օր նա-խաճաշիկ ընելու ատենս մայրս խահուէ դրաւ կաթին մէջ։ Հետաքրքիր եղայ հասկնալու թէ ի՞նչ է խահուէն։ Մօրս հար-ցուցի, չկրցաւ բացատրել, բայց հայրս երկար բարակ պատ-մութիւն մ'ըրաւ ինձ խահուէին վրայ։ կ'ուզես որ միտքս ճնացածը քեզի պատմեմ։

Սահակ. — Լա՛ւ, պատմէ նայիմ, բայց կարճ կապէ։ կ'ու-զեմ խաղալ։

Մեսրոպ. - Առենօք տէվրիշ մը կայ եղեր։ Այս տէվրիշը բոլոր գիշեր աղօթելու համար կը փափաքէր որ ընաւ չքնա-նայ։ Ուստի մարգարէի մը կ'աղաչէ որ զինք գիշերն արթո՛ն

պահէ։ Մարգարէն գիշեր մը տէվրիշին երազին մէջ կ'երեւի եւ անոր կ'ըսէ որ երթայ հովիւ մը գտնէ եւ անորմէ դարման խնդրէ։ Հովիւը տէվրիշին կ'ըսէ թէ իր այծերը բոլոր գիշերը չեն քնանար, խենդի պէս կը վազվզեն ու կը ցատկրտեն՝ երբոր ծառատունկի մը պտուղները կ'ուտեն։ Եւ այս ծառատունկն անոր ցցուց, որ խահուէի տունկ մ'էր։ Տէվրիշը նոյն գիշերը այդ պտուղը խաչեց, անոր ջուրը խմեց եւ բնաւ չը քնացաւ։ Այս գիւտն ուրիշ տէվրիշներու ալ իմացուց որ նոյնպէս խահուէ սկսան խմել եւ այսպէս քիչ քիչ ամեն մարդ այս ըմպելին խմելու սովորեր է։

Սահակ։ – Իրա՞ւ, խահուէն քո՞ւն կը փախցնէ։

Մեսրոպ։ – Չէ՛, բայց տկար կաղմուածք ունեցող մարդերու վրայ աւելի կ'ազդէ։ Զօրացուցիչ ըմպելի մ'է խահուէն, որ մարսողութեան կ'օգնէ։

Սահակ։ – Բայց խահուէն ի՞նչ է։

Մեսրոպ։ – Խնձորի ծառի նման տունկ մ'է, որ Կ-ՖԵՆԷ կ'ըսուի։ Զուտաձեւ, փայլուն տերեւներ ունի։ Ծաղիկներն, որ յասմիկի նման են, անուշ հոտ մը կը հանեն։ Երբոր պտուղ կ'ելլան, առաջ կարմիր են եւ ապա կը սեւնան։ Այս պտուղներն երկու կուտ ունին, մէկ կողմը սափակ է, միւս կողմը կլոր եւ իրարու կպած են։ Այս կուտերն են խահուէի հատիկներն, որոց գոյնը ճերմկէկ կանանչ է։ Երբոր հողէ տապակի մէջ կը խորովեն չագանակի գոյն կ'առնու։

Ամենէն առաջ խահուէն Հապէշստանէն եկած է Կ-Ֆ-գաւառին մէջ։ Շատ առատ կը գտնուի, եւ իր անունն ալ այս երկրէն առած պիտի ըլլայ։ Շատ դարեր եաք՝ կոփենին Արաբիա տարին մշակելու, եւ այս երկրին տաք կլիման շատ յարմար է խահուէի մշակութեան համար։ Ամենէն լաւ խահուէն Մ-Կ-ՅԷՆն է։ ուրիշ տաք երկիրներու մէջ ալ խահուէն կ'մշակեն։

Հոլանտացիք Եւրոպա բերին այս տունկը։ Խահուէն այսպէս կ'պատրաստեն խմելու համար։ Հատիկները տապակի մը կամ կլոր աղօրիի մէջ դնելով կ'խորովեն, այնպէս որ ախորժելի հոտ մը հանէ եւ չագանակի գոյն մ'առնու։ Եթէ շատ

խորովի՛ կ՚սեւնայ եւ համը կ՚փախի։ Վերջը տաք տաք սանդի մը մէջ կը ծեծեն որ բարակ փոշի կը դառնայ եւ ապա ջրով կ՚եփեն ու կ՚խմեն։ Միայն թէ պէտք չէ շատ եփել խաղուէն, ինչու որ այն ատեն իր անուշաբոյր համը կը կորսուցնէ։

ՓՈՓՈՐԻՆ

Յովհաննէս իր Իսկուհի քրոջը հետ դաշտը ելաւ որպէս զի հասկեր ժողվէ։ Օդը շատ տաք էր, դժուարաւ շունչ կ՚առնէին, ինչու որ արեւուն տապէն օդն այնքան բարակցած էր որ մարդ դժուարաւ շունչ կ՚առնուր։

Յովհաննէս և Իսկուհի գործի կ՚սկսին և այնքան կը յոգնին որ քրտինքն իրենց ճակտէն կը վազէ։ Քիչ մը կ՚անկ կ՚առնուն որ հանգչին և իրենց քաղած հասկերը համբեն։

— Նայէ, եղբայրս, սա ամպերն, ըսաւ Իսկուհի, որչա՛փ սև են։ Ինչուշտ անձրև պիտի գայ։ Ահա փայլակ մը, երկու հատ, երեք հատ։ Ա՜հ, կարծեմ թէ պիտի թրջուինք, փոթորիկ պիտի փրթի, հապա թէ կայծակը մեր գլխուն վրայ իջնէ, ի՞նչ պիտի ընենք։

— Իսկուհի, մի՛ վախնար։ Միայն չարագործ մարդիկ կայծակէն կը սոսկան։ Գէշութիւն չենք ըներ մենք, ինչու որ երկնից թռչուններուն պէս մեր տիրոջ ցոյց տուած դաշտին մէջ կը փնտռենք ցորենն՝ որ մեզ պիտի անուշանէ այս ձմեռ։

— Բայց ես միշտ կը վախնամ։ Ա՛խ, նորէն լոյս մը տեսայ որ աչքս առաւ։ Հրային օձի պէս երկինքին երեսը կը սողայ։ Երթանք, Յովհաննէս, փախչինք։

— Այսպէս շուտ մի՛ վազեր, քոյրիկ, ինչու որ օդը շարժելով կայծակին ճամբայ կը բանաս և այն ատեն կրնայ ըլլալ որ մեր գլխուն իջնէ։

— Շատ աղէկ, չեմ վազեր, եղբայր։ Երթանք կամացուկ մը սա ծառին տակ պատսպարուինք, ահա, կը նայի՞ս վարը խոշոր կաղնի մը կայ . . . հոն երթանք։

— Այդ ծառը մեզ պիտի պատսպարէ անշուշտ, բայց չպիտի պաշտպանէ կայծակին դէմ, ինչու որ կաղնիներն, դանգակատուններուն և շանթարգելներուն պէս, կայծակն իրենց կը քաշեն, շատ բարձր ըլլալով։ Սա լեռին դարվարին վրայ ծառ մը կայ որ երկու կտոր եղաւ և կայծակէն այրեցաւ. անոր տակ մարդ մը նստած էր, նոյն միջոցին մարդն անմիջապէս մեռաւ։ Ուստի աւելի աղէկ է որ ցած ծառի մը տակ նստինք։

— Ա՛խ, նորէն երկինքը կ՚որոտայ Յովհաննէս, շուտով փախչինք։

— Խսկուհի, մտիկ ըրէ ինձ։ Աղէկ բան է զգոյշ ըլլալ, բայց վախն օգուտ չունի։ Երբ փայլակը կ՚շողայ, վտանգն անցած է. ինչու որ կայծակն որ նոյն միջոցին կը սահի և աւելի շուտ կը վազէ՝ արդէն իջած և զարնելիքն զարկած է։

— Ուրեմն որոտումն ահռելի ու վտանգաւոր բան մը չէ՞։

— Ամենևին ոչ. որովհետև երբ օդը դատարկ տեղ մը ուժով մտնէ և կամ երբ նոյն տեղէն բուռն կերպով քշուի՝ պայթում կամ աղմուկ մը կը լսուի որոտման նման։ Երբոր հովայիր բամբուշտ մը ճզմենք ի՞նչ կ՚ըլլայ, պայթում մը կը լսուի որ հրացանի պայթումին կը նմանի, այնպէս չէ՞, բայց չսպաններ, այլ երբեմն կրակն է սպաննողը։

— Իրաւ է. բայց փայլակն որ աչքս կ՚առնէ, որոտու-

մը որ ականջիս մէջ կը գոռայ, ահ ու դողի մէջ կը ձգեն դիս։ Ի՞նչ բանէ առաջ կուգան այս զարմանալի նշանները, այս երևոյթները, Յովհաննէս։

— Քոյրիկ, տեղը չէ այդ երևոյթներուն վրայ խօսելու։ Դառնանք տունը և մեր հօրը հարցնենք, այն ինձմէ աւելի աղէկ կրնայ բացատրել այս բաները։

— Քոյր և եղբայր տուն դարձան։ Այն ատեն պարոն Յովսէփ իր զաւակները բովը առաւ և սկսաւ խօսիլ ԵԼԷԿՏՐԱԿԱՆԱՆՈՒԹԻՒՆ վրայ։

ԵԼԵԿՏՐԱԿԱՆԱՆՈՒԹԻՒՆ

Յովսէփ։— Զաւակներս, կը նայիմ որ շատ այլայլեր էք։ Բաներ կան աշխարհիս մէջ որ մեզի հրաշալի կ'երևին ու վախ կը պատճառեն։ Թէ որ այդ բաներուն ի՞նչ ըլլալը գիտնանք, այն ատեն մեր վախը կը փարատի, եւ կը նայինք որ բնական պատճառներ ունին։

Հիմակ կը հարցնէք ինձ թէ ո՞սկից յառաջ կուգան փայլակը ու որոտումը։ Մեսրոպ ասոնց վրայ քիչ մը ծանօթութիւն ունի։ այս բաւական չէ։ Ես աւելի երկար պիտի խօսիմ, բայց շատ պարզ կերպով որ հասկնաք։ Ինչու որ ամենէն դժուար խնդիրները կարելի է պարզել։

Շատ դարեր առաջ մարդիկ չգիտէին թէ որոտումն ի՞նչ է։ Կը կարծէին որ կառքեր կ'քալեն երկինքն եւ կ'որոտան։ Անշուշտ գիտէք ի՛նչ է դեղին ռոմը, որով ծխափայտի Բերոնոց, մանեակ, ապարանջան կը շինեն։ Հին ծառերու ոտտինէն կը գոյանայ որ հարիւրաւոր դարեր առաջ կ'ուռէին։ Սաթը կը գտնուի Պալթիկ ծովուն, Էլպա եւ Վիսթուլա գետերուն եզերքը։ Թէոփրաստոս անուն յոյն փիլիսոփայ մը, որ Քրիստոսէ երեք հարիւր տարի առաջ կ'ապրէր, կը խօսի սաթին վրայ զոր Յոյներն Էլէկտրոն կ'անուանէին։ Եթէ բուրդէ կեր-

պասով կամ կատուի մորթով սաթը չփէք եւ եթէ այդ սաթին դերձանի կամ յարդի կամ փետուրի կտոր մը մօտեցնէք, պիտի տեսնէք որ սաթը զանոնք իրեն պիտի քաշէ։ Կան ուրիշ նիւթեր ալ որ երբոր չփուին սաթին պէս՝ թեթեւ բաներ իրենց կը ձգեն։ Այս ձգողութեան պատճառները փնտռելով գիտուն մարդիկ նոր գիւտեր ըրին եւ կայծակին գաղտնիքը գտան։ Էլէկտրական անունէն էլեկտրականութիւն անուանեցին նիւթերուն այդ յատկութիւնը։

Մեսրոպ, եթէ մետաքսէ թելէ մը կտոր մը թուղթ կախես կամ շամբուկի միջուկի գնդիկ մը, եւ եթէ անոր մօտեցնես կնքամոմ մը՝ լաւ մը չփելէն ետեւ՝ պիտի տեսնես որ թուղթը կնքամոմին կողմը պիտի թռի եւ քիչ մը ատեն անոր պիտի փակչի։ Վերջը պիտի թողու կնքամոմին ու պիտի քաշուի, եթէ կնքամոմն թղթին մօտեցնես։ Նոյն բանը պիտի պատահի թէ որ ապակիէ սրուակ մը չփելէն ետքը՝ թղթին տանիս փորձես։ Մէկ ձեւդ սրուակն առ եւ միւս ձեւդ կնքամոմը, եւ երկուքն ալ թղթին մօտեցուր։ Թուղթը կնքամոմէն ապակիին եւ ապակիէն կնքամոմին կողմը պիտի թռի չարունակ։

Իսկուհի։ – Ի՞նչ զարմանալի բան։ միթէ թուղթը հոգի՞ ունի, ի՞նչպէս կը շարժի։

Յովսէփ։ — Զէ, աղջիկս։ գիտուններն այս շարժումներուն պատճառը փնտռեցին եւ վերջապէս Ֆրանքլին, որու վարքն արդէ ձեզի պատմեր եմ, գաղտնիքը գտաւ։

Մեսրոպ։ – Ի՞նչ է այդ գաղտնիքը։

Յովսէփ։ — Ամեն մարմին անտեսանելի բան մը ունի, տաքութեան պէս. էլեկտրականութիւնն ալ տաքութեան մէկ ձեւն է։ Ամեն մարմին քիչ շատ կը պարունակէ այս էլեկտրականութենէն։ Երբոր շատ տաքնաք, կը նեղանաք եւ կ՚ուզէք զովանալ, երբոր մսիք՝ կ՚ուզէք տաքնալ։ Ձեր մարմինն այն ատեն հանգիստ կ՚ըլլայ երբ որ պէտք եղածին չափ ջերմութիւն ունենայ։ Նոյն բանը կ՚պատահի էլեկտրականութիւն ունեցող մարմիններուն։ Այն մարմինն որ բաւական ունի՝ հանդարտ կը կենայ, այն որ շատ աւելի ունի կամ շատ քիչ՝

կ'նեղուի, մին ասելի միանգամայն ունենալուն։ Այս պատճառաւ էլեկտրականութեան երկու տարբեր անուն տուին գիտունները, այն մարմինն որ շատ ունի դրական էլեկտրականութեան անուանեցին, այն որ բաւական չունի՝ բացասական էլեկտրականութեան անուանեցին։ Երբոր ապակին չփենք իր ունեցած էլեկտրականութիւնը կը թափի եւ բացասական վիճակը կ'մտնէ. մէկը էլեկտրական հոսանուտէն ազատիլ կ'ուզէ, միւսն իր կորուսածն առնուլ կ'ուզէ եթէ ապակին ու ռետինը զիմացէ զիմաց դնենք՝ իրարու վրայ պիտի յարձակին, ռետինն՝ էլեկտրականութիւնն առնելու եւ ապակին տալու համար։ Վերջը երբոր իրարու այսպէս փոխ կուտան հոսանուտը՝ կ'հանդարտին։

Այսպէս երբոր երկու մարմին նոյն կերպով էլեկտրականացած են, այսինքն երկուքն ալ դրական կամ երկուքն ալ բացասական, այն ատեն զիրար կը վանեն. իսկ թէ որ երկու մարմինները տարբեր կերպով էլեկտրականացած են, այսինքն մէկը դրական եւ միւսը բացասական, այն ատեն իրարու կը մօտենան, մէկին ունեցած աւելի էլեկտրական հոսանուտը միւսին կ'անցնի եւ այն ատեն չչուկ մը եւ կայծ մը կ'ելնէ։

Մեսրոպ. — Բայց թուղթը կնքամոմին կամ ապակիին մօտենալուն՝ ոչ չչուկ կը հանէ եւ ոչ կայծ։

Յոխէփ. — Ինչու որ այդ առարկաները պզտիկ են։ Եթէ մեծ առարկայ մը չփուի՝ այն ատեն որոտումի ու կայծակի նման աղմուկ եւ նշոյլ կ'ելնէ որ կրնայ մարդս ցնցել եւ մինչեւ անգամ սպաննել, եթէ ապակին մեծ ու զօրաւոր ըլլայ։

Մեսրոպ. — Հիմակ ամպերը ի՞նչպէս կ'որոտան։

Յոխէփ. — Դիւրին է հասկնալ։ Երբ ամպերն իրարու կը չփուին, կամ օդին խաւերն իրարու կամ հողին ու ամպերուն կը չփուին, այս ամպերը կ'էլեկտրոնան, ոմանք դրական եւ ոմանք բացասական։ Եթէ դրական էլեկտրականացած ամպը՝ բացասական էլեկտրականացած ամպի մը հանդիպի, այս երկու ամպերն իրար կը քաշեն, մէկին աւելցուկ էլեկտրականութիւնը միւսին կ'անցի եւ նոյն միջոցին փայլակ ու որոտում կ'ելնէ։ Հասկցա՞ք հիմայ կայծակին պատճառը։

Մեսրոպ. — Բաւական հասկցայ։

* * *

Իսկուհի. – Հապա կարկուտն ուսկի՞ց յառաջ կուգայ։

Յովսէփ. – Փոթորկի ատեն միայն կը պատահի կարկուտը, սառոյցի մանր կտորներէ կը շինուի մթնոլորտին բարձր կողմերը։ Այս մանր սառոյցներն իրարու կը զպչին եւ սառոյցի գնդիկներ դառնալով՝ երկիրը չինկած՝ օդին մէջ կը շրջին։ Երկու էլեկտրականացած ամպի մէջ մնալով կարկուտները մէկէն միւսին կ՚անցնին, ինչպէս կ՚անցնի թղթի կտորն ապակիէն կնքամոմին եւ կնքամոմէն ապակիին։

Իսկուհի. – Արդեօք կայծակէն պահպանուելու ճար մը չկա՞յ։

Յովսէփ. – Կայ, աղջիկս, եւ գտնողն է Ֆրանքլին, որու վրայ արդէն խօսեր եմ ձեզի։ Այս է շառնորթէլը։

Իսկուհի. – Ի՞նչ բան է այդ։

Յովսէփ. – Շանթարգելն երկաթէ երկար սլաքներէ ձեւացած է, որք չէնքերու վրայ կը դրուին որպէս զի կայծակին առաջքն առնուն։

Մեսրոպ. – Այդ սլաքներն մեզ ի՞նչպէս կը պահպանեն կայծակէն։

Յովսէփ. – Կան մարմիններ որ էլեկտրական հոսանուտը կը հաղորդեն, այնպէս որ եթէ էլեկտրականանան՝ անմիջապէս իրենց էլեկտրական հոսանուտը կը հաղորդեն մեծ արագութեամբ, այսինքն մէկ երկվայրկեանի մէջ էլեկտրականութիւնն 30 էն 40 հազար մղոն կը վազէ։ Այս հաղորդիչ առարկաներն են մեր մարմինը, մետաղները, ածուխը, ջուրը եւ այլն։ Կան նաեւ առարկաներ որ էլեկտրական հոսանուտ չեն հաղորդեր այլ իրենց կը պահեն, ինչպէս ապակին, ռետինը, մետաքսը, օդը եւ այլն։ Էլեկտրականացած կլոր ու տափակ մարմնէ մը էլեկտրական հոսանուտը չի փախչիր, բայց եթէ սուր ծայր մը ունենայ՝ անկից կը հոսի էլեկտրականութիւնը։ Ֆրանքլին գիտէր այս բանս, ուստի ըսեր էր որ եթէ օդի մէջ սրածայր մետաղներ կանգնին՝ հաղորդակցութիւնը հողին

հետ կարելով, այն ատեն այդ սլաքները փոթորկալի ամպէ կ'ելեկտրականանան եւ կայծեր կ'արձակեն։

Յովսէփ։ — Այո՛, փոթորկալի օր մը Ֆրանքլին դաշտը գնաց թռուցիկով մը՝ որու կցեր էր մետաղեայ սլաք մը։ Թռուցիկը թողուց եւ քիչ մը եռքը տեսաւ որ չուանին վարի ծայրէն, զոր տեղ մը կապեր էր, կայծեր կ'ելնեն։

Մեսրոպ։ — Շանթարգելն ի՞նչպէս կը շինեն։

Յովսէփ։ — Երկայն սրածայր մետաղեայ սլաք մը կը դնեն շէնքին վրայ՝ անոր միւս ծայրը հողին մէջ խօթելով։ Երբոր փոթորկալի ամպ մը սլաքին ծայրէն անցնի, այդ ամպը բացասապէս ելեկտրականացած ըլլալով՝ շանթարգելն երկրէն առած դրական ելեկտրական հոսանուտն անոր կը հաղորդէ։ ասոր հակառակ՝ եթէ ամպը դրապէս ելեկտրականացած է՝ իր ելեկտրական հոսանուտը քիչ քիչ շանթարգելին ծայրը կը թափէ եւ շանթարգելն ալ այդ հոսանուտը հողին տակը կ'անցունէ։ Այսպէս հաւասարակշռութիւն հաստատուելով ամպերուն երեսը, որ շանթարգելին վրայէն կ'անցնին, շէնքերը կայծակէ կը պահպանուին։ Պէտք է զգուշանալ՝ փոթորկի ատեն՝ շանթարգելի դպչելէ, ինչու որ նոյն միջոցին կայծակը սլաքին վրայ անտեսանելի կրնայ մնալ եւ մարդուս մարմնէն անցնիլ ու զանի շանթահարել։ Այս պատճառաւ վտանգաւոր է, փոթորկի ատեն, երթալ ծառի տակ նստիլ, ինչու որ ծառերն, ինչպէս ամեն սրածայր առարկաներ, կայծակը իրենց կը քաշեն շանթարգելներուն պէս։

ՆԱՀԱՆԴ ՏԱՐԻ

Ի՞նչու համար փետրուար ամիսն երեք տարի շարունակ 28 օր է և չորրորդ տարին 29 օր։

Ահաւասիկ պատճառը։ Յամանակ մը քաղաքային տարին 365 օր կը պարունակէր, բայց երկիրն արեւուն շուրջն 365 օրուան և գրեթէ ¼ աւուր մէջ կը դառնայ,

այնպէս որ չորս տարուան մէջ մէկ օրուան տարբերութիւն յառաջ կուգար։

Ցուլիոս Կեսար, Հռովմէական տէրութեան պետն, Եգիպտոսէն Սոսիկէն անուն աստղագէտ մը բերել տալով խնդրեց որ օրացոյցին այս սխալն ուղղէ, վասն զի եթէ այս մի օրուան տարբերութիւնը արեգակնային ու քաղաքային տարիներու մէջ շարունակէր մեծ չփոթութիւններ պիտի ծագէին ժամանակագրական հաշիւներու մէջ։ Աստղագէտը խնդիրը կատարեց և այս օրացուցական կարգադրութիւնն Քրիստոսի 45 թուականին սկսաւ և Ցուլեան տոմար կոչուեցաւ։

Այս թուականէն ի վեր՝ չորս տարին մի անգամ՝ օր մը կ'աւելցուի քաղաքային տարւոյն վրայ։ Այդ օրը փետրուար ամսուն վերջը կը դրուի և Ն-ՀՆԶ -արի կը կոչուի, իսկ միւս տարիները սովորական տարիներ կը կոչուին։

* * *

Սակայն այս տոմարական կարգադրութիւնը բոլորովին ճիշտ չէր։ Վասն զի Ցուլեան տարին (365 օր 6 ժամ) արեգակնային տարիէն 10 վայրկեան և 11 բոպէ աւելի երկար էր, այնպէս որ 1583ին 10 օրուան աստղաբաշխական տարբերութիւն գոյացած էր։ Ուստի՝ Հռովմի Գրիգոր ԺԳ. Պապը, հմուտ աստղագէտներու խորհուրդով, այդ տարբերութիւնն ուղղեց և Գրէգորեան ըսուած տոմարը հաստատեց 1583էն 10 յաւելուածական օրերը դեղչելով, այնպէս որ Հոկտեմբերի չորսն Հոկտեմբեր 15 եղաւ, և ըստ այնմ ամիսները կը շարունակուին։ Ահա այս 11 օրուան տարբերութիւնն է որ կը բաժնէ Ցուլեան տոմարը Գրէգորեանէն զոր Ռուսերն, Յոյներն ու Հայերը չեն ընդունած տակաւին, և աստի է իրենց տոմարին 13 աւուր տարբերութիւնն։

ԲԵՆԱԳԻՏ ԵՒ ԱՐՀԵՍՏԱՒՈՐ

Այս երկու մարդիկ նորէն իրարու հանդիպեցան պարտիզին մէջ եւ սկսան խօսակցիլ, մինչդեռ մէկ քանի տղայք մոտիկ կ'ընէին։

Բենագիտ. — *Այսօր չատ մը կարմնարներ կենդանիներ ունինք տեսնելու։ Ահա մնակերներն*[1]։ *Ուժեղ ու կատաղի կենդանի-*



ներ են, որ մենակ մռով կ'ապրին։ Ա-խ-ն այնքան ոյժ ունի որ մէկ թաթի հարուածով կարող է ձի մը սատակել։ Վ-ֆ-ն աւելի ահարկու է։ Ը-ն-խ-ն ու յ-վ-ն ալ անվնաս կենդանիներ չեն։ Առաջինը բծաւոր ու չերտաւոր մորթ մը ունի. քիչ անգամ մարդու վրայ կը յարձակի. երկրորդն ալ բաւական վայրագ է։ Լ-ռ-ն ալ չատ սրակն է։ Բոլոր այս կենդանիները, որ կատուին չատ կը նմանին, մուխին մէջ կը տեսնեն։ Անդին կ'երեւի Ք-ր-ինն, գիշերային կենդանի մը, որ քարայրներու մէջ կը բնակի եւ մինչեւ անգամ գերեզմանները կը մտնէ որ դիակներ դանէ եւ ուտէ։ Ապա կուգայ արջը . . . :

Արիստաւոր. — *Արջը որու ճարպը կը գործածուի օծանելիք չինելու համար։*

---

[1] Carnassiers

Բնագէտ. — Նոյնպէս է՞այն, որ երբ անօթեւնայ մինչեւ անգամ տըզոց ու մարդերու վրայ կը յարձակի. ընտ՞այն, ը՞ն, որու այլ եւ այլ տեսակներն կան, ինչպէս ոչկը, ֆոտֆոն, որոակոն քարակը, ֆոձն եւ։

Այս տեղ որսի շուներ չկան. այս միջոցին իրենց շնչարկեն մէջ փակուած են.

Արիստաւոր. — Բայց ես կը տեսնեմ ֆանդոֆէոը, ջրլոնը, քէրի հնդոյն, ճերմակ ոտքը, կոնը, որոց մուշտակը շատ յարգի է, նոյնպէս վայրի ոտքը, զոր որսորդները կը գործածեն ճագարները խեղդել տալու համար։ Բէշկ մշկոյն, որ Ափրիկէ կը գտնուի, այնպիսի նիւթ մը կ՝արտադրէ որ թափանցող հոտ մ՝ունի։ Հոլանտացիք այս կենդանին կը բռնեն կը մեռցնեն եւ անոր մուշկն առնելով ծախեն։

Բնագէտ. – Հիմակ անցնինք կրծող[1] կենդանիներուն, որոց առջեւի ակռաները շատ երկար են արմատներ եւ ուրիշ նիւթեր կրծելու համար։ Ասոնք են մ՝ուկն, մ՝ուկինը, խոզուկն՝ որ ոզնիի պէս խայթիչներ ունի . . . ։

---

[1] Rongeurs

Աբիեատաւոր. — Նոյնպէս կրծող ոչխարը, նապատակը, ծ-ֆարը, որու մորթը չատ կը փնտռուի, եւ կարէն՝ որու մազերէն թաղիք եւ գլխարկ կը չինեն։

Բնագէտ. — Որովհետեւ կուղրին վրայ կը խօսիս՝ պէտք է բսելնեաւ որ չատ ճարտար կենդանի մ'է, ինչու որ փայտէ անտակներ կը չինէ ջրի մէջ։ Մուտմ խուտմ կը բնակին եւ երբեմն բազմաթիւ հիւղեր կը կանգնեն։ Իրենց ակռայով մանր ծառեր կը կտրեն. անոնց տերեւներն ու կեղեւները կը հանեն ուտելու համար եւ փայտը գետին մէջ կը նետեն։ Յետոյ իրենց պոչովը կը ծեփեն։ Այս հիւղերը 2 – 3 կանգուն երկայնութիւն կ'ունենան՝ երկու դատիկոնովատորին դատիկոնին մէջ պաչար կը պահեն, վերինին մէջ կը բնակին։

Հնդկի ծ-ֆարը զարմանալի աչք ունի որ չի կրնար արեւուն լոյսը տանիլ։ Իսկ առնէտն, աղուն հաւկին պէս, ձմեռը խորունկ կը քնանայ։

Միջատակերներն[1] են երբոր՝ որ հողին տակը ծակեր

---

[1] Insectivores.

բանալով կը բնակի, Ինուէնտ, ընդ՝ որ պահուրտելու համար կեսկլոր կ՚ելլայ իր խայթիչներով ծածկուած մորթին մէջ։ Անասարներն ակռայ չունին, հրշունկերդ պէս, որ իր երկար լեզուն մրջիւնոցներուն մէջ կ՚խօթէ եւ չատ մը մրջիւններ կ՚կլլէ։

Արմենտարոս. — Զեզի կը թողում նկարագրել այն կենդանիներն որ ճարտարութեան մէջ ծանօթ չեն։

Ինագէտ. — Պարկաւոր[1] կենդանիներ կ՚ըսուին անոնք որ իրենց պորտին վրայ պարկ մը ունին, որու մէջ կը դնեն իրենց ձագերն երբոր

փախչիլ ուզեն, ինչպէս են պարկաւոր ոչխարն։ Երկակենցաղներն

[1] Marsupiaux.

թէ հողի եւ թէ ջուրի մէջ կ՝ապրին։ ասոնք են գրրոը, գայրոգրրէն, որ իրիկունները միաձայն ճիկ մը կը հանեն, արջնագրրն որ շատ ագեղ է, եւ վերջապէս սալամանդրը։

Ամիւատաւոր։ — Դորտին միաբ փափուկ եւ շատ յարգի է։

Բնագէտ։ — Ջոնապիւները[1] տեսակ մը ձեռքեր ունին որոց երկար մատները մաշկով մը միացած են թեւի նման, ինչպէս չղջիկ, սալէն եւ ընկոյզն։ Չղջիկները գիշերային կենդանիներ են, ցերեկը կը քնանան եւ իրիկունը քարայրներէն դուրս կ՝ելնեն որպէս զի թռչելով՝ ծիծեռնիկներուն պէս՝ միջատներ կլլեն։

Ամիւատաւոր։ — Անոնք որ բոյսեր կ՝ուտեն՝ մարգուս անուշդ կ՝ըլլան։

Բնագէտ։ — Կիտազգիներն[2] ալ կաթնասուներ են, թէեւ ձուկերուն կը նմանին եւ անոնց պէս ջրին մէջ կ՝ապրին։ Անոնցմէ գլուխ մը ունին ինչպէս կեռ, որ 25 կանգունի չափ

[1] Chiroptères [2] Cétacés

երկայն է, եւ որու բերանը 6 կանգուն բացուածք ունի. նոյնպէս կիտազգիներ են վէլոպոյնը, ծովինը, գեղէնը եւ ֆոֆոնը, ինչպէս նաեւ ղնոյնը, որու գլուխն չան գլխուն կը նմանի, եւ ֆոկն՝ որ ծովահարդ ալ կ'ըսուի։

Աբեստաւոր. — Շանաձկան ակռաներուն ոսկրը յարգի է կ'ըսեն։ Կիտին կգակին վրայ եղած մօրուքն, որով ջուր կ'առնէ կուտայ եւ մանր ձուկերը շարունակ կը կլլէ, ։։ը։ էի պուէ-նէրու- կը գործածուի, նոյնպէս եւ հովանոցի եւ հրացանի սլաքներ ու խարազան չինելու կը ծառայէ։ Հիւսիսային ծովու սառոյցներուն մէջ կ'որսան կէտը ակիչներու միջոցաւ եւ որսորդները միշտ կ'զգուշանան անոր պոչին դպչելու, վասն զի եթէ անով հարուած տայ՝ իրենց նաւը կրնայ խորտակել։ Կէտ մը միայն կրնայ 120 տակառ եղ տալ։ Այս եղը կերակուրի համար չի գործածուիր, այլ աճառագործներուն կը ծառայէ։

Ա Ղ

Ինչո՞ւ համար կ'աղեն միսը, կը հարցնէր փոքրիկ Զարուհին իր մօրը։

Մայր. — Որպէս զի համով ըլլայ, աղջիկս։ Գիտես որ երբոր կերակուրը համ չունենայ՝ անլի է կ'ըսենք, այսինքն՝ աղը քիչ է։ Աղն ամեն կերակուրի մէջ կը դրուի, շատ օգտակար համեմ է։ Միսն աղելով երկար ատեն կը դիմանայ։ Ապուխտ և երշիկ շինելու համար ալ աղ պէտք է, վասն զի առանց աղի՝ միսը չի պահուիր, կը հոտի։ Նաւերուն մէջ կարելի չէ միշտ թարմ միս ունենալ։ Ուստի երկար ճամբորդութեանց ժամանակ նաւորդներն աղած միս, աղած տառեխ ու այլ և այլ ձուկեր կը պահեն և կ'ուտեն։ Վաճառականները ծովէն

հեռու քաղաքներ և գիւղեր կը տանին ծախելու համար տեսակ տեսակ աղած ձուկեր։

Զարուհի։ — Իրաւ, օգտակար բան է աղն, բայց շատ աժան է։

Մայր։ — Բանի մը օգտակարութիւնն իր գնոյն վրայ պէտք չէ դատել։ Կան բաներ որ շատ սուղ են՝ բայց այնչափ օգտակար չեն որչափ աղը, երկաթը և ածուխը։ Ադամանդը շատ բարձր գին ունի, թէև մարդու ճշմարիտ օգուտ մը չունի։ Տինակ ապակին կը կտրէ, ինչպէս որ կը կտրեն ապակեզործները։ Աղն՝ ինչպէս ամեն կարևոր նիւթերը, շատ առատ է։

Զարուհի։ — Ո՞ւսկից կը հանեն աղը։

Մայր։ — Ծովէն ու բովերէ։ Ծովը՝ որ երկրագունտին երեք քառորդը բռնած է, անբաւ աղ կը պարունակէ։ Ամեն մէկ խորանարդ կանգուն ծովու ջուրն՝ երեսուն հազարակրամ աղ կը պարունակէ։ Եթէ բոլոր ովկիանոսները չոգիանալով չորնային, ելած աղը բաւական պիտի ըլլար բոլոր երկիրը ծածկել 10 կանգուն թանձրութեամբ։

Զարուհի։ — Ծովու մէջ աղն ի՞նչ օգուտ ունի։

Մայր։ — Ջրերը մաքուր կը պահէ, թէև շարունակ ծովեղերեայ քաղաքներու աղտեղութիւնը ծովը կը թափեն։

Զարուհի։ — Ի՞նչպէս կը շինեն աղը։

Մայր։ — Ծովեղրի վրայ շիտակ տեղ մը կ՚ընտրեն աղագործներն և քիչ մը խորունկ այլ ընդարձակ աւազաններ կը փորեն, որ ոչ երեսունէ կ՚ըսուին։ Յետոյ ծովուն ջուրը՝ ջրանցքի միջոցաւ՝ աւազաններուն մէջ կը բերեն. մանաւանդ ամառը կ՚ընեն այս գործողութիւնն։ Աղի խրամին հաղորդակցութիւնը ծովուն հետ կը կտրեն և կը թողուն որ արևուն տաքութենէն քիչ քիչ չոգիանայ,

աղն ականակիտ կեղևի մը պէս կը մնայ։ Վերջը տրմու-
խով կը հաւաքեն, կը դիզեն աղն որպէս զի լեղիութիւնը
կորսուի։ Եթէ պնակի մը մէջ ծովու ջուր լեցնես և արե-
ւուն դնես որ քանի մ'օր մնայ, ճիշտ աղի խրամին մէջ
եղածը պիտի տեսնես։ Ջուրը չոգի պիտի ըլլայ արևուն
տապէն և պնակին մէջ մինակ աղը պիտի մնայ։ Իսկ
եթէ այդ աղը նորէն ջրով հալեցնես և քանի մ'անգամ
չորցնես՝ ընտիր աղ կ'ունենաս։

Այսպէս անհատնում աղ կայ ծովը։ Այս բաւական
չէ. երկրիս խորն ալ աղ կը գտնուի զոր քարհատով կը
կտրեն։ Այս աղը կ'անուանեն բուռ աղ կամ աղաճաք։ Ծո-
վու աղէն գոյնովը միայն կը տարբերի. շատ անգամ
գեղին կամ կարմրիկէկ է և երբեմն մանիշակագոյն, կա-
պոյտ կամ կանաչ։ Եթէ պէտք ըլլայ գործածել՝ ջրով
անոր գոյնը կը հանեն։

Զարուհի. — Ո՞ւր կը գտնուի աղուճակը։

Մայր. — Աշխարհիս ամէն կողմը կայ։ Բայց ամենէն
նշանաւորն է յեհատանի մէջ Քրաքովիայի շրջակայքը
գտնուածը։ Գրեթէ չորս հարիւր կանգուն խորունկ,
քառասուն մղոն լայն և երկու հարիւր մղոն երկայն։ Այս
ստորերկրեայ աղին բովը տեսակ մը քաղաք է մեծ կա-
մարներով և փողոցներով։ Բոլորն ալ աղ է։ Աղահան
գործաւորներ անոր մէջ բնակարաններ և մինչև անգամ
մատուռ ունին։ Շատեր այն բովին մէջ կը ծնին ու կը
մեռնին, և երբէք արևուն լոյսը տեսած չեն։ Բազմաթիւ
ճրագներ կը վառեն այս աղեայ քաղաքին մէջ և անոնց
լոյսն ապի պատերուն վրայ զարնելով՝ ծիածանի պէս կը
փայլի։



ԱՍՈՒՊՆԵՐ

Ողջոյ գիշերներ՝ երբ անամպ է երկինքն, աստղերուն նման մանր նշոյլներ սակայն կը տեսնուին, որ բաւական ընդարձակ անջրպետ մը կարելէն ետեւ՝ յանկարծ կը մարին: Սովորաբար՝ տաս վայրկեանի մէջ հատ մը կ'երեւի, իսկ աւելի շատ՝ Օգոստոս և Նոյեմբեր ամիսներուն մէջ: Աստղագէտներ գիտած են որ այդ մանր կայծերն 40 էն մինչեւ 60 հազարամէթր բարձրութեան մէջ կը նշմարուին, հետեւապէս՝ երկիրս շրջապատող մթնոլորտին մէջ՝ (ամբողջ բարձ. գրեթէ 400 հազարամէթր) այս երեւոյթներն ոչ-ոչ կը կրկնուին կամ ---դեր։ Կան մարդիկ որ կարծեն թէ այդ փոքրիկ կայծերն աստղիկներ են որ կ'անհետանան. ուրիշներ կը հաւատան թէ մարդու մը մահուան նշանն է, կարծիքներ՝ որ բոլորովին անհիմն են։

Բայց այս լոյսերուն երեւման պատճառն ի՞նչ է։ Բազմաթիւ աստղեր, մոլորակներուն պէս, կ'դառնան արեւուն շուրջն, անոնց պէս մութ են և այնքան մանր որ չեն տեսնուիր։ Երբ որ այդ մանր մարմիններէն մին երկրին կը մօտենայ, դէպ ի երկիր կը քաշուի և վար կ'ընկնի։ այս սառոյց է որ երկինքէն շատ բարեր վարելկը գլորին։

Արդէն գիտէք որ շփումով մարմինները կը տաքնան։ Եթէ տանիքի մը բարձունքէն շուան մը բռնելով վար սահիք իջնէք, ձեր ձեռքը կայրի։ Վայրենի մարդիկ կրակ կը վառեն արագ արագ շփելով երկու չոր փայտ իրարու հետ։ Երբոր հարկ լինի շատ ծանր մարմիններ ուրիշ դիւրաշարժ մարմիններու վրայ սահեցնել, ջրով կը թրջեն որպէս զի կրակ չառնեն։

Այսպէս երբ նորաշէն նաւ մը ծովն իջեցուն՝ ջրով ողողուած փայտեայ հաստոցի մը վրայ կը սահի նաւն, սակայն միշտ մուխ և երբեմն բոց կ՚ելնէ։ Անջրպետի մէջ տարածուած փոքր մարմիններ մեծ արագութեամբ կը շարժին։ Երբ երկրիս մթնոլորտը մտնեն այնքան ուժգին կը շփուին օդին որ կը տաքնան, կայրին, հրաշէկ երկաթի կտորի մը պէս։

Ժամանակ մը շատ մարդիկ կը հաւատային վհուկներուն, որ աստղագուշակ (astrologue) կը կոչուէին և գիտուն համբաւ ունէին, իբր թէ աստղերը դիտելով երկրիս վրայ պատահելիք դէպքերը կը գուշակէին։ Երբ իշխան մը ծնէր պալատին աստղագուշակն կը նայէր թէ՝ որ մոլորակը՝ իշխանին ծննդեան ժամուն տեսանելի էր, եւ անոր ապագայ կեանքը կը գուշակէր։ Մարդկային գոռողութիւնն կ՚ախորժէր տեսնել իր ճակատագիրն երկնային մարմիններու հետ կապուած։ Բայց գիտութիւնն այս ամեն խարկանքը ցրուեց, երկրին ճշմարիտ տեղը նշանակեց, ցոյց տուաւ որ հողագունտը սովորական մոլորակ մ՚էր կամ արբանեակ մը, որ արեւուն բոլորտիքը կը շրջէր իր մօտակայ և համանման մոլորակներու հետ։ Աստղերն ալ, մերինին նման, ուրիշ արեւներ են, որոնց շուրջն ուրիշ մոլորակներ կը դառնան, ինչպէս մենք կը դառնանք մեր արեւուն շուրջը։

Մինչև հիմակ կան մարդիկ որ կը կարծեն թէ գիսաւորի մը տեսքն աշխարհիս կործանման նշանն է, և ահարեկ կը դիտեն լուսնի և արեւու խաւարումն և հրաշէններ կ՚արձակեն որ չարիքն փարատեն։

Օդաքարին գալով՝ տեղ տեղ գտնուած ու քննուած են։ Զանազան մետաղներէ և գլխաւորապէս երկաթէ բաղկացած են։

Ե Զ

Զարուհի. — Բացատրէ՛ ինձ մայր իմ, եղն ի՞նչպէս կը շինեն։

Մայր. — Այլի՛կս, տեսակ տեսակ եղեր կան որ զանազան հունտերէ և պտուղներէ կը հանուին։ Ամենէն յարգին, եղերու ամենապատուականն յեղն է, այսինքն ձիթենիի պտուղին եղն է։ Այս ընտիր ծառն որ հին ժամանակ խաղաղութեան նշան էր, տաք երկիրներ կ'աճի։ Շատ բարձր չէ, քիչ ճիւղ ու տերև ունի, որ ձմեռը չի թափիր։ Ամառն անոր վրայ կը թառին ճպուռներն և շարունակ կը ՀՀՀեն։

Ձիթենիին պտուղն նախ կանանչ է ու շատ անախորժ։ Յետոյ խաղողը կամ ազոխը թթու է, տանձը տրտիպ է, խնձորը բարկ՝ երբ չեն հասած, բայց կանանչ ձիթապտուղին համը շատ աւելի թթու է։

Զարուհի. — Այդպիսի թթու պտուղէ մը ի՞նչպէս անուշ եղ կ'ելնէ։

Մայր. — Ճշմարիտը շատ հնարագէտ մարդ մ'է եղեր այն որ առաջին անգամ այդ տհաս պտուղէն այնպէս անուշ եղ հաներ է։ Երբոր դուրտը կոխէ՝ ձիթապտուղը կը կարմրի և ապա կը սևնայ։ Այն ատեն ձիթապտուղին մաշկը կը խորշոմի, միսը կը հասուննայ, դառնութիւնը կ'երթայ և եղով կը լեցուի։ Այն ատեն մարդիկ կամ կանայք պտուղը կը հնձեն։ Ձիթապտուղը աղօրին կը տանին և ականաքարով ճզմելէն ետև՝ պաղ ջրով կը ճնշեն և առաջին անգամ ամենէն -ընտիր- յեղը կը հանեն։ Երկրորդ անգամ՝ տաք ջրով լուալէն ետև՝ կը ճնշեն և երկրորդ կարգի ձէթ կ'ստանան։ Վերջապէս շեռը կ'առնեն և փտած ու որդնոտած ձիթապտուղներով -կը

խառնեն և երբ-որդ անգամ ճնշելով կը հանեն հասարակ ձէթն որ կերակուրի համար չի գործածուիր, այլ վառելու և աճառ շինելու համար։

Զարդուհի — Բայց չհասած ձիթապտուղը չուտուիր։

Մայր — Անշուշտ. թէ՛ սեւն և թէ՛ կանանչը կ՚աղեն, քիչ մը եղ կը սրսկեն և ամանի մը մէջ դնելով կը պահեն։ Քանի մ՚օր ետքը՝ կ՚ուտեն։ Կանանչ ձիթապտուղը աւելի յարգ ունի քան թէ սեւը։ Թէև ծառի վրայ շատ տոիպ է, բայց միջոց մը կայ անուշցնելու — այս է տըն. կաղն (potasse)։ Վառարանէն մաքուր մոխիր կ՚առնեն, ջրի մէջ կը դնեն քիչ մը կիր խառնելով։ Այս ջուրը կանանչ ձիթապտուղին դառնութիւնը կը կորսնցնէ։ Բաւական է միայն ձիթապտուղն ամանէն հանել և մաքուր ջրի մէջ ստէպ լուալ այնչափ որ իր առջի աղուր կանանչ գոյնն առնու։ Վերջապէս աղի ջրի մէջ դնելով ձիթապտուղը կը պահպանեն։

Կան ուրիշ պտուղներ ալ, որոց չէ թէ միսկն այլ հունտերէն կամ սերմերէն եղ կը հանեն, ինչպէս են ընկոյզը, շուշմայն, խաչխաչը, չողղամը, կանեփը և փուչը։ Զոր ընկոյզ մը կոտրէ, միջուկն ա՛ռ և ճրագին մոտեցուր, պիտի տեսնես որ աղուր ճերմակ բոց մը պիտի հանէ, որու պատճառն է իւղոտ հիւթ մը որ տաքութենէ կը կաթի։ Ուրեմն ընկոյզին մէջ եղ կայ։ Այդ եղը հանելու համար ընկոյզին միջուկը կը ճնշեն։ Նորը համով է և տեղ տեղ կերակուրի կը գործածեն, բայց հիւանդալով դառն համ մը կ՚առնէ։ Շուշմայն տունկ մ՚է որ Եգիպտոս և Ամերիկա կը մշակուի։ Անոր հատիկները շատ անուշ եղ կուտան, որ քիչ մը ձէթին կը մօտենայ։ Առ հասարակ կը գործածուի խմորեղէնի համար։ Խաչխաչի գլուխներն բարակ հունտեր կը պարունակեն և եղ մը կուտան որ յարգի է։

Զարուհի. — Խաչխաչի գլուխները քա՞ն կը բերեն:

Մայր. — Իրաւ է։ Երբոր խաչխաչին հատիկները կը թափին՝ հունտերը պարունակող փոճոկին վրայ բարակ ճեղք մը կը բանան, ուսկից վաղած հիւթը կը հաւաքեն։ Ահա այս հիւթն է որ «ՓԷՌ» կ'ըսուի. թուխ գոյն, ծանր հոտ և դառն համ ունի. Ափիոնը՝ մասնաւորապէս Հնդկաստանէն և փոքր-Ասիայէն կ'ելնէ. այս առունկը եթէ շատ քիչ քանակութեամբ նաև առնուի, քուն կը բերէ. իսկ եթէ մարդ ոսպի չափ անգամ ուտէ կը մեռնի։

ԾՈՑԱՔ

Տղայ, տե՛ս սա թռչունը, թեւեր ունի, բայց չի թռիր, ահա ձուկ մ'ալ որ լուղակներ ունի, բայց չլողար։ Մեր մատներ անպիտան արարածներ չե՞ն, Աստուծոյ տուածը չեն գործածեր։

Ծոյլ տղան ալ այս թռչունին ու ձուկին կը նմանի։

Տե՛ս սա աղօրեպանն ալ, իր աղօրին հովն կը դառնայ, բայց ցորեն չի դներ որ աղայ։

Ի՞նչ կ'ըսես, անմիտ չէ՞ այս աղօրեպանը։ Աւելի լաւ պիտի ընէր թէ որ աղօրին խորտակէր և անոր հանած անօգուտ աղմուկը չի լսէր։

Ծո՛յլ տղայ, թէ որ դու ալ մարդիդ ու սրտիդ աղալուքան մը չտաս, այն անմիտ աղօրեպանին պիտի նմանիս, քու միտքդ այն աղօրին է որ պարապ տեղը կը դառնայ ու կը մաշի։ Քեզի ձայն կուտայ այն որ անունդ կ'ուզէ, տուր անոր այդ անունդը։

Եթէ տեսնէիր մարդ մ՚որ նաւակով բաց ծովը գտնուէր, բայց չուզէր թի քաշել, ի՞նչ պիտի ըսէիր։

— Այս մարդը չուզեր ցամաք հասնիլ ու փոթորիկէն ազատիլ, պիտի խղդուի։

Ո՛վ որ չաշխատիր, այսինքն չթիավարեր, փոթորիկէն կը բռնուի և կ՚ընկղմի։

ԹՈՒՂԹ

Մ՚քան աղուոր է այս թուղթը, սպիտակ ու թեթև, որու վրայ գրիչը գիրեր կը գրոշմէ, որ անջինջ կը մնան։ Ի՞նչ բանէ կը շինուի թուղթը։ Հաւատալի չերևիր, բայց այս իրաւ է որ այդ սիրուն ու սահուն առարկան քուրջերէ շինուած է։

Աղքատ մարդիկ, որ հնահաւաք կը կոչուին, այդ քուրջերը կը հաւաքեն ակիչաւոր գաւազանի մը միջոցաւ փողոցներէն, և կողովի մը մէջ կը նետեն։ Ապա գործատունը կը փոխադրուին, այլ և այլ տեսակի կը բաժնուին բանուոր կիներու ձեռօք և աղտոտութիւնները լուացքով մաքրուելէ ետև կարերը կը քակուին։

Քուրջերը զանազան գործիքներու միջոցաւ կը թելատեն մոխրաջրի մէջ, +ԷՔ ըսուած կազով կը ճերմկցնեն, կերպ մը զանգուածի կը վերածեն և ապա՝ գործաւորները ցանցակերպ կաղապարի միջոցաւ թոյլ զանգուածն առնելով անոնց ուզած թղթի թերթերու ձևը կուտան, որ դեռ խոնաւ են, և որ հետզհետէ բրդեայ թաղիքներու մէջ դրուելով՝ կուտակ մը կը շինեն և մամլոյ տակ կը ճնշեն որ ջուրը քամուի։ Այս տեսակ թղթեր գիրքերու

տպագրութեան և պատկերներու համար կը գործածուին, իսկ գրի թղթեր սոսնձելով կը պատրաստուին, որպէս զի չպատռին։

Այս նպատակաւ՝ թղթի ծրարը կը թաթխեն եղկ ջրի մէջ, որ դ-ղէղանուն ալն կամ մածուած ըսուած սոսինձը կը պարունակէ։ Թերթերը կը բանան, կը դասեն երբ լաւ մը թրջուած են, թաղիքի վրայ կը դնեն կը ճնշեն որ չորնան։ Վերջը՝ թաղիքէն թղթին վրայ ծնացած ասուիի մանր մասերը կը մաքրեն և հինգ հարիւր թերթերով պատասներ կը կազմեն։

Սակայն հիմակ թուղթը կաղապարով չեն շիներ, այլ մեքենայի մը միջոցաւ, որ յատկապէս անվերջ մետաղեայ կտաւէ մը կը բաղկանայ՝ հորիզոնական երկու գլաններու վրայ անշարժ։ Թղթի գանգուածն այդ կտաւին վրայ կը հասնի, ծակտիքներէն կը քամուի՝ և կտաւին հետ շարունակ կը շարժի։ Քանի քամուի՝ գանգուածը կը պնդանայ և թերթի ձև կ'առնու, և ի վերջէ՝ թաղիքով պատած երկու գլաններէ անցնելով աւելի ևս կը չորնայ։ Ապա թուղթը թմբուկի մը բոլորտիքը կը փաթթուի, ուսկից քաշելով կը կտրեն պէտք եղած մեծութեամբ։

Մ'քենայով շինուած թուղթն շինուելէն ետև չեն սոսնձեր, այլ գանգուածին մէջ կը նետեն՝ որով անթափանց կը մնայ։

Լաւագոյն թուղթը կը շինուի կանեփի և վուշի քրքջերով։ Բամպակ-ով շինուածը թոյլ կը լինի։ Թուղթը կը շինեն նաև յարդով, կեղևով, գայլուկով, եղիճով, մոլոշով, կնիւնով, և զանազան բոյսերով։

ԳԵՐԱՆԻՆ ՎՐԱՅ ԳԱՄԵՐ

Երկրագործ մը գաւակ մ՚ունէր, որուն անունն էր Օհան։ Անհոգ և թեթեւամիտ տղայ մ՚էր։ Շատ անգամ հայրը զինքը կը խրատէր, բայց անօգուտ տեղը։ Վերջապէս օր մը զատի կանչեց ու ըսաւ.

— Մտիկ ըրէ, տղաս, մոռացեցի որ երբ չարութիւն մ՚ընես՝ այս գերանին վրայ գամ մը պիտի գամեմ, երբոր խելօք կենաս՝ գամ մը պիտի հանեմ։ Այսպէս գերանը տեսակ մը գիրք կ՚ըլլայ քեզի համար. անոր վրայ վարքդ պիտի տեսնաս։

Երկրագործն ըսածին պէս ըրաւ։ Տղան չարութիւնն աւելցուց. հայրն ամէն օր մէկ հատ և երբեմն մէկ քանի հատ կը գամէր գերանին վրայ։ Շատ քիչ անգամ գերանին վրայէն գամ մը կը հանէր։

Վերջապէս Օհան գիտեց որ գամերը ծածկեր են գերանն և սկսաւ ամչնալ այնչափ սխալմունքին վրայ, Ուստի միտքը դրաւ իր վարմունքը շտկելու։ Այն օրէն այնքան խելօք ու հլու ընթացք մը բռնեց որ հայրը շատ մը գամեր հանեց։ Եկաւ ժամանակ մը որ գերանին վրայի բոլոր գամերէն հատ մը միայն մնաց։ Այն ատեն երկրագործը կանչեց Օհանն և անոր ըսաւ.

— Տղա՛ս, նայէ՛. այս վերջին գամն է և այս ալ հիմա պիտի հանեմ նեռեմ։ Գոհ չե՞ս։

Օհան գերանին դարձուց աչքը, բայց ուրախութիւն յայտնելու տեղ. ինչպէս որ հայրը կը յուսար, սկսաւ լալ։

— Ի՞նչ կայ, ինչո՞ւ կուլաս, հարցուց հայրը։ Ես կը կարծէի թէ մեծ ուրախութիւն պիտի զգաս տեսնելով որ բոլոր գամերն անհետացեր են։

— Այո՛, ըսաւ Օհան հեծկլտալով, գամերն անհետացեր են, բայց ծակերը կը մնան։

ԹԵՐԹԵՐ ՊԱՆԱՍՈՒԹԻՒՆՆԵՐ

Մի՛ ըսեր բնաւ, թեթեւ պակասութիւն մ՚է այս, ժամանակով կ՚անցնի, վասն զի թեթեւ պակասութիւն մը կրնայ ծանր պակասութեան, մեղութեան տանիլ։

Բան մը չէ ակռային վրայ սև կէտ մը. թէ որ շուտ մը ատամնաբուժին չցուցնես, այն ակռան կ՚աւրուի, և եթէ անգամ մը ակռայ մը փտաի և քաշել չտաս, միւս ակռաներուն ալ կը վնասէ։

Երկրագործին հունձքին այնքան վնաս բերող կենդանիներն որո՞նք են. փիղե՞րն են, ո՛չ, այլ մարախներն ու թրթուրներն՝ որ հասկերը կ՚ուտեն երբոր նոր կը բուսնին, իսկ երբոր հասուննան՝ միջատները դանոնք կը կրծեն։

Ո՞վ կ՚ուզէ անցնել իր կեանքը ճանճի մը հետ որ շարունակ կը թղթայ։ Անիւց մ՚անգամ այդ թղթոտ մէն կը կատպի։ Քու թեթեւ պակասութիւնդ այդ ճանճն է։ Ինչո՞ւ համար չես վանեար զայն։

Նեսէ փտած ոսկոր մը թարմ ոսկորներով լեցուն կողովի մը մէջ՝ բոլորն ալ կ՚աւրուին մէկ գիշերուան մէջ։ Ուրեմն պէտք չէ անհոգ ըլլալ թեթեւ պակասութեան մը վրայ։ Բան մը չէ կաթիլ մը ջուրը, բայց կատպի ծովը ջրի կաթիլներու հաւաքածոյ մ՚է։

Թեթեւ պակասութիւն մ՚անցաւոր չէ։ Եթէ պզտիկ փուշ մ՚անգամ առուծին ոտքը մտնէ, այդ ահարկու կենդանին չի կրնար քալել. ինչպէս որ՝ եթէ մուճակիդ մէջ աւազի հատիկ մը դանուի՝ չի թողուր որ հանգիստ քալես։

Ամենէ մեծ նաւը կրնայ ընկղմիլ եթէ իր կողին վրայ

մանր ծակ մը բացուի։ Թեթև պակասութիւն մը՝ շատ անգամ անոր համար վտանգաւոր է որ պզտիկ ու անվնաս կ'երևի։

Ներողամիտ եղիր բարեկամիդ թեթև պակասութիւններուն, եթէ չես կարող ուղղել, բայց քու պակասութիւններդ անհաշտ աչքով դիտէ և ուղղելու ջանա։ Ժանգն ամենէ ընտիր պողովատը կը խանգարէ։

ՍՈՂՈՒՆՆԵՐ

Բնագէտ։ — Սողունները կենդանիներ են որ կը սողան կա՛մ քալելով մողէսին պէս, կամ գետինը քսուելով օձին պէս։ Սողունները չորս կարգի կը բաժնուին։ կրէ՝ներ, մողէ՝ներ, ֆ՝րոթեր եւ օձեր։



Կրիայն սովորաբար անոյշ կամ աղի ջուրերու եզերքը կ'ապրի։ Իր թաթերն այնպէս չինուած են որ կրնայ լողալ։ Աւազի վրայ հաւկիթներ կ'ածէ որ արեւուն տաքութենէն կը բացուին։ Կրիային մարմինն երկու պատեանի մէջ փակուած է որք ծակեր ունին եւ անկից կ'անցնի գլուխը, չորս թաթերն եւ պոչը։

Աքիլեսաւոր։ — Կրիային կոնակի պատեանով խեղդ կը չինուի։ Դրսի կողմն կը հանեն ու եռացող ջրով կը կակուղցընեն։ Երբոր տաք ջրով պատեանը կը թուլնայ, անով այլ եւ այլ արկղիկներ, սանտրեր, տուփեր կը չինեն։ Կան նաեւ տեսակ մը կրիաներ որոնց միսով պատուական ապուր կ'եփեն։ Ամերիկայի կրիայն ամենէն ընտիրն է ուտելու համար։

Բնագէտ. — Մողէսի կարգէն է կոկոդիլոսը։ Տեսակները չատ են։ Ամերիկա, Գանգէսի (Հնդկաստան) եւ Նեղոսի մէջ (Եգիպտոս) կը գտնուին։ Երբեմն այս կենդանին մինչեւ 10 կանգուն երկայնութիւն կ'ունենայ։ Սոսկալի կոկորդ մը ունի եւ սուր ակռաներ որք միշտ բաց են արիւնոտ աչքերուն պէս։ Ցամաքի վրայ ծաները կը սողայ եւ գրժուարաւ կը դառնայ, իսկ ջրի մէջ արագ կը լողայ։ Գեռեզերքը կ'ելնէ միայն հաւկիթներն ածելու, կամ եղէգնեւրու մէջ կը ծածկուի կենդանիներ եւ մինչեւ անգամ մարդ որսալու համար։ Հաբիւրի չափ հաւկիթ կ'ածէ եւ այս ամռելի կենդանին չափէն աւելի պիտի չատնար եթէ հաւկիթները թշնամիներ չունենային։



Արիեստաւոր. — Ափրիկէի խափշիկները՝ կոկոդիլոսին թէ՛ հաւկիթները եւ թէ՛ միսը կ'ուտեն, որ չատ ծանր հոտ մը ունի։ Կայ նաեւ մոլեռն՝ որ թունաւոր չէ, գեռնոռնոն՝ որ միշտ գոյն կը փոխէ երբոր արեւու կամ չուքի մէջ է։

Բնագէտ. — Օձերն երկու տեսակ են. ոմանք՝ որ իրենց ուժին համար վտանգաւոր են, եւ ոմանք՝ որ երբ խածնեն՝ մահատու թոյն մը կը թափեն վէրքին մէջ։

Անթոյն օձերն են, հոռոմակ օձ եւ վիշապը (պօա). թունաւորներն են, նէթ, բոժոժաւոր օձը, փորբը։

Արիեստաւոր. — Հասարակ օձն անմեղ սողուն մ'է. օգուտ ունի երկրագործին, վասն զի չատ մը վնասակար կենդանիներ կ'սպաննէ, ինչպէս մուկն, խլուրդն եւ այլն։

Բնագէտ. — Օձերուն մէջ ամենէն խոշորը վիշապ է. երբեմն

երկայնութիւնը 15 կանգունի կը հասնի։ Իր որսը չի ծամեր այլ ամբողջ կը կլլէ, թէեւ իրմէ մեծ ըլլայ։ Այծեր, ոչխարներ մինչեւ անգամ հորթ մը կրնայ կլլել։ Իր որսն ուտելէն ետեւ, վիշապը բոլորովին կը թմրի որ մարսէ, եւ այս վիճակը քանի մը շաբաթ, երբեմն քանի մը ամիս կը տեւէ։ Այն ատեն որսորդը կրնայ դայն բռնել։

Իր հասարակ օձէն փոքր է Տափակ գլուխ, սեւ փոր ունի եւ երկու ակռաներ, որոց մէջն է թոյնը։ Տաք երկիրներ կը բնակի, ժայռի եւ աւազի մէջ կը գտնուի։ Մարդէն կը փախչի, իսկ եթէ զրգռուի՝ գլուխը կը վերցնէ, կը խայթէ եւ մացառներու մէջ կը քաշուի։ Երբոր իժը խածնէ՝ պէտք է վէրքը վարի կողմէն կապել որ թոյնը վեր չելնէ եւ ապա ծծել։ Երբ շատ տաք օր մը իժը խածնէ, պէտք է վէրքն այրել երկաթով։

Բոյ-ֆաաը օձն Ամերիկա կը գտնուի։ Պոչին ծայրն շատ մը օղակներ կան, որ տարուէ տարի կ'աւելնան երբոր օձն իր շապիկը փոխէ։ Այս օղակներն իրարու զարնելով ձայն մը կը հանեն, որմէ կ'իմացուի իր գալը։ Նոյնպէս իր ժահ հոտէն ալ կը հասկցուի։ Ցուրտ եւ անձրեւոտ օրեր բոժոժները ձայն չեն հաներ։ Մարդու վրայ չի յարձակիր՝ եթէ չզրգռուի։ Իր խայթուածքն անդարմանելի է։

ԻԺ ՈՒ ՏԶՐՈՒԿ

Երկու քնիսաշալ կը խայթենք, ընկեր,
Մի օր իժը տզրուկին կ'ըսէր.
Թէեւ քեզ կը փնտռեն, ինձմէ փախչին մարդիկ,
Ինչո՞ւ.—Ինչո՞ւ մի, կը պատասխանէ տզրիկ.
Չի քու խայթդ կ'սպաննէ,
Մինչդեռ իմն կը բուժէ։

ՏՐ. ՊԱՅԼԻ

ԽՆԱՅՈՂՈՒԹԻՒՆ

Մարդիկ կ'աշխատին որ իրենց ապրուստը ճարեն։ Երբոր իրենց օրականէն կամ՝ ամսականէն կարելով բան մը պահեն, ստակ խնայած կ'ըլլան և այսպէս քիչ քիչ խնայելով ունեւոր կը դառնան։ Այն մարդն որ բոլոր վաստակածն ծախք կ'ընէ անօգուտ տեղը՝ շուտ կ'լսուի։

Հարուստ ըլլալու համար պարտաւոր ենք շռայլութենէ զգուշանալ։ Շատ անգամ՝ մանր ծախքեր աչքի չեն երևիր, բայց եթէ հաշիւ բռնենք, պիտի տեսնենք որ տարուան մը մէջ այդ պզտիկ գումարները մեծ դրամագլուխ կը կազմեն։ Դրամագլուխը գլխաւորապէս խնայողութենէ յառաջ կուգայ։ Ինչպէս կամիջներէ առուակ կը չինուի, նոյնպէս մանր գումարներով հարստութիւն կը գիտուի։ Խնայողութիւն ընելու համար ամէնքէ կարգ կանոն պահել մեր ծախուց մէջ և ամէնորդ ու անոտի բաներ ծախու չառնել։ Այն տղան որ ամեն ամեն իր ծնողքէն առած ստակները կը պահէ և պզտիկ գանձանակի (քուսակ) մը մէջ կը նետէ՝ կրնայ մեծ գումար մը ունենալ տարուան մը մէջ և անով գիրքեր գնելով բան սորվիլ, քան թէ այն՝ որ առածը շաքարի ու խաղալիքի համար կը վատնէ։

ԽՆՁԻՐՆ ԷՆԿԱՒ

—Հայրիկ, ըսաւ Նուարդ, անցած օր դրքիս մէջ կարդացի, որ Նիւտն խնձորի մը վար իյնալէն հասկցեր է որ երկնային մարմինները զիրար կը քաշեն, բայց ես լաւ չհասկցայ այդ օրէնքը

— Աղջիկս, կրնամ բացատրել քեզ այդ օրէնքը, միայն պէտք է որ իմ մի քանի հարցումներուս պատասխան տաս։ Ինչո՞ւ համար խնձորը ծառէն վար ընկաւ։

Ն. — Վասն զի կոթը փրթաւ։

Հ. — Եւ ապա՞։

Ն. — Լաւ, ի հարկէ պիտի վար իյնար, քանի որ բռնելու տեղ չունէր։

Հ. — Այո՛, չունէր, բայց զեռին ընկնելու պատճառն ի՞նչ է։ Մթթէ խնձոր մը կենդանի, շարժո՞ւն թէ ոչ անկենդան առարկայ մ՚է։

Ն. — Անշուշտ անկենդան է։

Հ. — Եւ մթթէ անկենդան բաներն ինքնին կը շարժի՞ն։

Ն. — Ո՛չ։

Հ. — Ուրեմն արտաքին ոյժ մը կայ որ խնձորին վրայ կ՚ազդէ, թէ ոչ ընդ միշտ եղած տեղը պիտի մնար։

Ն. — Իրա՞ւ։

Հ. — Անտարակոյս։ Վասն զի խնձորը շարժելու համար երկու պատճառ պիտի ունենայ, մին՝ ինքիկ շարժում մը, միւսն՝ շարժող զօրութիւն մը։ Արդ՝ առաջինը չունի, ինչպէս որ ըսիր, ուրեմն երկրորդը պիտի լինի։ Եւ ահա այդ պատճառը գտնելու համար էր որ Նիւտն սկսաւ խորհիլ։

Ն. — Բայց, հայրիկ, չէ թէ միայն խնձոր մ՚այլ ամեն բան զեռին կ՚ընկնի, երբ որ բռնելու տեղ մը չունի։

Հ. — Ճիշդ է։ ուրեմն ընդհանուր պատճառ մը կայ որով մարմին մ՚ընկնելու կը հակի։

Ն. — Եւ ի՞նչ է այդ պատճառը։

Հ. — Լա՛ւ, եթէ երկրէս դուրս գտնուած բաները դէպի երկիր կը շարժին, ըսել է թէ երկիրը գտնոնք իրեն կը քաշէ։

Ն. — Բայց երկիրն ալ անոնց պէս անկենդան է։ Ուստի՝ ի՞նչպէս կարող է քաշել։

Հ. — Առարկութիւնդ բանաւոր է, աղջիկս, եւ մեզ բուն խնդրոյն պիտի տանի։ Նիւտն՝ խորհունկ մտածելէ ետք, տեսաւ որ բնութեան մէջ ՀԷՆ մը կայ որ ՅԷՆՏՆԻՆ կը կոչուի,

եւ որու չնորհիւ նիւթին մէն մի մասնիկն — այսինքն ամեն բան որով աշխարհս շինուած է – իրեն կը քաշէ նիւթին ուրիշ մի մասնիկն՝ իր մեծութեան եւ հեռաւորութեան համեմատական զօրութեամբ։ Դիր սեղանին վրայ երկու մարմարէ գնդակ. իրարու մօտ գալու հակում մ'ունին, եւ եթէ աչխարհի վրայ ուրիշ բան մը չլինէր, անչուշտ իրարու պիտի մօտենային, բայց արի տես որ այդ գնդակներն ալ սեղանին, գետնին եւ սենեկին մէջ գտնուած ամեն առարկաներու կողմէ կը քաշուին եւ այդ տարբեր քաշքշումներն կամ ձգողութիւններն իրարու դէմ կը գործեն։

Արդ՝ հողագունտը նիւթեղէն ահագին կոյտ մ'է, որու հետ կարելի չէ ուրիշ բան մը բաղդատել։ Հետեւապէս ահաւոր զօրութեամբ իրեն կը քաշէ ինչ որ իր ներգործութեան տակն է, եւ այս է առարկաներուն անկման պատճառն, եւ այս է, որ կը կոչուի ՁԱՆՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ մարմիններու, կամ ինչ որ անոնց ծանրութիւն կուտայ։ Երբ բան մը վեր կը վերցնեմ, այդ զօրութեան դէմ կը գործեմ, եւ այս պատճառաւ վերուցած մարմինս ծանր կը թուի ինձ, եւ այնքան աւելի ծանր որքան որ աւելի նիւթ կը պարունակէ, քանի որ երկրին ձգողութիւնն անոր վրայ կ'աւելնայ։

Մինթ հիմակ հասկցա՞ր, Նոյ արդ, ձգողութեան օրէնքը։

Ն. — Կարծեմ թէ հասկցայ. մագնիսի մը կը նմանի որ սեղ մը կը քաշէ։

Հ. — Այո, այդ ալ ձգողութիւն է, բայց սահմանաւոր, քանի որ մագնիսի ու երկաթի մէջ տեղի կունենայ։ Բայց ծանրականութիւնն կամ երկրի ձգողութիւնն ամեն բանի վրայ հաւասարապէս կը ներգործէ։

Ն. — Մինթ քիզ եւ դիս այս միջոցիս կը քաշէ՞։

Հ. — Անչուշտ։

Ն. — Ապա ուրեմն ինչո՞ւ համար երկրին չենք փակչիր։

Հ. — Վասն զի կենդանի շարժուն արարածներ ենք, ինքնաշարժութեան զօրութիւն ունինք, որով աստիճան մը երկրիս ձգողութեան կը դիմադրենք. Բայց այդ ձգողութեան

պատճառաւ է որ ոչ մղոն մը բարձր եւ ոչ խակ կանգուն մը վեր չես կարող ցատկել, վասն զի ցատկելու զօրութիւնն այն ինչ կը դադրի որ նորէն գետինը կը դանուիս։

Ե։ - Հասկցայ, հայրիկ։

ԵՐԿՈՒ ՄՈՄ

Պատանի մը հարցուց օրին մէկը իր հօրը՝ որ շատ հարուստ էր։— «Հայր իմ, ի՞նչ կերպով այդչափ հարստութիւն գիւտցիր։ Ես հազիւ կարող եմ ծայրը ծայրին բերել մինչև տարուան վերջը, և միշտ պարտքի մէջ կը մնամ։»

Հայրը պատասխանեց։— «Շատ դիւրին բան է, որդեակ, հարուստ դառնալը Բուսական է միայն պէտք եղածով գոհ ըլլալ և մամ մը միայն վառել երբոր երկու հատ վառելու հարկ չկայ։»

Եւ այս ըսելով հայրը մարեց երկու մոմերէն մէկն որ նոյն միջոցին սենեկին մէջ կը վառէին։

ՖՐԱՆԿԼԻՆԻ ՍՈՒԼԻՉԸ

Ցօնի օր մ՚էր։ Ֆրանքլին իր գրպանը քիչ մը սատակ ունէր և կ՚ուզէր քանի մը խաղալիք գնել։ Ուսան չուկայ ելլալ, իր ճամբուն վրայ տղու մը հանդիպեցաւ, որուն ձեռքը սուլիչ մը կար։ Տղան այս սուլիչը կը փչէր և սուր ձայներ կը հանէր, այնպէս որ Ֆրանքլին լսելով զմայլեցաւ, տղուն մօտ գնաց և անոր ըսաւ։— «Ծրախէ

այդ սուլիչն ինձ, գրպանիս մէջ եղած բոլոր ստակը քեզի կուտամ։» Տղան ընդունեց այս առաջարկութիւնն և երբ Ֆրանքլին սուլիչը ձեռք ձգեց, սաստիկ ուրախ եղաւ և դայն փչելով տունը մտաւ։ Իր եղբայրներն ու քոյրերը հարցուցին անոր թէ ո՞րչափ ստակ տուեր էր այդ սուլիչը գնելու համար։ Նա պատասխանեց որ գրպանին մէջ ունեցած բոլոր ստակը տուեր էր։ Այն ատեն ամենքը սկսան խնդալ Ֆրանքլինի պարզմտութեան վրայ և ըսին որ չափէն աւելի ստակ տուեր է։ Ֆրանքլին այս լսելով երեսը կախեց և սկսաւ մտածել որ իր եղբայրներն ու քոյրերը իրաւունք ունէին։ Ուստի միտքը դրաւ որ ուրիշ անգամ բան մը ծախու չառնէ մինչև որ անոր գինը չհասկնայ, միշտ յիշելով սուլիչը։

Երբոր մեծցաւ Ֆրանքլին, այս դէպքը չի մոռցաւ և ամեն անգամուն որ բան մը գնելու երթար՝ սուլիչը կը յիշէր և իր փափաքները կը զսպէր։ Երբոր բան մը փափաքէր կամ՝ բան մը գնէր, ինքն իրեն կ'ըսէր։ «Սուլիչն չափն աւելի սատակ չառնե։»

ՖՐԱՆՔԼԻՆԻ ԱՌԱՔԵՆԵՐԸ

Երբոր մարդ մը ուրիշը կ'աշխատցնէ առանց վարձք մը տալու, կըսենք որ այդ մարդն անիրաւ է, բայց չենք մտածեր որ ծուլութիւնն ալ բռնաւոր մ'է և մեզի շատ աւելի վնաս կը պատճառէ, վասն զի անով մեր անգին ժամանակը պարապ կ'անցուցնենք, հիւանդ կ'ըլլանք և մեր կեանքը կը կարճենք։ Դանդաղութիւնը ժանգին պէս աւելի շուտ կը մաշեցնէ քան աշխատութիւնը.

գործածուած բանային միշտ փայլուն կը մնայ: Եթէ կեանքը կը սիրես՝ ժամանակդ մի՛ վատներ, վասն զի կեանքը ժամանակին մասունքէն շինուած է։ Շատ անգամ չափէն աւելի քնանալով կ՚անցնենք մեր օրերն և կը մոռնանք որ քնացող ապուէ ը հաւ չի բռներ, և թէ դերեզմանին մէջ չափէն աւելի պիտի քնանանք։

Քանի որ ժամանակն ամեն բանէ սուղ է, այդ ժամանակը վատնելն ամենէն մեծ շռայլութիւնն է։ Վասն զի կորսուած ժամանակը նորէն ձեռք չանցնիր: Անհոգութիւնն է որ ամեն բան կը դժուարացնէ, իսկ աշխատութիւնը կը դիւրացնէ։ Այն որ ուշ կ՚արթննայ՝ բոլոր օրը քալելու կը պարտաւորի և հազիւ թէ իր գործը մինչև գիշեր կը լմնցնէ։ Երբոր ծուլութիւնն այսպէս ծանր ծանր կը քալէ՝ աղքատութիւնը շուտ վրայ կը հասնի։ Նայէ՛ որ դու յառաջ քշես գործդ և այն գլեզ չքշէ։ կանուխ պառկելով և կանուխ արթննալով՝ մարդ քաջառողջ և հարուստ կ՚ըլլայ։

Պէտք չէ բնաւ զրուցել։ Երբոր բաղդս բանի՝ գործ ու ստակ կը գտնեմ։ Պէտք չէ ըսել։ Աւելի լաւ ժամանակներու վրայ դնենք մեր յոյսը։ — Մենք շարժելով և աշխատելով՝ լաւ ժամանակը ձեռք կը ձգենք։ Աշխատասիրութիւնը պէտք չունի բաղձալու և յուսոյ վրայ ապրողն՝ անօթի կը մնայ: Առանց նեղութեան վաստակ չկայ։ Ճարպիկ մարդը երբէք անօթի չի մնար։ Անօթութիւնն՝ աշխատող մարդուն տունը կը նայի բայց ներս չի կրնար մտնել։ Մարդ ժրութեամբ կը գտնէ բաղդ և Աստուած ճարտար մարդուն ամեն բան կուտայ։ Ուրեմն խորունկ հերկէ երբոր ծոյլ մարդիկ կը քնանան, և այն ատեն առատ հունձ կ՚ընդունիս ու կը ծախես։ Ջանա՛ այսօր աշխատելու, քանի որ չգիտես թէ վաղը պիտի կարենա՞ս աշխատիլ։ Վաղուան մի ձգեր երբէք այսո-

բուան ընելիքդ։ Գործիքներդ ձեռք ա՛ռ առանց թափ-պանի. յիշէ որ ձեռնոց ունեցող կատու մը մուկ չի բռներ։ Իրաւ որ մարդ իկ շատ գործ ունին ընելու և կարելի է դու տկար ես, բայց մի վհատիր, ժրութեամբ գործի սկսէ՝ և պիտի յաջողիս. յիշէ՝ որ կայլակը քարեր անգամ կը մաշեցնէ. կացինի թեթև հարուածներով ահագին կաղնին վար կիյնայ։ Թերևս ոմանք ըսեն. «Մի-թէ մարդ պէտք չէ՞ որ քիչ մը հանգչի». — ես ալ կը պատասխանեմ. «Լաւ գործածէ ժամանակդ, եթէ կ'ուզես հանգչիլ, և քանի որ ապահով չես մէկ վայրկեանին վրայ անգամ, ժամ մը մի վատներ։

ՄԵՂՈՒՆ

Մեղու դուս սիրադեմ,
Պատմե՝ ինձ, կ'աղաչեմ,
Ինչո՞ւ ճիշդ առտուն,
Ծծելով ծաղկուն
Շանսրրամ ու վարդ,
Դաղարիս զուարթ,
Անփոյթ յիովին
Քու զբօսանքին։
Երբ տաք օրեր անցնին,
Ընդունայն կը փնտռուին
Նորաբոյր ծաղիկներ,
Որ յանկարծ են բոմեր.
Այսպէս թաշնած կ'իյնան
Տարիներ սիրական,
Այսպես կը մտնեմ մարը
Փայլուն վառ արեւը։

— Մանկիկ. ըսաւ մեղուն,
Երբ աչքս բանամ այգուն,
Եւ տեսնես որ քաղեմ
Անձանձիր բարեղեմ,
Չիս իբր օրինակ առ
Եւ նոր եռանդով վառ
Ջանա՝ ու ձեռք ձգիր
Ինչ որ չի կորսուիր։
Տղա՛յ. հաւտայ մեղուին.
Անսա անոր խրատին։
Աշխատ. որ վայլես.
Ցանե՝ որ միշտ քաղես.
Երբ մանուկ՝ շատ ապրուստ
Համբարե՝ ճոխ հարուստ
Իմաստի ու սրտի.
Համար նեղ օրերի։

ԳԱԴԱԼԱՆ

ՆԱՒ

Զուկերն ունին իրենք արնպիսի ձև մը և անդամներ որով կարող կ'ըլլան ջուրի վրայ կենալ և ուզածնուն պէս շարժիլ: Մարդիկ ալ ծովուն վրայ ճամբորդելու համար շինեցին նաւերը, ակոռներ, ջրաքանչեր, նաւակներ և նաւեր որոց ձևերն ձև առին, որ կիսոցի կը նմանին. վասն զի, ինչպէս որ ջուլհակին գործիքին թելերուն վրայ կը սահի

կիսոցը, նոյնպէս նաւերը ջուրի վրայ կը սահին, ճամբայ կը բանան թիւրաներ շինելու համար ալ նաւաշինները ձուկի լուզային օրինակ առած պիտի ըլլան, և անոր պոչին նայելով դեկը շինած են. ինչպէս որ ձուկն՝ եթէ լուզակներ չունենար, պիտի չկրնար յառաջ երթալ, նոյնպէս ասդին անդին պիտի չկրնար դառնալ, եթէ չունենար պոչն որ ըստ հաճոյս աջ ու ձախ կը շարժէ.

Նաւերը քալեցնելու համար ուրիշ բաներ ալ կը գործածեն, ինչպէս չուան, թի, առագաստ, շոգի և պըտուտակաւոր անիւ: Առագաստները լայն կտաւի կտոր-

ներ են՝ կայմերուն կցուած. հովէն առագաստները կ'ուռուցնէ, այնպէս որ նաւը առաջ կը քշուի և ջուրին վրայ կը սահի։

Նաւերը կը ծփան որորուելով եւ ելլէն դէպի առաջն, այսինքն եռելէն ու առջեւէն, և ասոր կ'ըսեն ելեւէջ. նոյնպէս շարժում մը, ճօճում մը կայ նաւուն աջակողմէն յետակողմ, և ասոր ալ կ'ըսեն էրէրամ։ Այս երկու շարժումներէն է որ երբեմն մարդիկ ծովէն կը բռնուին, այսինքն՝ իրենց սիրտը կը խառնուի և կսկսին փսխել։

Նաւապետները նաւուն սպասաւորներն են, որ նաւապետին հրամանով այլ և այլ նաւային գործեր կ'ընեն։ Նաւապետը նաւուն ճամբան ուղղող մարդն է, իսկ նաւապետներն նորոհաս աշակերտներ են որ որ օր մը նաւաստի ըլլալու կը պատրաստուին։



Բայց ծովուն վրայ նաւը քալեցնելու համար, այնպէս որ պէտք եղած տեղն երթայ, կողմնացոյց կը գործածեն։ Մագնիսացած ասեղ մ'է կողմնացոյցն որ շրջանակի մ'առանցքին վրայ կը կենայ և այս շրջանակը ժամերուն թիւերը նշանակելու տեղ՝ երկրիս այլ և այլ կողմերը կը ցուցնէ։ Մեր կիսագունտին վրայ այս ասեղին ծայրը միշտ դէպի հիւսիսային բեւեռը կը դառնայ. իսկ երբ մի՛ս կիսագունտին վրայ գտնուի՝ ասեղն չի դառնար։

ԾՈՎԱՅԻՆ ԹԱՌԱՌ

Ծովային ուղեւորութիւնն՝ որ նմանապէս նաւարկութիւն կ՚ըսուի՝ չատ վտանգներ ունի նաւորդներու համար։ Երբեմն ծովու վրայ այնքան բուռն հով կ՚ելնէ որ կարելի չըլլար անոր դիմանալ եւ նաւը կ՚երթայ ուժով ծովուն եղերքը գտնուած ժայռերուն կը զարնուի։ Ուրիշ անգամ կընայ մրրիկ կամ սոսկալի սրոկոն[1] պատահիլ որ նաւը կը դարձնէ, կամ ռռռռ կ՚ինկնէ պտուտքելով եւ նաւուն վրայ իյնալով կ՚ընկղմէ։ Այն ատեն նաւը կը խորտակի եւ բոլոր նաւասաստիները ու անցորդները խեղճութեամբ ալիքներուն մէջ կը խղդուին։ Եթէ բաղդաւոր են՝ ազատելու միջոց մը կը գտնեն, նաւուն մէկ բեկորին կը փաթթուին՝ որ ջուրին վրայ ծփալով եղերքը կընայ հասնիլ։ Նմանապէս վտանգաւոր է անծանօթ տեղեր ծովափին մօտենալն։ Իրաւ պզտիկ մակոյկներ կարող են աւազուտ ծովեզրի մօտենալ, բայց մեծ նաւերուն համար դժուարին է. ինչու որ եթէ յանդգնին այդ ժայռուտ կամ աւազուտ եզերքը հասնիլ՝ կընան նստիլ եւ բացուելով ջուր առնել, այնպէս որ երբ ջուրերը բարձրանան՝ չեն կարող ջրին երեսը ելնել եւ նորէն իրենց ճամբան շարունակել. ինչու որ ամեն մարդ գիտէ թէ՝ ծովուն ջուրերն անդադար կը բարձրանան եւ կը քաշուին եւ ասոր կ՚ըսեն մակընթացութիւն եւ տեղատուութիւն, որու պատճառն է լուսնին ձգողութիւնն։ Ուստի՝ նաւերը դիւրաւ մօտեցնելու համար ռումբեր նաւամատոյցներ եւ նաւահանգիստներ չինուած կան։

[1] Ouragan

ՕԳԱՊԱՐԻԿ

Ինչպէս ծովու վրայ, նոյնպէս օդին մէջ ալ մարդիկ կը նաւարկեն: Օդային ճամբորդութիւնն օրապարիկով կ'ըլլայ։

Երբեմն դպրոցի աշակերտներ՝ երբ հով կայ՝ թռուցիկ կը թռցնեն և երկար առասանով մը զայն կը բռնեն։ Թռուցիկը լայն է և վերի կողմը սրածայր, այնպէս որ թռչունի կը նմանի, որու կոուցն օդը կը ճեղքէ և թևերն ու տափակ պոչը դիւրաւ օդին մէջ կը կենան։ Այս է պատճառն որ թռչունի պէս կը թռի:

Օդապարիկը գլուխը վար դարձած տանձի մը կը նմանի և գոգաւոր է: Օդապարիկը թղթէ ալ կը շինուի՝ մէջը տաք օդ լեցնելով: Ամենէն առաջ Մոնկոլֆիէ եղբարք հնարեցին օդապարիկը 1783 ին։ Իրենց օդապարիկը տաք օդ կը լեցնէին, որ պարզ օդէն աւելի թեթև է, և օդապարիկին բերանը վառարան մը դնելով օդին տաքութիւնը կը պահէին։ Բայց կարելի էր որ վառարանէն օդապարիկը այրէր։ Ուստի Կ-ը-ը- անուն բնագէտ մը ուրիշ կազ մը գտաւ (ջրածին) որ օդէն 14 անգամ աւելի թեթև է։ Այնուհետև աւելի հաստատուն ու աւելի մեծ օդապարիկներ շինեցին սնդուսով կամ եղան ալիքի թաղանդով, վրան ջնարակով կամ խէժով ծեփեցին, բոլորտիքը մետաքսէ ցանցով մը պատեցին, որպէս զի չպատռի և աւելի ճամբորդներ պարունակէ։

Օդապարիկն այսպէս կը թռցուն։ Նախ գետինը տնկուած փայտերէն չուանով կը կապեն, ապա անոր մէջ ջրածին կազ կը լեցուն, անոր վարի դին ակատ մը կը կապեն, որու մէջ կը նստի օդապարն որ զայն ուղղէ։ Յետոյ չուանները կը կտրեն և օդապարիկը կ'սկսի

օդին մէջ բարձրանալ, մինչդեռ վարը բազմաթիւ ժողովուրդ կը գիտեն և եռանդով կ'ազազակեն ու ծափ կը զարնեն։ Քիչ առնէն օդապարիկն այնքան կը բարձրանայ որ պարզապէս չունչանի մը պէս պզտիկ կ'երևի վարէն գիտող հանդիսականներուն։

Օդապարիկը կարող է շատ վեր ելնել, վասն զի վերերն օդը աւելի չոր, թեթև ու բարակ է։ Բայց այն առեն օդապար մարդն չի կրնար գիմանալ, շունչը կը կտրի, քիթէն ու մարմնոյն ծակտիկներէն արիւն կուգայ։ Երբոր ասրճանակ պարպէ, շատ թեթև ձայն մը կ'ելնէ, ուստի կը նայի որ վար իջնէ։ Քիչ քիչ ջրածին կազը կը հանէ ու անոր տեղը օդ կ'առնէ։ Իսկ եթէ ուզէ նորէն վեր ելնել՝ իր ակատին մէջ ունեցած աւազը վար կը թափէ որ օդապարիկը թեթևնայ։ Օդապարիկին իջնելը կրնայ շատ վտանգաւոր ըլլալ։ Երբեմն առուներու վրայ, ծովու կամ գետի մէջ կ'իջնայ։ Երբ օդապարը կը նայի որ վտանգ կայ և շատ շուտով վար կ'իջնէ, աւազ կը թափէ վար և այն առեն նորէն կամաց կամաց վեր կ'ելնէ, և ի վերջոյ կ'աշխատի որ անվտանգ տեղ մ'իջնէ։

Օդապարիկին մէկ կողմը մեծ հովանոց մը կայ զոր վտանգի ժամանակ օդապար մարդը կը բանայ որպէս զի արագութիւնը նուազեցնէ և անվտանգ գետին իջնէ։

ՅՈՎՀԱՆՆԷՍ

Գերմանիոյ Մայանս քաղաքը Յովհաննէս անուն արքայ մը կար որ շատ աշխատասէր և ուշիմ էր։ Թէև ազնուականի որդի՝ իր հայրը մեծ հարստութիւն չունէր։

Յովհաննէս ծնած էր 1409 ին. երբ տասն և հինգ տարեկան եղաւ, մտածեց իր ապրուստն ինքնիրեն հոգալ որպէս զի իր հօրը վրայ բեռ չըլլայ։ Բայց նոյն միջոցին հայրը մեռաւ և իր որդւոյն թողուց փոքրիկ ժառանգութիւն մը։ Այն ատեն Յովհաննէս ընիկ երկրէն ելաւ և Սթրաշպուրկ գնաց։ Այն տեղ ջանաց նոր արհեստ մը հնարել։ Այս արհեստով կ'ուզէր ձեռագրի օրինակներ շատացունել։ Մինչև իր ժամանակն ամեն գիրք կ'օրինակէին, բայց օրինակողն որչափ շուտ գրէր՝ դարձեալ շատ ժամանակի կարօտ էր որ կարող ըլլար քանի մը օրինակ հանել, մանաւանդ երբ գործը մեծ էր։ Այսոր համար ո՛չ միայն կարդացող քիչ կար՝ այլ և էրուդիրեր շատ ու շատ սուղ էին։ Յովհաննէս միտքը դրաւ զատ զատ տառեր թափել և ապա շարելով գիրք տպել։ Այս մեծ և օգտակար խորհուրդը գործադրելու համար ստակ չունէր. ուստի մէկ քանի հարուստ մարդոց հետ ընկերութիւն կազմեց և յուսաց այս կերպով յաջողիլ։

Յովհաննէս տասը տարի շարունակ աշխատելով յաջողեցաւ։ Արդէն մեծագ մը գտեր էր որով տառեր պիտի թափէր, բայց իր ընկերները մեռան ու ինք մնաց առանց դրամագլխի։ Այն ատեն գործը դադրեցուց և նորէն Մայանս դարձաւ։ Այս անգ ուրիշ մէկ քանի ընկերներ գտաւ և իր գործը նորէն սկսաւ։ Իր ընկերներէն մին էր Ֆաստոդ, նենգամիտ հարուստ սակերիչ մը, և Շոֆէր, որ շատ ճարպիկ վայելչագիր մ'էր։

Յովհաննէս ջանաց այնպիսի մեծագ մը գտնել որ տառեր թափելու յարմար ըլլայ։ Շատ ատեն աշխատեցաւ և վերջապէս գտնողն եղաւ Շոֆէր։ Այն ատեն Ֆաստոդ՝ Յովհաննէսը կը ճամբէ և անոր ըրած գիւտին տէրը կը դառնայ Շոֆէրին հետ։

Յովհաննէս, որ պարտքի տակ ընկեր էր, իր գիւտը Ֆաօսդին կը թողու և խեղճ ու թշուառ վիճակի մէջ մնալով, Մայանսէն կը հեռանայ։ Միւս երկու ընկերները գործը կը շարունակեն և տպարան կը բանան։ Թշուառ Յովհաննէս, որ ապերախտ Ֆաօսդի զոհ եղեր էր, տասը տարի կը թափառի և տպագրութեան այս գտիչը՝ ցաւալի կեանք մը կը վարէ։ Կ'ըսեն թէ մինչև անգամ հացի կարօտ մնացեր է։ Իր վերջին օրերը պաշտպան մը գտաւ և իւր գիւտը կատարելագործելու ջանայ։ Յովհաննէս 1468ին մեռաւ և անմահ անուն մը թողուց։

Այս Յովհաննէսն էր՝ Կուտենբերկի, որու հնարած գիւտը, այսինքն տպագրութիւնն, աշխարհիս ամենէն նշանաւոր գիւտերէն մէկն եղաւ։

ԹՌՉՈՒՆՆԵՐ

Թռչուններուն վրայ խօսող բնապատումն հոյակապ կ'ըսուի։ Հոյակապ այն է որ հաւ ու թռչուն կ'որսայ վարմով ու ցանցով։ Հոյակապ այն է որ ողջ կամ սպաննուած թռչուններ կը ծախէ։

Թռչունները ձուադիր[1] են, այսինքն՝ էգը հաւկթի կ'ածէ որու վրայ թուխս նստելով կը հանէ ձագուկներ։ Թռչելու յարմար կազմուած եւ այլազան փայլուն փետուրներ ունին։ Շատերուն ձայնն անոյշ է։

[1] Oviparos

Թռչուններուն կտուցին, ըղունգին եւ թաթիկներուն նայելով՝ բնապատումները զանոնք վեց գլխաւոր խումբի բաժնած են։ Ասոնք են. Ա. Գիշատիչներ, այսինքն միս ու դիակ ուտող թռչուններ՝ որք ուժեղ ճիրաններ ու

կտուց ունին, որով կարող են իրենց որսը ողջ բռնել ու պատռել։ Բ. Ճնճղկոյին, որոց տեսակները չատ են։ Գ.

Ա։-ղ-ղ-ոյն, ինչպէս աքլոր, աղաւնի, կաքաւ, որ կը ճանչցուին իրենց մաշկեայ կտուցէն։ Դ. Մ-ք-ը-ղ-ներ, ինչպէս պապկայ, փայտփոր, կկու, որ երկու մատ առջեւի եւ երկու մատ ետեւի կողմէն ունին, մինչդեռ միւս թռչուններն առջեւի կողմն երեք հատ ունին եւ մէկ հատ ետեւի կողմը։ Ե. Երկ-ր-ոտ-ն, որ երկար ու մերկ ոտք, անջատ ու վտիտ մատներ ունին, որով կարող են ճանիճներու տղմուտ եղերքը պտրտիլ։ Զ. Մ-ղ-ոն, որ մաշկեայ ոտք ունին, այսինքն իրենց մատները մաշկով մը իրարու կցուած են, այնպէս որ կարող են դիւրաւ լողալ եւ զանոնք թիակի պէս գործածել։

Դիչակեր եւ ծովային թռչուններու մեն անախորժ է։ Միայն ճնճղուկին, մանաւանդ հաւի տեսակ թռչուններու միսը կ'ուտուի։ Շատ թռչուններ եղանակներու հետ՝ տեղ կը փոխեն եւ երամովին կը գաղթեն, ինչպէս ծիծեռնիկները, լորերը, թզկերուկները, բադերն ու սագերը։ Ոմանք ցրտէն կը փախչին եւ աւելի տաք կլիմաներ կ'երթան, ոմանք ալ միայն գիշերները կ'ելնեն թռչելու ու որս փնտռելու համար։

ԳԻՄԱԽՈՐՆԵՐ

Մարկոս. — Պ. Գալուստ, նոր գիսաւորը տեսայ, բայց չգիտեմ թէ ի՞նչ է եւ ինչո՞ւ համար լուսաւոր գէս մ'ունի։

Պ. Գալուստ. — Գիսաւորն երբ արեւէն շատ հեռու է, անտեսանելի կը մնայ եւ պոչ չունի։ Մթայն իր ամենէ փայլուն, բոլորաձեւ մասը գոյութիւն ունի։ Սովորաբար գիսաւորին պոչն արեւին նայելով գիսաւորէն անդին է։

Մ. — Պարոն, ո՞ւսկից յառաջ կուգայ այդ պոչն, եւ ինչո՞ւ համար արեւուն միւս կողմն ուղղուած է։

Գ. — Այդ երկու հարցումներուդ ոչ ոք կրնայ ուղիղ պատասխան տալ։

Մ. — Պարոն, արեւուն կողմն ալ լոյս մը կայ։

Գ. — Այդ գիսաւորին գիսակն է, որ նոյնպէս անբացատրելի կը մնայ։

Մ. — Արդեօք գիսաւորներն երկրէն չա՞տ հեռու են։

Գ. — Ատոնց հեռաւորութիւնը փոփոխական է։ Ամենն ալ արեւուն շուրջը կը թաւալին, անտեսանելի են երբ հեռու են, իսկ տեսանելի եւ զարմանալի տեսք մը կառնուն երբ անոր կը մօտենան։ Նիւտըն, անգլիացի գիտունն, 1860 ին նշանաւոր գիսաւոր մը դիտեց, եւ հաստատեց որ հաւասար միջոցներու մէջ կերեւէր, շրջանաւոր գիսաւոր մ'էր։ Նա հաշիւ ըրաւ որ գիսաւորը հրաչէկ երկաթի չափ ջերմութեան աստիճանն հասած է արեւուն այնքան մօտենալով։

Մ. — Ես ալ տեղ մը կարդացի, որ այդ գիտունը ցոյց տուած է թէ ինչ օրէնքով աստղերն զիրար կը քաշեն։

Յակոբ. — Եւ երբ հարց ու փորձ ըրեր են թէ ի՞նչ կերպով այնչափ մեծ գիւտեր ըրած է, պատասխաներ է. — «միշտ դիտելով ու խորհելով։»

Գ. — Այդ աղուոր խրատ մ'է ձեզ համար, աշակերտներս, անդուլ աշխատելով ճշմարտութեան կը հասնինք։ Այդ կեր-

պով միայն կրնան գտնել զայն, թէ՝ պարզ նախակրթարանի աշակերտ մը, եւ թէ՝ Նիւտնի պէս հանճար մը։

Կարապետ. — Պարոն, անցած իրիկուն դիսաւորը դիտող մարդ մը կըսէր, թէ կրնար երկրին զարնուիլ, տապալել զայն եւ ողողումներ պատճառել։ Միթէ կարելի՞ է այդ բանը։

Գ. — Եթէ լուսնին համար այդպէս ըսէր, թերեւս ըսածը ճիշտ լինէր Բարեբաղդաբար լուսինը բնաւ երկրին չմօտենար, գրեթէ միշտ մի եւ նոյն հեռաւորութեան մէջ կը մնայ։ Եթէ երբէք չատ մօտենար, ինչ որ հաւատալի չէ, ջրերը վեր վար պիտի շարժէր, եւ ծովը իր փոսէն ելնելով՝ ցամաք երկիրները պիտի ողողէր, բայց դիսաւորներն այդպիսի վտանգ մը չեն սպառնար մեզ։ Հաստատուն մարմիններ չեն. չողելի նիւթէ մը կազմուած են որ չատ թեթեւ է. ինչ աստղերու որ հանդիպած են տապալած չեն։ Բայց երկրի վրայ աւելի հաւանական դիպուածներ կրնան պատահիլ, որոնց բնաւ չենք մտածեր. ըսէ ինձ, Կարապետ, ի՞նչ բանով ծածկուած է երէցին տունը։

Կ. — Աղիւսներով։

Գ. — Միթէ հովէն աղիւս մը չկրնա՞ր քակուիլ եւ գետինն իյնալ։ Եւ եթէ իյնալով գլուխդ դար, ի՞նչ պիտի լինէիր

Կ. - Կարելի է սպաննուէի։

Գ. – Այն տեղն երէցին տան քովէն չպիտի անցնիս երբ հով լինի։

Կ. — Այդ բանին բնաւ չմտածեցի։

Գ. — Երբ պատի մը տակէն կ'անցնիս, կրնայ այդ պատը փլիլ, եթէ նաւակով պարտիս, ատատիկ հով մը կրնայ նաւակը դարձնել, երբ երկինք որոտայ, ամէն զգուշութեանց հակառակ՝ կարելի է կայծակնահար լինիս։ Եթէ այս ամէն յանկարծական դիպուածներէ վախնայիր, տեղէդ չպիտի շարժէիր։ Այդ միտքս կը բերէ ապակիէ մարդուն պատմութիւնը։

Մարկոս. – Ա՛հ, պարոն, պատմեցէք մեզ այդ պատմութիւնը։

Գ. – Մարդ մը կար որ տարօրինակ յիմարութեամբ մը բռնուած էր. կարծէր թէ ապակիէ չինուած էր։ Երբ փողոցներէն քալէր կարելի եղածին չափ պատերէն հեռու կը քալէր առ ամի որ չխորտակուի։ Մենք ամենքս այդ ապակեայ մարդուն կը նմանինք, միշտ մեռնելու վախն ունինք, բանաւոր մարդու գործ չէ այդ։ կան դէպքեր որ ոչ խոհեմութեամբ եւ ոչ գուշակութեամբ կրնան արգիլուիլ։ Ուստի այն որ կուզէ իր օրերն գործունէութեամբ անցնել, պէտք է ի բաց վանէ երեւակայական երկիւղները։

ԱՐԾԻՒ

Թռչուններու մէջ համբաւաւորն արծիւն է. ամենէն ընտիրն՝ սկզբէն ի ի ընուած է, որ մէկ կանգուն երկար է. երբ թեւերը բանայ, մէկ ծայրէն միւսը երկուքուկէս կան. գուն է։ Ժայռերու ու աշտարակներու վրայ կը բնակի. Շատ ուժեղ է արծիւն և կրնայ իր մագիլներով ոչխար կամ այծ մը առնել տանիլ օդին մէջ։ Երբոր որսը ծանր է՝ կը պատռէ և այնպէս կը վերցնէ։ Կան ժողովուրդներ՝ ինչպէս Թաթարներն, որ արծիւը կը մարդեն և անով ճոլաչ, աղուէս և այծ կ'որսան։ Որսորդը ձիու վրայ նստած՝ իր ուսին վրայ կը դնէ արծիւն, որու

գլուխը կնգուղով մը ծածկուած է. երբոր որսը կը տեսնէ, թռչունին կնգուղը կը հանէ և զայն կարձակէ։ Արծիւը կը սրանայ օդը, յետոյ որսին վրայ կ'իջնայ և զայն կը բռնէ մինչև որ ամբը կուգայ առնելու համար։

ԱՆԳՂ.

Անգղ արծիւէն կը տարբերի իր երկար ու դիւրաշարժ վիզովը, որու վրայ բնաւ փետուր չկայ։ Անգղը արծիւէն շատ մեծ է. նոյնպէս գլուխը (Բօրամիլիէրի Անգղը) մինչև հինգ կանգուն լայնութիւն ունի մէկ թևէն միւս թևը. միշտ լեռներու մէջ կ'որսայ։ երբոր ոգի կենդանի չգտնէ՝ դիակ կ'ուտէ։ Շատ անգամ խիստ կովի մը կամ ձիու մը դիակին վրայ կ'իջնէն և քանի մը վայրկեանի մէջ կը լափեն՝ միայն ոսկորները թողլով։ Երբեմն պատերազմի տեղն անգղները օդին բարձրերը կը թռին և երբ կռիւը վերջանայ՝ մեռելներու վրայ կ'իջնեն որ ուտեն։ Բոլորն ալ՝ թէև աւելի փոքր, բայց զօրաւոր է և սրաթռիչ։ Թռչունները որսալու համար ատեն մը բազէն կը զարձանէին մարզելով։

Դիշակերներու կարգէն են նաև սուրուրը, լուսինը, ճուկը, որք ցերեկները կ'որսան, մինչդեռ բուն, բուէնը գիշերները կը փնտռեն իրենց որսը։

ԾԻԾԵՌՆԻԿ

Ճնճղուկի կարգէն է ծիծեռնիկը, որու տեսակները շատ են. միայն փետուրներու գոյնով կը տարբերին, որք գրեթէ միշտ սև են և տեսակ տեսակ ճերմակ բիծեր ունին։ Ծիծեռնիկը չերգեր, բայց սուր ճիչեր կը հանէ երբոր օդին մէջ կը թռի ընկերներուն հետ կամ վերէն կը սրանայ միջատներ որսալու համար։ Շատ արագ թռչիչ ունի և ատեն ատեն այլ և այլ շրջաններ կ'ընէ։ Ծիծեռնիկներն երամովին կը թռին և երբոր բու մը կամ շահէն մը տեսնեն՝ գիրար կը կոչեն սուր ճիչեր արձակելով, կը մնտենան միասին թշնամիին դէմ, կը սուրան և միշտ կը փախցնեն։

Ծիծեռնիկները ձմրան մնտ կը հեռանան մեր երկիրներէն և աւելի տաք երկիրներ կերթան. իսկ գարնան կը վերադառնան և իրենց հին բոյները կը բնակին։

ԲՈՅՍԵՐ

Ա.

Բոյսերու գիտութիւնը կը կոչուի Բոտանիկա։ Ան մարդիկ որ բոյսերու ուսումով կը զբաղին՝ Բոտանիկ կը կոչուին։

Տունկի մը կամ բոյսի մը զանազան մասերն են. արմատը, կամ յոտը, կոճղը, ճիւղերը, տերևը, ծիլերն և սերմերը։

Ծիլերին կը բուսնին ստերը, երբ ծաղիկ տան պոռնկ կը կոչուին։ Ծաղիկը պոռնկ կուտայ որ կուտեր կը պարունակէ։

Բոյսեր յառաջ բերելու համար պէտք է տնկել, ցանել կամ պատուաստել։ Տունկեր մշակողները պրոիզդան կամ բուսաբարմն կ'ըսուին։ Եթէ բաց դաշտի մէջ աշխատին հողքուրդ կը կոչուին, գիտուն հողագործներն հողքէպ կը կոչուին։ Բուսաբարմանները միայն ծառեր կը մշակեն։

Պարտիզպանն իր բանջարանոցին մէջ կը մշակէ բահովն, մարգեղովն և քաղնոցովն ընդեղէն, զոր կը տանի շուկան ծախելու համար։

Տանտիկինը ծախու կառնու բանջրեղէն, ինչպէս՝ ոլոռ, բակլայ, ոգո

՝ ինչպէս, եղերդ, ասպրեակ, դալբի խոռեր, ինչպէս, ուռեպղին, բոշմարաք, կոճղեղներ՝ ինչպէս, սոխ, սխտոր, ասկաղանիկ, և գեղեղ պոռնկներ, ինչպէս՝ փուռ, վարուեղ, դդում, սունկ, որմէ շատեր թունաւոր են։

Ծաղկագարմանը մեծ խնամք կը տանի այն տունկերուն որ աղուոր և հոտաւէտ ծաղիկներ կ'արտադրեն, ոչ միայն ածուներ զարգարելու այլ և սրահներ հոտաւէտելու համար։

Մայիս ամսուն բոյսերը կը ծաղկին։ Ամենէ ծանօթ ծաղիկներն են, սիրուն յասմիկն, համեստ մանուշակն, գոռոզ կակաչն, մաքուր ու գեղաշուք շուշանն, անմեղ մարգարտածաղիկն, ինքնասէր նարկիսը, թարմաւէտ եղեւանին, հոգեպատ վարդն, անուշ շանոգրամն։ Օրիորդները այդ ծաղիկները կը նկատեն իբրև բարի և վատ յատկութիւններու խորհրդանշանները։

Ներկայ էն կան բուժական տունկեր որ կը մշակուին, և բուսավաճառը զանոնք գնելով կը ջրդնէ և գեղագործներու կը ծախէ։ Այս տունկերը մի և նոյն յատկութիւնը

չունին: Կան որ օգտակար են կուրծքի ցաւերու, ինչպէս՝ մոսոսոպոն, և կըսուին լանջկան կան որ թուլացուցիչ են, ինչպէս՝ վոշը, և կանդիչ կըսուին. Դրանքեր տունկերն, ինչպէս՝ գաղտիկորը. քրտինք կը բերեն. դենդրոխոյները, ինչպէս՝ բոգը, տենդ կը բուժեն. Դնոքերներն, ինչպէս՝ քոնքը, շիկոպոնը՝ քուն կը բերեն։

Խաշխաշէն կը հանեն ոփիոն՝ քնաբեր և լոդանոն։ Այսպէս բնութիւնը զանազան բոյսեր կ'արտադրէ, որ մարմնային ցաւերու բոյժ տալու կ'օգնեն։

ԱՐԳԱՑԱԲՈՒԶՆԻԿ, ՄԱՐԴՆԻԿ, ՊԱՊԿԱՑ

Ձնճղուկի կարգէն են նաև սրբիկը, ճայիկը, արտոյտը՝ Ղկիերոնը, սոխակը, գիկոհոնը կարդիկոտրը եւ։

Արտոյտիկը շատ փոքր է. իր գլխուն փետուրները կենդանի գոյներ ունին. իր թևերուն մէջէն դեղին և թաւ փետուրներ կ'երևան։ Երկու նեղ ու երկար փետուրներ պոչին տակէն վար կը կախուին։ Սրբիկն՝ որ Բանարեան կղզիներէն եկած է, վանդակի մէջ պահուելով կ'ընտելանայ։ Աղ և այլ եղանակներ երգելու կը մարզուի։ Նոյնպէս զանազան կրթութիւններ ընելու կը վարժի, ինչպէս պառկիլ, և այլն:



Պապկայն շատ դիւրաւ կը վարժի մարդու ձայնը հանելու. բառերը շատ յստակ կը հնչէ: Ձայիկն ու կաղնագուսը միայն շչել գիտեն, և տարմահաւն ալ թէև բառեր կը հնչէ, բայց կերկեր ձայներ կը հանէ։ Պապկայն կուգայ Ամերիկայէն ուր այլ և այլ տեսակները կան շողուն փետուրներով։

ՓԵՏՐԱՒՈՐ ԵՐԻ. ՀԱՒԵՐ

Հաւնոցի շատ հաւեր, բացի լողացող թռչուններէն, աքաղաղի տեսակին կը վերաբերին, ինչպէս ոտլուրը, հաւը, սէրամարէը, հնդկահաւը, նոյնպէս ըրը, կոտաւը, ֆասֆանը և այլն:

Կարմիր կամ մոխրագոյն կոտաւը արտերու մէջ կը բնակի, թառի վրայ չելներ, այլ ակօսներու կամ մացառներու մէջ իր բոյնը կը շինէ։ Լուրը կաքաւէն փոքր է. իր միսն աւելի փափուկ է և եղատ։ Փասֆանը փոքր Ասիայէն կելնէ։ Ոսկեգոյն փասեանը շատ սիրուն թռչուն մ'է։ Ոտլուրը իր փայլուն փետուրներուն, ճոխ գոյներուն, գոռոզութեանը և քաջութեանը համար նշանաւոր է։ Ամբլորի պայքարները գրեթէ ամեն տեղ շատ զուարճալի խաղեր են։ Հընդկահաւն ալ շատ օգտակար է և գիւրին կը խնամուի։ մեր հաւնոցներուն ամենէն մեծ հաւն է և միսը շատ համեղ է. օգին, ցուրտին և ձիւնին կը դիմանայ և աքիսին ու կուգին դէմ կը մաքառի։



Սէրամարէը զարդի թռչուն մ'է. օգուտ մը չունի։ Իր գլուխը փոքր է և 24 մանր

փետուրներէ կատար մ'ունի։ Իր վիզն ոսկեգոյն և կանանչ փետուրներով զարդարուած է։ Իր պոչն՝ երբ բանայ հպարտութեամբ մը, երկու կանգուն տրամագիծ ունի և սքանչելի գոյներով կը փայլի։

ԱՂԱՒՆԻ ՏԱՏՐԱԿ

Շատ տեսակ աղաւնիներ կան։ Հաւնոցի աղաւնիները գարի, վարսակ, հաճար կ'ուտեն։ Հ-ուֆ-ը մութ կապոյտ գոյն ունի։ Հաւնոցը կը բնակի, բոլոր օրը կը թռի անտառներու մէջ և իր սնունդը կը հոգայ։ Զմեռը աղաւնոցին մէջ կը կենայ։ Պոդամաքէր աղաւնին միւս աղաւնիներէն կը տարբերի ատքերուն բոլորտիքը եղած անփետուր շրջանակովը։ Իր ծնած տեղը կը սիրէ, այնպէս որ եթէ 100 կամ 200 մղոն հեռու տեղ մը անդամ փոխադրուի և ազատ ձգուի, իսկոյն կը թռի և արագութեամբ կ'երթայ իր բնիկ տեղը կը դտնէ։ Մէկ ժամու մէջ 24 մղոն տեղ կը թռի։ Շատ անգամ այս աղաւնին իբրև թղթատար կը գործածեն պաշարեալ քաղաքի մէջ։

Տոդրոն ալ դիւրաւ կ'ընտանեցնայ, թէև ստէպ անտառները կը բնակի։

ԳԻՒՂԻՆ ԳԱՐԻՆԸ

Շագանակի մի ծառի տակ շայլ
Կ'երեւի դարբնոց գիւղին.
Դարբինը՝ զօրեղ մի մարդ է այն,
Հաստապինդ ձեռօք ուժգին.
Դնդերք բազկաց թխորակ՝
Երկաթ տրուանց են նմանակ.

Մազեր գուռզ, երկայն ու սեւ,
Դեմքն է գորշ արեւանման.
Ճակտին հոսի քրտինքն ի հեւ.
Իր շահու դուռն է խնամարն.
Անվախ նայի մարդու երես,
Չի ճանչեն զինք միշտ պարզերես.

Այգին մինչ մուրն յար եռանդուն՝
Իր փիֆոցներ տաստանին.
Դիւրաւ շունի մուրճի բնդիւնն
Որ միշտ կոփէ ծանր ուժգին.
Ինչպէս ժամնարն զարնէ արագ
Երիկնամուտ ժամուն զանգակ.

Տղայք ի դարձին դպրոցին տուն
Նային ուշով բաց դրան.
Սիրեն տեսնել այն բոց հրատուն
Լսել փիֆոցին ահեղ ձայն,
Բռնել կայծերն թռչող հրային,
Զերդ տաշեղներ քշտուած յարկին.

Կիրակի օր նա կերթայ մասուն,
Մոս իր տղոց սիրական.
Եւ քարոզին միշտ անձնատուր,
Միտ դնէ նաեւ աղջկան
Որ կ'երգէ մէջ դպրաց դասուն,
Եւ հրանի սիրտ իր զուարթուն։

Թուի ղսեղ ձայնն իր մօրկան,
Իբր երգող ի դրախտին.
Ի՞նչ փոյթ խորհիլ թէ իւր դարձեան
Ի՞նչպէս հանգչի սիրելին։
Սրթէ ձեռքովն հատս, անկոպար՝
Արտուրն հոսող այտին վար։

Միշտ ժիր, ուրախ, մերթ եւ տրտում,
Կը վարէ կեանք իւր յառաջ.
Ամեն առտու գործ անհատնում,
Իրիկունն ազատ է այդ քաջ,
Բան մը փորձած, բան մ'ըրած
Մի գիշերուան հանգիստ շահած։

Ա՜հ շնորհ ունիմ քեզ շատ ընկեր,
Ինձ տուած դասիդ համար,
Մեր բաղդ շինել մեզ պարտք մ'էր,
Այդ կենաց ի դարձնց վառ,
Այսպէս վրայ սաղին շունչուն
Ձեռեղ հուր գործ. մտածում

ԼՕՆԿՖԷԼՕ

ՋԱՑԼԵԱՄ

Մեծ թռչուն մ'է Ջայլ-մը և հասակն երկու կանգուն է կը հասնի։ Իր անփետուր երկար վիզին վրայ մանր գլուխ մ'ունի և կարճ ու տափակ կտուց մը։ Ոտքերը մերկ են և ջղուտ։ Իր կարճ թևերուն վրայ մեծ և գեղեցիկ փետուրներ կան զորս կանայք իրրև զարդ կը գործածեն։

Ջայլեամները կեդրոնական Ափրիկէի մէջ կը բնակին։ Խումբերովին կը թափառին անապատները և շատ անգամ մեծ ցնաներ կը պատճառեն արտերուն։ Յեսին ծայր արագաշարժ են և կրնան ամենէն սրընթաց ձիէն շատ վազել։ Մանաւանդ երբոր հովը իրենց եռանէն փչէ։ Երկարոտն կենդանեաց կարգն, որու կը վերաբերի նաև Ջայլեամը, ուրիշ շատ թռչուններ ալ կը պարունակէ, որք անուանի են իրենց ոտքին, վզին և կտուցին երկարութեան կողմէ։ Ընդհանրապէս աւագի կամ ճահիճներու մէջ միջատներ կորսան, ինչպէս են -ը-ՏԻԼԸ,

կոռոնիը, պոռեղը և մանաւանդ փոքրիկը, որ Եգիպտացւոց մէջ նուիրական թռչուն մ՚էր, վասն զի միջատներն անխնայ կ՚սպաննէր: Նոյն խմբէն են նաև կոտորը, ճայը և այլն:

ՎԵՀԱՆՁՆՈՒԹԻՒՆ

Այն մարդիկ որ չնչին բաներով կ՚զբաղին, ֆոֆրոֆէ կ՚ըսուին։ Փոքրոգի մարդը միշտ ուրիշին ըրածը գէշ կը գտնէ, ամենուն վրայ արատ կը տեսնէ, ամէն բան ծուռ կը մեկնէ, թէ որ խօսիս ու խնդաս, կը կարծէ թէ իր վրայ կը խօսիս ու կը խնդաս։ Նախանձոտ է, ուրիշին բարիքը չուզեր, չուզեր որ ուրիշ մէկն իր արհեստը բանի. ծուռ աչքով կը նայի իր դրացւոյն յաջող վիճակին: Եթէ թեթև թշնամանք մը կրէ՝ սրտին մէջ ոխ կը պահէ և երբ յարմար առիթ պատահի իր վրէժը կը լուծէ։

Բայց ֆոֆրոֆէ մարդն այնպէս չէ. չուտով ուրիշին խօսքէն չառնուիր, չի բարկանար. ուրիշին աղէկութիւնը կ՚ուզէ, թէև ինքը դժբաղդ ըլլայ։ Մ՚իշտ բարի նախանձով կ՚աշխատի որ իր վիճակը բարւոքէ։ Անդգուշութեամբ եղած սխալմունքի վրայ աչք կը գոցէ, թէև այդ

սխալմունքը իրեն վնաս պատճառած ըլլայ: Մեծահոգի ու վեհանձն մարդը բնաւ գէշ միջոցներ չի գործածեր իր նպատակին հասնելու համար: Բնաւ չարհամարհեր ուրիշը, եթէ պարկեշտ է, թէև ազքատ: Ուրիշները վար չի դարներ իր պատիւը ուելցնելու մտքով, և բնաւ փոյթ չըներ երբոր չարասիրտ մարդիկ ինք կը բամբասեն ու կը նախատեն:

ՄԱՆԵԴՈՆԻՈՅ ՓԻԼԻՊՊՈՍ ԹԱԳԱՒՈՐԸ

Շատ անգամ Փիլիպպոս թագաւորին բարեկամներն կուգային իրեն ըսելու որ Ամենացի ճարտարապետներն իրեն դէմ դրպարտութիւններ կ'ընեն: Բայց Փիլիպպոս մեծահոգի էր, բանի տեղ չէր դներ իր դրպարտիչներուն խօսքերը և միայն կ'ըսէր — «իմ բոլոր կենացս մէջ գործով պիտի հաստատեմ որ դրպարտիչներս սուտ խօսեն:»

Ուրիշ անգամ մ'ալ խորհուրդ տուին որ աքսորէ իւր հպատակներէն մին որ գինք ծաղրեր էր — «Նախ քննենք թէ արդեօք պատճառ մը տուած եմ անոր» ըսաւ քննութիւն ընելէն ետեւ իմացաւ որ այն մարդն ծառայութիւն մը մատուցեր է առանց վարձք մը ընդունելու, Փիլիպպոս հասկցաւ որ յանցանքն իրն էր, և իսկոյն հրամայեց որ գինք ծաղրող մարդուն շատ ընծաներ տան:

ՎԱՅՐԱՀՈՍ ՄԱՐԴԻՆ

Օր մը Ռուբէն իր դաստիարակին հետ զիւղէ մը կ'անցնէր։ Յանկարծ մէկ քանի պզտիկ շուներ իր վրայ յարձակելով սկսան հաչել և խածնել կ'ուզէին։ Ռուբէն ատեն ատեն կանգ կ'առնէր, իր գաւազանն անոնց կը ցուցնէր և կամ կը ծռէր որ գետնէն քար մը առնէ, այն ատեն շուները կը փախչէին, բայց երբ գլուխը դարձնելով կ'սկսէր իր ճամբան շարունակել, շուները վերըստին կը դառնային և կը հաչէին։ Վերջապէս Ռուբէն իր դաստիարակին հետ ադարակապանի մը տունը հասաւ, որ իրենց ճամբուն վրայ էր, մինչդեռ փոքրիկ շուները միշտ իրենց ետևէն կը հաչէին։ Ադարակին մէջ մեծ գամբռ մը արևուն տակ հանդարտ պառկեր էր, Ռուբէն վախցաւ անոր քովէն անցնելու և կարելի եղածին չափ իր դաստիարակին մօտեցաւ որ զինք պահպանէ։ Սակայն շուներ բնաւ անոնց չնայեցան։

Փիչ մը յետոյ արտ մը հասան, ուր շատ մը սագեր կային, որք սկսան շչել։ Այս տխմար թռչուններն բաւական տեղ անոնց ետևէն գացին, իրենց երկար վիզն երկնցնելով, և ծիծաղելի կերպարանք մը ունէին։ Ռուբէն կը ծիծաղէր միայն անոնց վրայ, թէև քանի մ'անգամ ուզեց ամենէն առաջ վազողին վիզին լաւ հարուած մը տալ։ Փիչ մը հեռուն տեսաւ կովերու երամակ մը և ահագին ցուլ մը որու կը նայէր Ռուբէն բաւական վախզգալով։ Բայց բոլորն ալ հանդարտ խոտ կուտէին և իրենց գլուխն անգամ չվերցուցին երբոր աշակերտ ու դաստիարակ երամակին քովէն անցան։ «Բարեբաղդաբար, ըսաւ Ռուբէն իր դաստիարակին, կովերն ու գամ-

բրռներն փոքրիկ շուներուն ու սագերուն պէս կռուա-
սէր չեն։ Բայց ի՞նչ է արդեօք այս բանիս պատճառը։»

«Պատճառն այս է, պատասխանեց դաստիարակն, որ վատասիրտ և արհամարհելի կենդանիներն իրենց քա-
ջութեան վրայ վստահ չեն և գիտեն որ կրնան ծեծ ու-
տել իրենց դէմ ելնող մարդերէն, ուստի աւելի յարմար կը սեպեն պարծիլ ու խրոխտալ։ Իրենէ թէև վախկոտ են, բայց այնպէս ցոյց կուտան որպէս թէ պիտի յարձա-
կին ու վնասեն։ Իսկ այն կենդանիներն որք իրենց ուժին վրայ վստահութիւն ունին, գիտեն որ կրնան ինքզինք-
նին պաշտպանել և չեն կարծեր որ ուրիշները իրենց վնասեն, ասոր համար ազնիւ ընթացք մը կը բռնեն։

ՋՐԱՓՈՒԱՆ, ՍԱՓ ԵՒ ՆԱՐԱՊ

Մաշկոտ թռչուններուն կառոյցը սովորաբար տափակ է և իրենց մատները մաշկով մը կապուած են, այնպէս որ իրենց թաթերը թիակի մը ձեւը կառնուն որ հովանոցի պէս կը բացուի և կը շարժի։ Այս կարգին կը վերաբերին այլ և այլ թռչուններ, ինչպէս սագը, բադը, մրոյնը, կարապը, հաւը, Ջրափառը և այլն։



Երբոր սագն ու բադը գեղ վայրենի են՝ ձմեռը գետերու և ճահիճներու եղերքը կուգան բնակելու։ Այս թռչունները շատ ատենէ ի վեր ընտանի եղած են և խիստ համեղ միս ունին։

Կոբոլը ձիւնի պէս ճերմակ փետուրներ ունի և շատ շնորհալի շարժմունք՝ երբոր մեծ պարտէզներու ան. զաններու մէջ կը լողայ։ Այս թռչունը՝ սիրամարգին պէս՝ օգտակար չէ, այլ զարդ մ'է։

Ծովու ձիձեռնիկն ալ սագին ընտանիքէն է։ Սկոտիա, Նորվեկիա և Իռլանտա կը գտնուի։ Ասոր փետուրներէն բարձ և ուրիշ բաներ կը շինեն։

Հաւալուսը սագին կը նմանի իր մարմնոյն ձեւով, բայց շատ երկար կատուց ունի, որու ստորին կողակէն պարկի նման բան մը կախուած է, որու մէջ պաշար կը դնէ որ բոյնը տանի։ Ջրաքաւն ալ գետափնեայ թռչուն մ'է, ծանրաշարժ և կաղ։ Երբոր ձմեռը հասնի՝ ջրագռաւնե. րը կը ցրուին գետեղրի վրայ և ձուկերը կ'ուտեն. յետին ծայր որկրամոլ են։ Շատ տեղեր, մանաւանդ Զինաստանի մէջ՝ ձկնորսութեան կը վարժեցնեն ջրագռաւնե. րը և անոնց վիզն օղակ մը կը դնեն որպէս զի ձուկերը չկլլեն։



ԳԻՆԻ

Գինին կը շինուի խաղողի հիւթով կամ ջրով։ Այս աւիշը գինիի համ չունենար, ինչու որ հիւթը կամ ջրէն չպարունակեր երբոր նոր քամուած է. բայց ախորժելի անուշ համ մը կ'ունենայ, ասոր համար խաղողն ալ երբեւ լաւ պտուղ կ'ուտուի։ Հասած խաղողն իր մէջ շաքար ունի։ Թէ որ կուզես փորձով հասկնալ, նայէ մրգավաճառին ծախած չամիչը. պիտի տեսնես չամիչին երեսը շաքարի սպիտակ հատիկներ որ ակռայի տակ կը ճզմուին։ Խաղողին ողկոյզը չորցած ժամանակ այս շաքարի հատիկները դուրս կ'ելնեն։ Ահա այս շաքարէն

կը գոյանայ ալքօլը։ Նոր աւիշին մէջ գտնուած շաքարն ալքօլ կ՚ըլլայ, երբոր խմորի՝ դինի կը դառնայ։

Խաղողը մեծ տակառներու մէջ դնելէն ետեւ՝ մարդիկ կ՚սկսին ոտքով կոխել։ Վերջը խաղողին ջուրն ու խիւսը խառնուած կը ձգեն։ Քիչ առեն էն այս ջրոց խառնուրդը կը տաքնայ ինքնիրմէ եւ կ՚սկսի եռալ կազեղէն խոշոր գնդակներ դուրս հանելով, որպէս թէ տակառը վառարանին վրայ լինէր։ Այս գործողութիւնը ֆերմենտ կ՚ըսուի, որ նոյն իսկ շաքարի վրայ կը պատահի, որ քիչ քիչ կը լուծուի եւ կը բաժնուի երկու տարբեր մասի։ մէկն է ալքօլը, իսկ միւսը՝ տեսակ մը կազ է որ՝ օդին պէս չերեւիր աչքի։ Ալքօլը հեղուկին մէջ կը մնայ, որ քիչ քիչ իր առաջին համը կը կորսնցնէ եւ անոր տեղ գինիի համ մը կ՚առնու։ Ընդհանրապէս՝ կազը վեր կելնէ բոլոր գնդուածը շարժելով, եւ այս շարժումն՝ եռացող ջրի շարժումին կը նմանի։ Նոյն կազը պղպջակներու պէս աւիշին երեսը կ՚երեւի եւ ապա մթնոլորտին մէջ կը կորսուի։

Այսպէս ալքօլն՝ որ այնքան զօրաւոր բան է, անուշ շաքարէն առաջ կուգայ։ Իսկ ֆերմենտ (այսպէս կ՚ըսեն խաղողի շաքարեայ աւիշին) իր անուշ համը կը կորսնցուցնէ եւ գինիի համ կ՚առնու, ինչու որ շաքարը փոխուելով ալքօլ կ՚դառնայ՝ իր նիւթին մէկ մասը կորսնցնելով որ կազի պէս օդը կ՚ելնէ։

Այս կազն ածխաթթու է, ածուխի օքսէիտ (ժանգ) մօտ բան մը, նման այն կազին որ խարոյկէն կ՚ելնէ եւ գլխի ցաւ կուտայ։ Ասոր պէս հալած ածուխ կ՚պարունակէ, թէեւ քիչ, այս պատճառաւ միւսին չափ վտանգաւոր չէ չնչելը։ Սակայն դարձեալ եթէ այն կազը տեղ մը շատ գտնուի՝ չնչողը կը մեռնի։ Գոյն չունի եւ ոչ ալ համ։ Գլխի ցաւ չի տար, բայց եթէ մարդ մը քանի մը անգամ ծծէ՝ կրնայ մեռնիլ։ Ուստի շատ վտանգաւոր է չտեմարան մը մտնել երբոր կազը կ՚ելնէ։ Եթէ չտեմարանը մտնել ուզես՝ պէտք է գաւազանի մը ծայրը մոմ մը կապել. եթէ մոմին բոցը դեղնի, պզտիկնայ

եւ ապա մարի, պէտք է չուտ մը դուրս ելնել, վասն զի ածխային կազը կ՚սպաննէ։

Երբոր մէկ կողմէն խաղողին ալքօլը կազէն կը բաժնուի՝ գինին քաղցուէն կը զատեն։ Այն ատեն գինին կը պարունակէ խաղողին ջուրը որ է չաքարէն զոյացած ալքօլը, վերջապէս նիւթ մը որ խաղողին դունաւոր մասկէն առաջ կուգայ։

Ճերմակ գինին ճերմակ խաղողով կը շինեն, թէեւ սեւ խաղողէն ալ ճերմակ գինի կ՚ելնէ։

Հապա ի՞նչ են փրփրալից գինիներն

Անոնց մէջ ածխային կազ կայ որ շիշին մէջ լեցուելով՝ խիցը բանալու ատեն կը պայթի։

ԳԱՑԱԽ

Իմացա՞ը, աղաս, որ չաքարն ալքօլ կը դառնայ։ Հիմա պիտի զարմանաս իմանալով որ ալքօլն ալ քացախ կ՚ըլլայ։ Ամեն ալքօլ պարունակող ըմպելի կրնայ քացախիլ, բայց ամենէն լաւ քացախը գինիէն կը շինուի։ Եթէ շիշ մը գինի՝ բերանը բաց թողունք՝ քանի մը օրէն գինին կը քացախի՝ մանաւանդ ամառուան տաք ատեն։ Գինին օդին ազդեցութեամբը համը կը փոխէ եւ կը թթուի։ Այս է պատճառն որ գինիի շիշերն ու տակառները լաւ մը կը խցեն որ օդն անոնց վրայ չներգործէ եւ գինին չաւրէ։ Բայց որովհետեւ խիցերէն օդը կ՚անցնի՝ շատ անգամ կնքամոմով կը կնքենք խիցերն, երբոր գինին երկար ատեն պահել ուզենք։ Այս կնքամոմը կրնայ կարմիր, կանաչ, սեւ կամ ուրիշ գոյնով ըլլալ։

Ուրեմն գինին պահպանելու համար պէտք է օդէն հեռու պահել։ Եթէ ամեն օր հաղարակ մը կամ տակառիկ մը բանանք գինի առնելու եւ անզգուշութեամբ գոցենք՝ օդը ներս

կը մտնէ եւ գինին կը թթուեցնէ։ Ուստի աւելի աղէկ է հագաղակին գինին դատ դատ չիշերու մէջ պարպել եւ մինչեւ բերանը լեցնելէն ետեւ՝ լաւ մը խցել որպէս զի օդ չմնայ անոր մէջ։

Ա Շ Խ Է Ն

Ժամանակաւ գիւղի մը մէջ կ'ապրէր բարեսիրտ Աշխէնը։ Իր տնակին բոլորտիքը պարտէզ մը կար, ուր երբեմն իր զաւակներուն հետ պտըտելու կ'երթար։

Օր մը երբ իւր ամուսինը դուրս ելեր էր, իր երկու զաւակները, Տիրուհի ու Յովսէփ, տնակին շրջականները միասին կը խաղային։ Աշխէն յանկարծ աղաղակ մը կը լսէ. այս աղաղակը հանողն իր որդին էր։ Ահ ու դողով տնակէն դուրս կը վազէ և կը սոսկայ տեսնելով որ Յովսէփ՝ իր Տիրուհի քրոջ ձեռքէն բռնած կը բերէր։ Տիրուհի կը դողար ու դոյնը նետեր էր։

«Մայրի՛կ, ըսաւ Յովսէփ, նայէ ի՞նչպէս Տիրուհին ձեռքը կ'արիւնի. իժ մը խածաւ ձեռքը»։

Աշխէն լալով կը պոռայ.

«Ի՜նչ, ի՞ժ մը, ա՜խ, աղջիկս, աղջիկս. շուտ օգնութեան հասէք»։

Նոյն միջոցին մարդ մը անկիւն շուտ շուտ քալելով կ'անցնէր։ Աշխէն աղերսագին ձայնով աղաչեց այս մարդուն որ քիչ մը կենայ և իրեն օգնէ։

«Բարի՛ կին, ըսաւ անցորդը, չեմ կրնար կենալ, ստիպողական գործ ունիմ, դեղ մը միայն գիտեմ իժի խայթուածքի դէմ. պէտք է շուտով շուն մը գտնել որ վերքին թոյնը ծծէ. չո՛ւտ, չո՛ւտ ըրէք որ թոյնը արեան մէջ չտարածուի։»

Անցորդն այս ըսելով անցաւ գնաց։

Աչքէնին խելքը գլխէն կ'երթար. բոլորովին շուարեր էր։ Յուսահատութենէն ինչ ընելիքը չէր գիտեր և դէմքը մեռելի դէմք դարձեր էր։ Բայց յանկարծ ինքզինքին կուգայ, ճակատը կը պարզի, ոտք կ'ելնէ և ուրախութեամբ կը պոռայ։

«Ինչո՞ւ համար չուն մը պիտի ծծէ իմ զաւակիս վերքը։ ո՛չ, չուն մը չպիտի ծծէ։ բայց մայր մը կրնայ ծծել, մայր մը սիրով կը ծծէ։» Ուստի իր աղջկան թևէն կը բռնէ և շրթունքը վերքին վրայ դնելով կ'ոկսի մեծ եռանդով լաւ մը ծծել։

Նոյն միջոցին հայրը ներս կը մտնէ։ Յովսէփ զանի կը դիմաւորէ, պատահած դէպքն և մորն ըրածը անոր կը պատմէ։ Խեղճ հայրը վախէն կը դեղնի, կը դողայ և քովը գտնուած ծառին կը կռթնի որ վար չիյնայ։

«Ի՞նչ ունիս հայր իմ» կը պոռայ տղան և կը վազէ որ զանի բռնէ։

Նոյն միջոցին հօրը ձեռքը գտնուած գաւազանը վար կ'իյնայ։ Յովսէփ կը տեսնէ այս գաւազանը, որու բոլորտիքը մեռած օձ մը գալարեր էր։ Այս տեսնելով Յովսէփ կը զարհուրի ու ետ կը քաշուի։

«Ա՜հ. կ'ըսէ, այս օձն է ահա որ Տիրուհին թևը խածաւ։»

«Ի՞նչ կ'ըսես, որդեակ իմ, կը պոռայ հայրն ինքզինքին գալով, իրա՞ւ, քոյրդ խածնող օձն ասոր նմա՞ն էր։»

«Այո՛, պատասխանեց տղան. բոլորովին ասոր կը նմանէր։»

Այն ատեն հայրը չուն կ'առնէ և ուրախութեան աղաղակ մը կ'արձակէ ըսելով.

«Ա՜հ, օրհնեալ ըլլայ Աստուած, որ Տիրուհին խած-

նող կենդանին իժ մը չէր, այլ պարզապէս օձ մը, որու խայթուածքը վտանգաւոր չէ։ Ուստի Աշխէն Տիրուհիին վերքը ծծելով պիտի չվնասուի, որովհետև օձը թունաւոր չէ։»

Այս խօսքերէն յետոյ՝ հայրն աչքերը արտասուքով լցուած տնակը կը մտնէ, գիրկը կ՚առնէ ապջիկն ու իր սրտին վրայ կը սեղմէ և ուրախութեամբ կ՚ըսէ իր կնոջ դառնալով.

«Ա՜հ, Աշխէն, ո՞րչափ սիրտս թունդ ելաւ երբոր իմացայ այս գիպուածը։ Բայց փառք տանք Աստուծոյ որ օձը թունաւոր չէր։ Դեռ միասին պիտի ապրինք։ երբէք պիտի չմոռնամ այդ մայրաքաղաք գորովոյ գործդ։ երբէք մեր զաւակները չպիտի մոռնան այդ արիութիւնդ։»

ՓՈՔՐԻԿ ՔՈՅՐ

Բարի անցորդ, ըսէ՛ խնդրեմ
Տեսա՞ր արդեօք արտը դիս դեղ,
Անտառին մէջ կամ թէ ճամբան,
Տեսա՞ր միթէ իմ փոքր եղբայր
Որ միանակուկ անշուշտ ժուռ գայր.
Ո՛վ Աստուած իմ փնտռեմ ուստի

Դեղձան ունի գլուխ գանգուր
Սեւ ունի աչեր. ձեռներ գեր. յոյր,
Սիրուն մանկիկ մ՚է լիովին.
Ճամբուն վրայ թէ տեսնէիր
Անտարակոյս 'տի ճանչնայիր,
Կ՚ըսեն նման է ինձ գլխովին:

Ահ, կողքում ես անոր համար.
Չի շաբաթք վեր ա՛ղ չեր խաղար
Ինչպես ինծի հետ սովոր եր.
Իսկ երբ պատՃառ հարցունեի,
Կ'բսեին ինՃ նա կը հանգչի,
Եւ չգիտեմ ե՞ր կը հանգչեր։

Օր մը գացի իր սենեկին,
Գտայ գինին իր անկողնին
Ճիշդ իր բարձին պես ճերմկեկ,
Իր տանդեղն նոր բարձին պես.
Տուի անունը ես սիրապես.
Բայց ի՞նչ օգուտ, միշտ ինՃեր հեք։

Հրեշտակի պես եր նա սիրուն,
Ըզգեստ հագեր եր զարդարուն.
Ինչպես տօնի օրերն ունի,
Իր բեհեզք գոգնոց կոկիկ
Եւ դեղնորակ աղուոր կօշիկ,
Զոր դեռ նոր եր առեր անի։

Ճիտակ գացի ես իր մահճին,
Գացի բերանն ես անուշին,
Սահեցոյ մեղմ վրայ եզրին.
Բայց նա անսաս իմ աղերսին,
Աչք չբացաւ որ նայի յիս . . .
Կ'երեւի թե ինՃեր խորին։

Քիչ մը ետք տեսայ շատոր
Վարդիկ տրտում ու սգաւոր
Որ մի սեւ քան կը տանեին.
Ծաներ եղեգով մեր տան դռնեն.
Ուրդ՝ իմ մոր աչք արտասուք բափեն
Ստաւոսեն ցերեկոյին։

Ալ չի տեսայ ես իմ եղբայր
Ընկայ թեհր ճամբայ տիար.
Եւ բուրաստան պարտեզ ու բակ.
Ամեն տեղ ուր միչտ միասին
Կը խաղայինք տակ կաղնիին.
Դեռ կը փնտռեմ ես շարունակ.

Յուսացի որ գանի գտնեմ
Այս դաշտերը որ միանգամ
Լեցուն էին ծաղիկներով.
Թիթեռներով, որոց թեւեր
Կարծես էին շողուն կայծեր.
Եւ ուզեցի երթալ իր մոտ.

Բայց անո՛ւ տես բոլոր մարգեր.
Եղեւ ծաղիկներ են բառուներ.
Թիթեռնիկներ լեղապատառ
Փախան գացին որ չմնին.
Բոլոր երկիր կ'երերի ներ.
Ձի՞ս զգար դու ո՞ւրչափ է սառ

Անտառին մէջ ո՞ւ խաւարին
Եղբայրս կորած է եղկելին
Անշուշտ եմ որ դողի մէջ է.
Շատ կը մտի կուշայ կողքայ,
Կամ ծուռիր դրած յաղօթս կայ
Ես Տէր Աստուած որ քոյրն կոչէ.

Գիտէ է գտնել իմ եղբօր ինտ
Դեռ եւս չեմ վատասկարելի,
Տէր շատ է անշուշտ իր ձայն
Ո՞ւրչափ իմ մայր տ'ուրախ լինի
Երբոր զուարթ իր մոտ հասնի
Փոքրիկ որդին կորուսեալն

Մ՛ն, ըսէ՛ ինձ, ըսէ խնդրեմ.
Տեսա՞ր արդեօք, արտը դէս դէն,
Անտառին մէջ կամ թէ ճամբան,
Տեսա՞ր մինթէ իմ փոքր եղբայր
Որ միանակուկ անշուշտ ժուռ գայր.
Ո՞վ Աստուած իմ, փնտռեմ ուրեայն։

ՊԱՆՎԱԼԷ

ՓՈՔՐԻԿ ՄԱՐԻԱՄ

Պզտիկ աղջիկ մը, Մարիամ անուն, որ տասներեք տարեկան էր, օր մ՛իր բնակած գիւղէն քաղաք կ՛իջնէ ուրախ զուարթ որ իրեն համար չրջագեստ մը գնէ։ Մարիամ աղքատ ծնողաց աղջիկ մ՛էր եւ կար կարելով քիչ մը ստակ խնայեր էր. այս ստակով պիտի գնէր իւր ուզածը որպէս զի տօնին օրը հագնի։ Ճամբան երթալու ատեն՝ ծեր մարդ մը կը տեսնէ որ յեսին ծայր աղքատ էր ու թշուառ։ Խեղճ ծերը կուլար։ Մարիամ այս ծերուկին քով կ՛երթայ անոր թշուառութեան պատմութիւնը մտիկ կ՛ընէ, սիրտը սաստիկ կը շարժի, իր հագուստը կը մոռնայ եւ իր պզտիկ քսակը ծերուկին կուտայ, մտածելով որ բարի գործ մը ընելով աւելի երջանիկ կ՛ըլլայ մէկը քան թէ աղուոր հագուստներ հագնելով։

ՁՈՒԿԵՐ

Բնագէտ. — Այսօր պիտի խօսինք ձուկերու վրայ։ Ձուկերը բոլորովին պաղ արիւն ունեցող ջրային կենդանիներ են, կաթնաբերներուն ու թռչուններուն պէս իրենց թոքերէն շունչ չեն առնուր, այլ ականջէն։ Ձուածին են եւ ամենքն ալ շատ հաւկիթներ կ՛ածեն. փուշեր ու ոսկորներ ունին։

Գլխաւոր ձուկերն են սոխեր, հրդեհ, յղյուկ, կարմրաթաթ կամ լոպէր, ցիւղուկ, անչրուկ, ռիխտոս, Բաղտ, եւ այլն։

Տոխերը բեւեռային ծովերը չատ կը գտնուին ուսկից վտառ վտառ ուրիշ ծովեր ալ կը ճամբորդեն։

Արիեստաւոր։ — Հիւսիսային ծովու տառեխներն՝ Յունիս ամսուն Սկոտիոյ ջրերը կուգան, եւ իրենց արծաթի պէս փայլուն վտառները քանի մը մղոն տարածութեամբ ծովը կը ծածկեն։ Այն տեղ մանր մանր խումբերու կը բաժնուին, Անգլիոյ ծովեզերքը կը շրջին, յետոյ նորէն միանալով Ովկիանոսէն կ'անցնին եւ Ամերիկայի ծովափունքը կը հասնին, ուսկից ամեն ծոցերը ու պեսերը կ'արշաւեն։ Այս երկար ճամբորդութեան ատեն չատ թշնամիներու կը հանդիպին, որ են ուրիշ ձկներ եւ ծովային թռչուններ, որոնք չատ անգամ տառեխներու խումբը կը ջնջեն։ Սակայն տառեխը չատ չուտով կը բազմանայ։ Էգը մինչեւ 60,000 հաւկիթ կ'ածէ։ Նոյնպէս չատ թշնամի ունեցող ձուկերուն մէջ յղյուկ՝ 3–4 միլիոն հաւկիթ կը հանէ։

Բնագէտ։ — Հրդեհը տառեխէն աւելի պզտիկ է եւ տասը պէս խմբովին կը ճամբորդէ ամեն տարի, մինչեւ Մրջերկրական ծովն ուր չատ կայ։

Արիեստաւոր։ — Անչրուկ ալ ուղեւոր ձուկերէն է, Մայիս ամսուն մէջ՝ Ովկիանոսէն Մրջերկրական ծովը կ'անցնի, ու այլ եւ այլ ծովեզերեայ քաղաքներու ծովախորշերը ու գետերը կը լեցուի։ Զկնորսները գիշերով նաւակներ կը մտնեն, անոնց առաջքը կրակ կը վառեն, որու լոյսէն անձրուկները կը հաւաքուին եւ այսպէս ուռկանով բիւրաւոր անձրուկներ կ'որսան։

Բնագէտ։ — Ջղյուկը ամառուան սկիզբը կ'որսան։ Միայն Նոր–Երկրի ծովերուն մէջ ամեն տարի գրեթէ 25–50 միլիոն ձողաձուկ կ'որսան որսորդները։ Անմիջապէս անոնց գլուխը կը բանան եւ ներսէն ու դրսէն կ'աղեն արեւուն կը չորցնեն եւ յետոյ ծուխ կուտան։

Արիեստաւոր։ — Ձողաձուկին միսը չատ ախորժակով չու-

տուիր։ Թէ թարմ եւ թէ աղած ձողաձուկին լեարդէն եղ մը կը հանեն որ կուրծքի եւ ուրիշ հիւանդութեանց դէմ իբրեւ դեղ կը գործածեն։ Անոր լուղիչ փամփուշտներէն տեսակ մը սոսինձ (քոլա) կը շինեն որ թատափէն եւած սոսինձէն վար չի մնար։ Ձողաձուկն եփելէն առաջ պէտք է քսան եւ չորս ժամ ջրի մէջ դնել որպէս զի աղն անցնի։

Բնագէտ. — Թռռ կամ Ռիւռռ ալ բաւական մեծկակ ձուկ մըն է մէկէն մինչեւ երկու կանգուն երկայնութիւն կ'ունենայ եւ կան որ 300 հազարակրամ կը կշռեն։ Ցեռին ծայր որկրամոլ է, այլ եւ այլ ձուկեր ուտելով կը անանի։

Արիստաւոր. — Միսը ճերմակ է. թէ՛ թարմն եւ թէ աղածն ու թէ՛ եղի մէջ պահուածն համով է։ Այս ձուկէն եղ կը հանեն զոր խաղախորդները կը գործածեն.

Բնագէտ. — Թռռէը առառուտ ձուկ մ'է, այսինքն իր ողնայարը ոսկրուտ, կարծր չէ այլ փափուկ։ Լաւ սոսինձ կուտայ կամ ձուկի ելը, որ ժապաւէններ փայլեցնելու կը գործածուի։ Գետերը կը մանէ եւ մինչեւ հարիւր մղոն գետին բերնէն ներս կ'արշաւէ։

Արիստաւոր. — Նոյնպէս ըռռի ձուկն, որու միսը կը կարմրի երբոր եփուի, գետերէն վեր կ'ելնէ եւ լիճերու մէջ կը գտնուի։ Մարդու չափ կը մեծնայ Շատ առատ կայ Կասպից ծովուն մէջ։ Այս ձուկէն ռղիր (խաւեար) կը հանեն։

Բնագէտ. — Կան տեսակ մը ձուկեր, ինչպէս ելեկտրոն օյոները ու Ներկոը որ ելեկտրական գործիք մը ունին։ Ասով այնպէս մը կը զարնեն ուրիշ ձուկերու զորս կը սատակեցնեն։ Ներկէսը կամ Ռմբրոյները կարող է այս կերպով մարդ մը եւ մինչեւ անգամ ձի մը տապալել։

Արիստաւոր. — Կան նաեւ տեսակ մը ծանօթ ձուկեր, ինչպէս գոյլոները, ռուշները, լեզոյները Ռիւնկը, գիւռնոները, ֆոհոնոները, կորմրոյոը, օյոները, եւ այլն, որք կարթով եւ կամ ուռկանով կը բռնուին եւ ընդհանրապէս թարմ կ'ուտուին։

ՇԱՆԱՃՈՒԿ

Բնագէտ. – Այս ճուկը ծովու կենդանիներուն մէջ ամենէն կատաղին ու վտանգաւորն է։ Տաք երկիրներու ծովերը կը գտնուի եւ մինչեւ Միջերկրական ծովն կ՚իջնէ։ Իր միջին երկայնութիւնն է 4–5 կանգուն. բայց 7–8 կանգուն երկայնութիւն ունեցող շանաճուկ ալ տեսնուած է։ Իր ահագին կոկորդը վեց շարք ակռայ ունի, որ կղակին ու բերանին առաստաղին վրայ դրուած են եւ ուղածին պէս առջեւի ու ետեւի կողմը կը շարժէ։ Այս գաղանը սարսափ կ՚ազդէ ամեն ծովային կենդանիներու՝ երբոր իր զօրաւոր լուղակները կը շարժէ եւ նետի պէս իր որսին վրայ կը վազէ, բերանը բաց եւ շողուն աչքերով։

Արիւնտաւոր. – Շանաճուկները նաւերու բոլորտիքը կը շրջին եւ որսի կ՚սպասեն։ Եթէ անխոհեմ նաւաստի մը լողալու համար ծովը նետուի, այն միջոցին որ շանաճուկը որս կը փնտռէ, անտարակոյս անոր կոկորդէն չազատիր։

Շանաճուկին լեարդէն երկու տակառիկ եղ կրնայ ելնել, զոր վառելու կը գործածեն. նոյնպէս մորթը իբրեւ կաշի կը գործածեն եւ սեկէն շատ չի տարբերիր։

ԳԱՄՄԸ

Հնդկաստանի բնակիչները սովորաբար ծոյլ են։ Օր մը՝ եւրոպացի ճամբորդ մը գաչտերը պտտելու ատենը՝ հնդիկ մը տեսաւ որ իր արար մշակելէն ու ցանելէն ետեւ՝ ցանկապատ մը կը քաշէր անոր բոլորտիքն որ զայն պահպանէ։ Այս մարդուն գործունէութեան վրայ զարմանալով՝ եւրոպացին ըսաւ անոր.

«Բարեկամ առհասարակ բոլոր հնդիկները ծոյլ են, իրենց օրը պարապ կ'անցունեն։ Դու ընդհակառակն՝ չարունակ կ'աշխատիս։ Ի՞նչ է այդ գործունէութեանդ պատճառը։»

Հնդիկը պատասխանեց.

«Ես ալ առենօք դանդաղ մարդ էի։ Ծովու ձուկերն ու օդի թռչուններն աշխատութեան դաս տուին ինձ։ Երբոր գեռ պատանի էի, ասդիս անդին կը թափառէի եւ գործ մը չէի ըներ իմ հայրենակիցներուս պէս։ Կ'ըսէին ինձ որ միայն սեւ ու ձերմակ մարդիկ պէտք էին աշխատիլ, իսկ Հնդիկները ստեղծուած են միայն որսի երթալու եւ եղջերու, կուղբ, ջրաղուէս եւ ուրիշ կենդանիներ որսալու համար։

«Բայց օրին մէկը, երբոր կ'որսայի՝ գետի մը ափունքը հասայ եւ նստայ որ քիչ մը հանգչիմ։ Այն տեղ զարմացայ մնացի տեսնելով արեւաձուկերու ճարպիկութիւնն, որով մանր մունր քարեր իրարու վրայ կը դնէին որպէս զի իրենց հաւկիթներուն համար ապահով տեղ պատրաստեն։ Եւ բոլոր այս գործն իրենց բերնով ու մարմնով կը կատարէին, առանց ձեռքի։

«Նոյն միջոցին՝ փոքրիկ թռչուն մը՝ որ ինձմէ հեռու չէր, սկսաւ երգել. եւ երբոր այս փոքրիկ երգողին կը նայէի, իր ընկերը կտուցին մէջ կրցածին չափ խոտեր առած՝ իմ քովէս անցաւ։ Այն ատեն երկուքն ալ մացառներուն մէջ մտան եւ այն տեղ իրենց բոյնը սկսան շինել, եւ շինելու ժամանակ կ'երգէին։

«Ես բոլորովին մոռցայ իմ որսորդութիւնս եւ իմ աչքիս առջեւ անցած դարձածը կը դիտէի։ Օդին մէջ տեսայ թռչուններ, ջրին մէջ ձուկեր, որ ժրութեամբ եւ ուրախ զուարթ կ'աշխատէին, թէեւ ձեռք չունէին։ Այլանդակ երեւցաւ ինձ այս բանս եւ չուարած կը նայէի։

«Այն ատեն իմ վրաս նայեցայ. տեսայ իմ թեւերս որ ձեռքեր ունէին, նոյնպէս մատներ՝ այնպէս որ ուզածիս պէս

կրնայի բանալ ու գոցել։ Կարող էի, երբոր ուզէի, այս ձեռօք բան մ՝առնել, թողուլ կամ հետս տանիլ։

«Երբոր սկսայ քալել, գիտեցի որ ուժեղ մարմին մը ունէի, որով կրնայի ծանր աշխատանքի դիմանալ։ ունէի կորովի սրունքներ, որով կրնայի ամենէն բարձր լերան գագաթն ելնել եւ ամենէն սաստիկ հովիտը իջնել։

«Եւ միթէ կարելի՞ է, կ՝ըսէի ինքնիրենս, որ այս զարմանալի մարմինն ունենալով ծուլութեան մէջ ապրելու ստիպուած ըլլամ, մինչդեռ թռչուններն, որ բնաւ ձեռք չունին այլ միայն պզտիկ կտուցներ. այնչափ ուրախ զուարթ կ՝աշխատին, թէեւ մէկն իրենց ըսող չկայ որ աշխատին։

«Միթէ արարիչն՝ այս ոտքերն ու ձեռքերն անգո՞ւթ պահելու համար տուած է ինձ։ Այս կարելի չէ։ Պէտք է որ ես ալ երթամ գործելու։

«Եւ իրօք գործի սկսայ։ Իմ գիւղիս մօտակայ կողմերը արտ մ՝առի ցանկով պատեցի, հիւղ մը շինեցի, ցորեն ցանեցի եւ կովեր ու ոչխարներ պահեցի։

«Այն ատենէն ի վեր ախորժակս բացուեցաւ եւ աւելի հանգիստ քուն ունեցայ։ Երբոր ուրիշ մարդիկ պարելով իրենց օրերը կ՝անցնեն եւ անօթութեամբ կը տառապին, ես ամէն բան առատութեամբ կը վայելեմ։ Ունիմ ձիեր, կովեր, խոզեր ու հաւեր, երջանի՛կ եմ։ Այսպէս, բարեկամ, թռչուններն ու ձուկերն ինձ դաս մը տուին եւ աշխատելու դրդեցին։»

Երբ պատանի մը աշխատութենէ կը փախչի եւ զայն տաժանելի կը դատէ, պէտք է դաշտերը ու գետերը երթայ եւ այս տղէտ Հնդիկին պէս անբան կենդանիներէն դաս առնու։ Այն տեղ պիտի տեսնէ մրջիւններ որք անդուլ կ՝աշխատին իրենց բնակարանը չինելու, ձուկեր պիտի տեսնէ որք իրենց քարակոյտը կը չինեն, թռչուններ՝ որք իրենց բոյնը կը պատրաստեն, եւ փոքրիկ գործունեայ մեղուներ՝ որք ծաղիկներու վրայ թռթռալով մեղր կը ժողվեն։

Բոլոր այս մանր արարածները իրենց վիճակէն գոհ կ՝ե-

բեւին։ Եթէ Աստուած ստեղծեց զանոնք որ երջանիկ ըլլան, ինչո՞ւ համար այսպէս չստեղծեց որ ծոյլ ու անօգուտ կեանք մը անցուցեն. անտարակոյս անոր համար՝ որ ԷՐԳՈՒԹԻՒՆը կարեւոր է եթէ մարդ կ'ուզէ վայելել այս աշխարհիս բաները։ Եթէ կ'ուզես երջանիկ ըլլալ, ջանա՛ ուրեմն գործունեայ ըլլալ։ Անշուշտ ծուլութենէ է որ մարդ գժգոհ, ողորմելի եւ թշուառ արարած մը կը դառնայ։

ԹՈՒԼԱՏԱՐԻ ԵՒ ԳԵՆԳԱՆԱՒՈՏ

Բնագէտ. — Հիմակ պէտք է խօսիլ ամենէն պարզ կենդանիներու վրայ։ Ասոնք կը կոչուին ԲՈՒԼԱՏԱՐՔ կենդանիներ, ինչու որ թոյլ են, ոսկր չունին, այլ շատ անգամ խեցիով մը ծածկուած են, ինչպէս ոստրէն . . . ։

Արիեստաւոր. — Ոստրէն որ յարգի է իր գաղտակուրին եւ մարգարտին համար։

Բնագէտ. — Ճշմարիտ մարգարիտները տեսակ մը կըղկղանք են որ կենդանիէն կ'ելնէն եւ կը զատուին ճերմակ ու փայլուն փոքրիկ գնդակի մը ձեւով։ Մարգարիտներ ալ կան որ չինծու են, եւ ձուկի մը թեփէն կը շինեն։

Արիեստաւոր. — Նոյնպէս ոստրէն փափուկ կերակուր մ'է. ուստի յատուկ ձկնորսներ կան որ զայն կ'որսան եւ սապատներով կը ծախեն քաղաքներու մէջ։

Բնագէտ. — Թուլատարք են նաեւ ԽԷՐՆԵՐԸ, որոց այլ եւ այլ տեսակը կայ. թխապոյն, սպիտակ, մոխրագոյն, ինչպէս նաեւ ԳԷՂԷՐԸ, եւ ԸՀԸ։

Արիեստաւոր. — Լոքէն սեւ գոյն մը կը հանէն, ինչպէս որ հին ժամանակ ծիրանի գոյնը կը հանէին, այսինքն մանիշակագոյն կարմիր գոյնը՝ խեցիէ մը որ այսօր անհանօթ է։

Բնագէտ. — ԿԵՆԴԱՆԱԲՈՅԵՐՆ այնպիսի արարածներ են որ

կէտ մը կենդանի եւ կէս մը բոյս են։ Շատերը ջուրին մէջ եւ ծովերու ու ժայռերու վրայ է՛ապրին, ինչպէս են սպունգը ու բաղմոցները։

Աբիեատաւոր։ — Երբոր սպունգը չորցնեն եւ մաքրեն՝ շատ բաներու կը՞գործածուի։ Իսկ բաղմոցները որ բոլոր կ՛արտադրեն, վարդագոյն, մանեակ եւ կարմիր ու գեղին ապարանչաններ չենելու կը ծառայեն

Բնագէտ։ — Մնայուն ջրերուն՝ մէջ կ՛ապրին ջրածին որդերը։ Այնքան մանր են որ խոշորացոյցով կամ դիտակով բիւրաւոր որդեր կարելի է տեսնել կաթիլ մը ջրի մէջ։

ՀՇՄԱՐԻՏ ԳԹԱՍԷՐՈՒԹԻՒՆ

Օր մը սպասաւորը գալով Սոգէ Եպիսկոպոսին, որ Պօրտօ քաղաքին առաջնորդն էր, ըսաւ.

— Տէր իմ, խեղճ մուրացկան կին մը դուռը կեցեր է ողորմութիւն կը խնդրէ, ի՞նչ կ՛ուզէք չնորհել անոր։ — Քանի՞ տարեկան է, հարցուց Եպիսկոպոսը։ — Եօթանասուն տարեկան է։ — Միթէ չա՞տ թշուառ է։ — Այո՛, կ՛ըսէ որ շատ թշուառ է։ - Պէտք է խօսքին հաւատալ. ուրեմն քսան եւ հինգ ֆրանք տուր անոր։ - Քսան եւ հի՛նգ ֆրանք. Տէ՛ր իմ, ա՛յդ՝ չափէն աւելի գումար մ՛է. ասկէ դատ՝ մուրացող կինը մեր կրօնքէն չէ, հրէայ կին մ՛է։ — Հրէա՛յ կին մ՛է, տէր Աստուած իմ, գոչեց առաջնորդը։ — Այո՛, Տէր իմ, հրէայ է։ — Ա՛հ, այն ատեն խնդիրը կը փոխուի, ուրեմն յիսուն ֆրանք տուր եւ չնորհակալ եղիր անոր այցելութենէն։»

Սպասաւորն ամօթապարտ մնալով Եպիսկոպոսին հրամանն անմիջապէս կատարեց։

Ամէն մարդիկ, ինչ կրօնքէ ու ազգէ որ ըլլան, եղբայր են՝ ճշմարիտ գթասէր մարդուն առջեւ։

ԲՈՒՅՍԵՐ

Բ.

Երկրագործ. — Քաղաքներու ազգակէն հետի՝ երկրագործը հանդարտիկ կ՚ապրի Արմրէ մշակելով, ինչպէս՝ ցորէն, հաճար, վարսակ, բրինձ եւ այլն, որ քաղաքի ու գիւղի բնակիչներու մնունդ կը հայթայթեն։ Նոյնպէս կը մշակէ մարգագետիններու վրայ առւոյա, երեքնուկ, ասպատ, որով խաղ կը շինեն արջառներու համար, խոտունձքի ժամանակ։

Շատ տեղեր ծխախոտ ալ կը մշակեն, որ թէեւ վնասակար առունկ մ՚է, բայց շատ տարածուած է իրրեւ ծխելիք, իսկ գետնախնձորն, որ պտուղ չէ, այլ խլուունկ մը՝ առունկի մը արմատներուն վրայ, շատ օգտակար ալիւրոտ մնունդ մ՚է ինչպէս նաեւ ճակնդեղը։

Արհեստաւոր. — Արհեստաւորն է որ ճակնդեղի արմատէն շաքար կը շինէ. շաքարը միայն շաքարեղէգէ կը հանուէր առեն մը, Հնդկաստանի եւ Ամերիկայի մէջ, եւ որ իրրեւ դեղ կը գործածուէր գեղարուեստներն, այնքան սուղ էր անոր գինը։

Պէտք չէ մոռնալ նաեւ որ երկրագործը կը մշակէ նաեւ մեկոնն, կանճակն (colza) վուշն, կանեփն, ընկուզենին, եւ այլն։ Եւ արհեստաւորն այս առունկերէն կը հանէ ձէթի նման իւղ։ Իսկ տղկաղատի (ricin) եւ քրօտոնի (croton) իւղը միայն իրրեւ դեղ կը գործածեն։ Վշենիի եւ կանեփի կեղեւներէն կամ թելերէն կը շինեն ու կը ծախեն կարժի կամ կծիկի ձեւով դերձանոցներ կար կարելու համար, նոյնպէս այդ դերձանոցով կը շինեն կտաւներ, քալիկո (խատ), հնդկակտաւ (indienne) պատատ, խիտ կտաւ, (couti) թաւիշ եւ մինչեւ անգամ բարակ շղարշներ։ Բամպակենիէն կը հանեն բամպակը։

Պարտիզպան։ — Մրգաստանն ունի իր պարտիզպանն, որու մէջ կը մշակէ զանազան պտղատու ծառեր, ինչպէս՝ տանձենի, խնձորենի, կեռասենի, նարնջենի, դեղձի, ծիրանի, իսկ նուշը, կաղինը, զղեարը, թուզը, կիտրոնը, չագանակը, նուռն եւ այլն, պտուղներ են, որոց անուններէն դիւրին է գտնել ծառերն, որոց վրայ կը բուսնին։

Սերկեւիլն մեզ կուտայ սերկեւիլ, կաղնին՝ խոզկաղին։ Կան նաեւ հեռաւոր երկիրներու պտուղներ՝ ինչպէս, արմաւը, պիստակն, սակոն, պանան, քաքաօ՝ որմէ կը շինուի տուրմը եւ այլն։

Ցիշենք նաեւ ելակենին, մօրենին, հաղարջենին, որոց պտուղները չատ զովարար եւ անուշ են։ Հապա ո՛րքան յարգի է որթատունկը, որ մեզ գինի կուտայ, գայլուկն, որով գարեջուր կը շինեն, խնձորն, զոր ճղմելով մրգոզի կը պատրաստեն։

Ըմպելագործ։ — Այս արհեստաւորն ալ կրնայ ըսել թէ ՝ (գիւղի) կը շինէ գիէն, որ սեսակ մ՝անգլիական օղի է, անիսոնն, որմէ կը շինուի անիսօղի, վայրի կեռասն, որու կուտէն կը հանէն կիրշ (kirsch) անուն ըմպելի մը, որ կը պարունակէ բրուսական թթու, սոսկալի թոյն մ՝որու մի կաթիլը կը բաւէ չուն մը սպաննելու համար։ Այս իրաւ է որ չատ քիչ քանակութեամբ կը խմուի այդ ըմպելին, մինչդեռ ուրիշ ըմպելի մ՝որ օշէնդրէ (absinthe) կ՝շինուի թէեւ ախորժահամ, վնասակար է եւ ասելի չատ կը գործածուի Եւրոպա։

Համեմներն ալ տարաշխարհիկ արտադրանք են, ինչպէս, ՀՈՒԼՕՂԷՆ որ ամերիկեան ձուածաղիկէ մը կը հանեն, հնդկապղպեղ որ սեսակ մը հիրիկի արմատն է։ Պղպեղն, սուրճն, մշկնկոյզը, կասիան, մեխակն զանազան տունկերու պտուղներն են։

ԳՈԼՈՄՊՈՍ

Ճենովա քաղաքին մէջ Գ-ը-ն-դ-ս անուն ուչիմ պատանի մը կար՝ որու նախնիքը թէեւ ազնուական ու հարուստ էին, բայց հայրը, Տոմինիկոս, ձախորդութիւններ կրելով՝ թշուառ ու չքաւոր կ'ապրէր։ Տոմինիկոս իր որդին Բաւիա զրկեց որ ուսմունք սորվի։ Գոլոմպոս քիչ ատենուան մէջ շատ առաջ դնաց. իր խելքը միայն աշխարհագրութեան տուեր էր։ Հին ճամբորդներու եւ աստղաբաշխներու գիրքերը կը կարդար, այնպէս որ իր ժամանակին ամենէն երեւելի աշխարհագէտն եղաւ։ Երեսուն տարեկան էր երբ Նաբոլիի թագաւորին պատերազմական մէկ նաւուն նաւապետն եղաւ։ Բայց իր հայրենիքը խռովութիւններ ծագելով՝ Բորթուկալի Լիզպոնա քաղաքը գնաց բնակելու եւ այն տեղ պաշտօն մը գտաւ։ Նաւերու համար աշխարհացոյց տախտակներ կը շինէր։ Բայց իր անհանգարտ եւ գործունեայ բնաւորութեան տնտարմար էր այս պաշտօնը, կ'ուզէր ծովերու վրայ ճամբորդել։

Այն ատենները Բորթուկալի ժողովուրդը շատ յաջողակ եւ զօրաւոր էր ծովու վրայ, եւ իր նշանաւոր նաւապետներէն մէկը Վ-ա-ս-ք-ը Կ-ա-մ-ա, Բարեյուսոյ Գլուխը գտաւ։ Այնուհետեւ Գոլոմպոս այլ եւ այլ ծովային ճամբորդութիւններ ըրաւ Ովկիանոսին մէջ։ Ինչ որ տեսնէր կը գրէր տետրակի մէջ եւ ըրած գիւտերը իր սորված բաներուն հետ կը բաղդատէր։ Շատ անգամ անուանի նաւապետներուն հետ կը խօսակցէր եւ անոնց կ'ըսէր թէ արդեօք կարելի չէ՞ր Մ-ա-ք-ս Բ-ը-ռ անուն հին նաւորդին նկարագրած Թ-Ր-Ի-Ն եւ Շ-Ի-Ն-Ա-ն աշխարհները գտնել դէպ ի արեւմուտք նաւարկելով։ Վասն զի Գոլոմպոս այնպէս կը կարծէր որ եթէ նաւ մը Բորթուկալէն կամ Ֆրանսայէն ելնելով շարունակ դէպ ի արեւմուտք երթար, նոր երկրի մը կամ Ճապոնի ու Չինաստանի եզերքը պիտի հասնէր։

Ուսաի միտքը դրաւ իր այս մեծ խորհուրդը կատարելու, բայց բաւական ստակ չունէր որ նաւերը պատրաստէ եւ ճամբայ ելնէ։ Նախ իր խորհուրդը Ճենովայի կառավարութեան յայտնեց բայց Ճենովացիք մերժեցին։ Յետոյ Բորթուկալի թագաւորին գիմեց եւ իր միտքը բացատրեց։ Թագաւորը հրամայեց որ Գոլոմպոսի առաջարկութիւնը քննեն Աշխարհագէտ եւ գիտուն մարդիկ տեսան որ Գոլոմպոս փաստերով կը հաստատէր թէ նոր աշխարհ մը պիտի ըլլայ երկրագունտին միւս կողմը։ Բորթուկալի թագաւորն ուղիղ մարդ չէր, վասն զի ուզեց որ Գոլոմպոսէն գաղտնի այս ճամբորդութիւնն իր նաւապետներն ընեն որպէս զի եթէ նոր աշխարհ մը գտնեն՝ ինք միայն անոր օգուտը քաղէ։ Ասոր համար մէկ քանի նաւապետի հրամայեց որ ճամբայ ելնեն։ բայց ասոնք քիչ մը ատեն Ովկիանոսին մէջ նաւարկելէ ետեւ ետ դարձան, վասն զի վախցան աւելի առաջ երթալ եւ եկան ըսին թագաւորին որ Գոլոմպոս խենդ է, եւ նոր աշխարհ մը չկայ։

Այսպէս ամիսներ անցան որ խելացի մարդիկ նոր բան մը, գիւտ մը, ճշմարտութիւն մը գտնել ուզեն յիմարի տեղ կ՝անցնին։ Սակայն Գոլոմպոս չվհատեցաւ։ իր եղբայրը Լոնտոն գրկեց որ անգլիական կառավարութենէն օգնութիւն խնդրէ եւ ինքն 1484ին Լիզպոնայէն ելնելով ծածուկ Սպանիոյ Բ-ը նաւահանգիստը գնաց որպէս զի իր խորհուրդը Ֆէրտինանտ թագաւորին յայտնէ եւ անոր պաշտպանութիւնն ուզէ։ Այս թագաւորն ալ բանի տեղ չդրաւ անոր խնդիրն եւ ասոր վրայ Գոլոմպոս ելաւ որ Ֆրանսա երթայ։ Բայց Ֆէրտինանտ թագաւորին կինն՝ Իզապէլ թագուհին՝ մտածելով որ այս մարդուն խորհուրդը կրնայ իրականանալ, շուտ մը անոր հետեւէն մարդ գրկեց եւ իր քովը կանչել տալով խոստացաւ իր յատուկ քսակէն ճամբորդութեան ծախքը հոգալ։

Այսպէս Գոլոմպոս ութ տարի շարունակ աշխատելէն յետոյ՝ կը յաջողի Իզապէլ թագուհւոյն պաշտպանութիւնն ստանալ եւ անոր հետ պայման կը դնէ որ ինչ նոր երկիրներ

որ գտնէ՝ անոնց փոխարքային ըլլայ։ Թագուհին կը հրամայէ որ երեք նաւ տան Գոլոմպոսի, որոց մէջ կային հարիւրէն աւելի նաւաստիներ։ Գոլոմպոս 1492 ին ճամբայ կ'ելնէ, նախ Քանարեան կղզիները կը հանդիպի եւ երեք օր այնտեղ մնալէն ետքը իր նաւերը դէպ ի արեւմուտք կ'ուղղէ, նոր աշխարհ մը գտնելու։

Բնաւ նաւաստի մը այսպիսի դժուարին եւ նշանաւոր ճամբորդութիւն մը չէր ըրած անծանօթ ծովերու մէջ։ Թէեւ ծովը հանդարտ եւ հովը յաջող էր, բայց Գոլոմպոս մեծ նեղութիւն կրեց իր նաւաստիներուն երեսէն, որ այս երկար ճամբորդութեան պատճառաւ չարունակ կը գանգատէին, ատեն ատեն, գլուխ կը վերցնէին եւ մինչեւ անգամ յուսահատելով՝ կ'ուզէին Գոլոմպոսը ծովը նետել եւ հայրենիք վերադառնալ։ Բայց Գոլոմպոս, որ միշտ հանդարտ էր եւ անվրդով, կը յորդորէր իր մարդիկն որ համբերեն, իրեն հնազանդին, ծովու վրայ երեւցած խոտեր, օդին մէջ թռչող նոր տեսակ թռչուններ կը ցուցնէր անոնց եւ կ'ապահովցնէր որ այսչափ դժուարութիւններէ ետքը՝ իրենց նպատակին պիտի հասնին եւ նոր աշխարհ մը պիտի գտնեն։ Եւ իրօք 1492 Հոկտեմբեր 12 ին, այս նոր աշխարհը տեսան եօթանասուն օր նաւարկելէն ետեւ։ Բոլոր նաւագն ուրախութեան աղաղակներ արձակեցին երբոր հեռուէն ցամաք երկիր տեսան, եւ ամենքը Գոլոմպոսի ոտքն իյնալով ներում խնդրեցին իրենց անխոհեմ ընթացքին համար։ Վերջապէս տաւօտեան դէմ, դալարաւէտ բլուրներ ու հովիտներ տեսան եւ նաւերն դէպ ի այն կողմն ուղղեցին։ Մովեզրին վրայ վայրենի մարդիկ կեցած կը նայէին։ Գոլոմպոս նաւակ մը մտաւ եւ ցամաք ելաւ, եւ երբոր բոլոր նաւաստիները հասան՝ խաչ մը տնկեցին գետինն եւ անոր առջեւ ծունկի եկով աղօթք ըրին Աստուծոյ որ զիրենք այս երկար ուղեւորութեան ատեն պաշտպանեց։

Գոլոմպոսի այս գտած երկիրը կղզի մ'էր։ անոր անունը Սան Սալվատոր, այսինքն Սուրբ Փրկիչ գրաւ՝ եւ յանուն Սպա-

նիոյ թագաւորին գրաւեց։ Բայց հետզհետէ ուրիշ երկիրներ ալ գտաւ եւ վերջապէս Ամերիգոյ անուն մարդ մը այս նոր երկիրները պտտելով՝ նկարագրեց եւ իւր անուամբ այս նոր աշխարհն՝ Ամերիկա կոչուեցաւ։

ԱՆԻՄԻՆ

Օր մը՝ Զարեհ ու Զարուհի, եղբայր ու քոյր, այս խօսակցութիւնն ըրին։

Զարուհի։ — Ինչո՞ւ համար լուսնին ճառագայթները արժէքոյն են եւ արեւուն ճառագայթները պայծառ։

Զարեհ։ — Ինչու որ արեւն ինքնին կը վառի բոցի պէս, մինչդեռ լուսինն իր լոյսը արեւէն կ՚առնէ եւ մեզի կը զրկէ։

Զարուհի։ — Բաւական աղէկ չեմ հասկնար։

Զարեհ։ - Երբոր մութ խուցի մը մէջ գտնուիս անոր մէջ եղած՝ ամէն բաները չես տեսներ, բայց երբ հրաց բերեն ներս բոլոր առարկաները կը փայլին քու աչքիդ առջեւ։ այսպէս ալ լուսինն արեւէն լուսաւորուելով կը փայլի։

Զարուհի։ — Բայց ինչո՞ւ լուսինն ու արեւը մէկտեղ չենք տեսներ։ Արեւն ի՞նչպէս կրնայ լոյս տալ դիշերով լուսնին։

Զարեհ։ — Երբոր լուսինը մեր հորիզոնէն վեր է եւ արեւն վար, արեւը չատ աղէկ կրնայ լուսաւորել լուսինը, թէեւ մենք չենք տեսներ զայն։

Ենթադրենք թէ մեր տան վերի դասիկոնը լամպար մը դնուի եւ այս լամպարին վերեւն արեւնակ մ՚ունենանք։ Երբ իրիկունն այդ արեւնակին վրայ ելնես, անշուշտ անոր տակը գտնուող լամպարը չը պիտի տեսնես բայց դիմացդ եղող պատն այդ լամպարէն կը լուսաւորի եւ քեզի լոյս կը զրկէ։ Նոյնպէս լուսինը մեզի կը հասցնէ արեւէն առած լոյսը։

Զարուհի։ — Ինչո՞ւ համար լուսինն երբեմն կլոր եւ երբեմն մահկաձեւ կ՚երեւի։

Զարեհ. — Ինչու որ լուսինն երկրիս բոլորտիքը կը դառնայ, եւ իր գանուած դիրքին նայելով՝ արեւէն քիչ կամ շատ կը լուսաւորուի։

Զարուհի. — Ուրեմն արեւը ամբողջապէս չի՞ լուսաւորեր լուսինը։

Զարեհ. — Ի հարկէ շատ շատ կէսը կրնայ լուսաւորել։ Ճրագի մը առջեւ գնտակ մը դիր, եւ պիտի տեսնես որ միշտ անոր կէսը մութը կը մնայ։

Զարուհի. — Ուրեմն միայն կէս լուսի՞նը կրնանք տեսնել։

Զարեհ. — Անշուշտ. եւ երբոր այս կէսը բոլորակի ձեւով կը տեսնենք՝ կ'ըսենք լիալուսին է։ Մենք երկրիս վրայ կը նմանինք մրջիւնի մը որ նարնջի մը վրայ կը գտնուի եւ լուսնակին այլ եւ այլ ձեւերն որով մեզի կ'երեւի՝ կ'անուանենք երեւոյթ լուսնի։ Լուսնին մահիկը գիտելով կրնանք ըսել թէ արեւն ո՛ր կողմէն կը լուսաւորէ լուսինը։

Զարուհի. — Ի՞նչպէս։

Զարեհ. — Երբոր նարինջ մը ճրագին առջեւ դնես՝ լուսաւորած մասն այդ ճրագին դիմացը կ'իյնայ. ուրեմն՝ լուսնի մահիկն արեւուն դիմացը կ'իյնայ։

Զարուհի. — Լուսինն ո՞րչափ ժամանակի մէջ իր շրջանը կը կատարէ։

Զարեհ. — 27 օր, 5 ժամ, եւ 43 վայրկեան։

Զարուհի. — Արեւուն չափ մե՞ծ է։

Զարեհ. — Ո՛հ, ո՛չ։ Արդէն ըսինք որ արեւն երկրէս շատ մեծ է. իսկ երկիրն ալ 49 անգամ աւելի մեծ է քան լուսինը։

Զարուհի. — Ինչո՞ւ համար լուսինը արեւուն չափ խոշոր կ'երեւի։

Զարեհ. — Ինչու որ լուսինը մեզի շատ աւելի մօտ է։ Եթէ չոգեշարժ կառք մը՝ ժամն ութ մղոն տեղ քալելով երկրէս դէպ ի լուսինն երթար առանց կենալու, պիտի հասնէր մէկ տարուան, չորս ամսուան եւ տասն օրուան մէջ։

Զարուհի. — Կ'ուզէի լուսնին երթալ որպէս զի մօտէն տեսնեմ թէ ի՞նչպէս է։

Զարեհ։ Մեծ խոշորացույցով լուսնին մէջ լեռներ կը տեսնուին։

Զարուհի։ — Միթէ լուսնին մէջ բնակիչներ կա՞ն։

Զարեհ։ — Սոյգ չգիտցուիր։ բայց կը կարծուի որ եթէ բնակիչ ալ կայ մեզի չպիտի նմանին, ինչու որ մթնոլորտ չկայ լուսնին բոլորտիքը։ Գիտես որ եթէ մթնոլորտ չըլլար, պիտի չկարենայինք շունչ առնուլ եւ ապրիլ։

Զարուհի։ — Եթէ լուսնին մէջ բնակիչներ կան կարելի է որ անոնք ալ մեր երկիրը կը նշմարեն, ինչպէս որ մենք կը նշմարենք լուսինը։

Զարեհ։ — Կարելի է, եւ այն տեսն արեւէն լուսաւորուած երկրին մասն ալ անոնց աչքին այնպէս կը փայլի՝ ինչպէս կը փայլի լուսինը մեր աչքին։

Զարուհի։ — Դիտա՞ծ ես որ լեցուն լուսինը գէմքի կը նմանի, կարծես թէ աչք, քիթ եւ բերան ունի։

Զարեհ։ — Այո՛, բայց այն սեւ բիծերն լեռներու տատերներն են։ Այս բիծերէն մէկ քանին ալ հողին գոյնէն կամ լուսնին երեսը գտնուած խորունկ հովիտներէն յառաջ կուգան, կ՚ըսեն։ Միշտ նոյն բիծերը կը տեսնենք, այսինքն նոյն լեռներն եւ նոյն հովիտները, տակից կը հետեւի որ միշտ լուսնին նոյն կէսը կը տեսնենք։ Եթէ միւս կէսը տեսնէինք՝ կարելի է ուրիշ բիծեր ալ երեւէին։

Զարուհի։ — Ուրեմն լուսինն չոնչանի պէս չի դառնար ինչպէս կը դառնայ երկիրը։

Զարեհ։ — Ո՛չ։ լուսինն երկրէս բոլորտիքը կը դառնայ՝ մարդու մը պէս որ ծառի մը բոլորտիքը կը դառնայ, միշտ այն ծառին նայելով, այնպէս որ ծառին կողմը միշտ մարդուն նոյն դէմքը պիտի տեսնուի առանց երբէք կռնակը տեսնուելու։

Զարուհի։ — Այն ժամանակ լուսնին կէսին վրայ գտնուող բնակիչները կրնան մեզ տեսնել։

Զարեհ։ — Յայտնի է թէ լուսնէն մեզ տեսնելու համար՝ պէտք է լուսնին այն մասին վրայ գտնուիլ որ մեզի դարձած է։

ԾԱՐԵԱՆ

Սարեկին մէկը պզտիկ հասակէն
Դեղձանիկի պէս կը սուլեր կ'ըսեն.
Այնպէս որ իրեն ձայնն որ լսէիր
Սա դեղձանիկ է, չէ սարեակ կ'ըսէիր։

Մե՜ղք որ սարեակն ալ մէկուն պէս նախանձ
ունէր չափազանց։

Օր մը սոխակին ձայնը կը լսէ,
Միթէ սոխակէն ես վա՞ր եմ կ'ըսէ,
Ձայնը կը ձգէ կ'սկսի երգել,
Թեւերը թոթվել ել եւ էջ ընել։

Բայց ո՞ւր սոխակին անուշ դայլայլիկ,
Ո՞ւր այն եղանակ փափուկ գեղեցիկ.
Սարեկին երգն իր ճրճուանը եւ կառաչ,
Երբեմն ալ այծու ձագերուն պապաչ։

Մէկ խօսքով,
Սարեկի քով

Մէկ թռչուն մը չը մնաց,
Ամէն մէկը թռաւ գընաց։

Ա՜հ, սարեա՛կ, սարեա՛կ, տեսա՞ր ըրածդ,
Տեսա՞ր ինչ բերաւ գլխուդ նախանձդ,
Լաւ չէ՞ր աղէկ երգէիր դեղձանիկի նմանակ,
Քան գէշ կերպով ճրճուէիր մեր սոխակին
եղանակ։

ԲՌԻԼՈՎ.

ԱՌԵԼՈՐԴԱՊԱՇՏ

Կան բաներ որոց մարդիկ կը հաւատան, թէպէտ այդ բաները սուտ են։ Այսպիսի սուտ բաներ հաւատացողին «ԷՐԴՊԱՇՏ» կ'ըսեն։ Ամէն ժողովուրդ աւելորդապաշտութիւններ ունի, որք խելքի ու բարոյականի դէմ են։ Սովորաբար տգէտ մարդիկ աւելի կը հաւատան այսպիսի անհիմն բաներու։

Տեսա՞ծ ես Հոխիսիմէն։ Պզտիկ աղջիկ մ'է որ ամէն սուտումուտ բաներու կը հաւատայ։ Օրինակի համար, երբոր յանկարծ արիւնն ականջին զարնէ եւ գոնչէ, «ԿԱՆՉ» ԿԸ ԽՕՍԻ կ'ըսէ, գիս կը յիշեն կ'ըսէ։ Երբոր բանի մը վրայ քիչ մը ատեն նայի, «ՍՏԵՆ ԿԸ ՊՕՂԻ, հիւր մը պիտի գայ կըսէ։ Երբոր կերակուր կերած ատեն հացին պատառը գետին իյնայ, «ՆՕՐԻ ՄԸՐԴ ԿԱՅ Կ'ԸՍԷ. երբոր ձեռքին ափը քերուի, կարծէ թէ ատակ պիտի առնէ։

Այսպէս գիւրահաւան է Հոխիսիմէ. երբոր սեղանի վրայ գինի կամ սուրճ թափի՝ աղէկ նշան կը սեպէ, եթէ եղ թափի՝ գէշ է, կ'ըսէ։ Տաններեք թիւը չարագուշակ թիւ կը համարի եւ երբոր տաններեք մարդիկ մի եւ նոյն սեղանը նստած տեսնէ՝ կը կարծէ թէ նոյն տարին անոնցմէ մէկը անպատճառ պիտի մեռնի։ Նոյնպէս կ'ըսէ թէ աղէկ օրեր եւ գէշ օրեր կան. ուստի երեքշաբթի օրը նոր գործ չսկսիր, ըսելով թէ ծուռ կ'երթայ։ Միայն տկարամիտ անձեր այս տեսակ բաներու կը հաւատան

Հոխիսիմէ այնպէս կը կարծէ որ՝ բուն, ագռաւն ու ջիջիկը՝ չարանշան թռչուններ են, բայց այս կարծիքը բոլորովին անհիմն է։ Հոխիսիմէ շատ վախկոտ է. երբոր գիշերը մութին իր սենեակը երթայ, կը դողայ մտածելով որ ճիւաղ մը (փէրի) կրնայ աչքին երեւիլ։ Ո՞րչափ տգէտ եւ պարզամիտ ըլլալու է մարդ որ ճիւաղներու հաւատայ։

Իր եղբայրը Գրիգոր իրմէ վար չէր մնար. շատ միամիտ

է. ի՞նչ որ ասեն կը հաւատայ։ Անգամ մը քնանալու ատենը յանկարծ արթնցաւ եւ սկսաւ պոռալ կանչել, ի՞նչ կար։ Երազ տեսեր էր որ ճիւաղներ իր քովն եկեր նստեր են։ Բայց այդ ստուերներն, այդ ուրուականներն, մնոտի նկարներ են, երեւակայութեան մէջ հնարուած բաներ են։ Կ'երեւի թէ շատ կերակուր ուտելով չէ կրցած մարսել եւ սիրտը ճնշուեր է. այն ատեն անհանգիստ քուն մը կունենայ մարդ եւ այլանդակ բաներ կը տեսնէ։ Երազներն՝ անորոշ, չփոթ մտածմունքներ են եւ երբեմն երազահաններ զանոնք կը մեկնեն՝ մարդ խաբելու համար։

Ատենօք մարդիկ կային որ կը կարծէին թէ գալիք բաները կրնան գուշակել։ Ինչպէս կիներ կան որ Ռոզն կը բռնեն կորսուած բան մը գտնելու կամ ասոր անոր փափաքն իմանալու. Յեռանմատներ կային, ինչպէս որ հիմակ ալ կը գրտնուին, որ ձեռքի գիծերը դիտելով կ'ուզէին գուշակել թէ մարդ մը բաղդաւոր է թէ անբաղդ. Ֆռենկներ կամ Ռոնկոմոյներ կային որք մեռելները կը կանչէին անոնց բան մը հարցնելու. կային այնպիսի անձեր ալ որ գաւազանով մը գետինը կը զարնէին որպէս զի ջուր կամ գանձեր հանեն. Ռոդերները մարդու մը բաղդը կը գուշակէին երկնից գունտերը դիտելով. կային նաեւ Կոխոդներ՝ որ այլ եւ այլ հմայք կ'ընէին։ Այսօր շատ մարդիկ այս տեսակ բաներու չեն հաւատար, եւ եթէ պատահին այնպիսի անձեր՝ որ ելնեն ասեն թէ ապագան կրնան գուշակել, խելացի եւ կրթեալ մարդիկ գիտեն որ անոնք խաբեբաներ են եւ սուտակ առնելու համար երկդիմի եւ անորոշ խօսքեր կ'ասեն ու միամիտները կը խաբեն։

ԽԱԲՈՒՄ

Զարուհի՝ — *Ինչո՞ւ համար, եղբայր, լուսինն ամեն իրիկուն չենք տեսներ։*

Զարեհ՝ — *Վասն դի շատ անգամ մեր հորիզոնին տակը կը գտնուի լուսինն, ինչպէս նաեւ արեւը։*

Զարուհի՝ — *Երբոր լուսինը գտնալու տեղն արեւուն եւ երկրին մէջտեղէն անցնի՝ անշուշտ արեւը պիտի ծածկէ։*

Զարեհ՝ — *Այս բանը երբեմն կը պատահի, այն տեղն երկրին մէկ մասին վրայ սաուեր ունինք եւ լուսնին կլոր ձեւը կը տեսնենք որ արեւուն առջեւէն կ՚անցնի, ահա ասոր կ՚ըսենք աբեւ խաւարում։ Եւ որովհետեւ լուսինն երկրէս պզտիկ է եւ մանաւանդ արեւէն ալ շատ պզտիկ, ուստի արեւուն միայն մէկ մասը խաւարած կ՚երեւի մեզի համար։ Եթէ անբողջական խաւարում ըլլայ առաջ արեւուն մէկ ծայրը կը մթննայ քիչ քիչ մութը կ՚աւելնայ մինչեւ որ արեւը բոլորովին անհետանայ։ Այն տեղն երկիրը լիովին մութը կը մնայ, լուսնին սկաւառակին բոլորտիքը դեղին նշոյլ մը կ՚երեւի։ Կենդանիները կ՚ապշին, կը վախնան ու կը փախչին, թռչունները լուռ կը կենան եւ գիշեր կարծելով թառելու կելնեն։ Բայց հինգ վեց վայրկեանէն աւելի չտեւեր, քիչ քիչ արեւը կը բացուի եւ ապա բոլորովին կը փայլի։*

Զարուհի՝ — *Շատ անգամ արեւու խաւարում կը պատահի՞։*

Զարեհ՝ — *Չէ՛, ինչու որ երբ լուսինն իր շրջանը կ՚ընէ, շատ անգամ արեւուն քիչ մը վարէն կամ քիչ մը վերէն կ՚անցնի։ Մեր գտնուած տեղին նայելով՝ արեւուն խաւարումը մասնաւոր կամ ամբողջական կ՚երեւի, բայց ամբողջական խաւարումը քիչ անգամ կը պատահի։*

Զարուհի՝ — *Լուսինն ալ կը խաւարի արդեօք։*

Զարեհ՝ — *Անշուշտ երբոր երկիրս արեւուն ու լուսնին*

մէջտեղը կը գտնուի, երկրիս ստուերն չթողուր որ լուսինն արեւէն լոյս առնէ, այն տեղն լուսինը մեղմ չերեւիր, ինչու որ երկրիս շուքին մէջ կը մտնէ. այս ալ կ'ըսուի ԼՈՒՍՆԻ ԽԱՒԱՐՈՒՄ։ Լուսնի խաւարումն ալ սովորաբար չպատահիր, ինչու որ սովորաբար լուսինն երկրիս շուքին քիչ մը վերէն եւ կամ վարէն կ'անցնի։ Բայց աստղաբաշխները գիտած են որ երբ խաւարում մը պատահի, նոյնպիսի խաւարում մը 18 տարիէն նորէն կ'ըլլայ։

Բոյր իմ, խաւարումի վրայ քեզի պատմութիւն մը պիտի ըսեմ։

Երբոր Քրիստափոր Գոլոմպոս երկրորդ անգամ Ամերիկա դարձաւ, ժամանիքա հասաւ տասն եւ եօթը սպանիական նաւերով։ Այս կղզիին վայրենիներն անոր հետ դէշ վարուեցան, անոր պաշար չտուին եւ ուզեցին անօթի թողուլ զինքն ու իրեն հետ գտնուող բոլոր սպանիացիներն՝ որպէս զի մեռնին։

Գոլոմպոս գիտէր որ քիչ առենէն լուսնի խաւարում պիտի ըլլայ. բոլոր վայրենիներն իր ներկայութեանը կանչեց, յանդիմանեց, վախցուց եւ ըսաւ որ քիչ առենէն պիտի պատժուին սպանիացւոց Աստուծոյն կողմանէ, որովհետեւ այսպէս անգթութեամբ կը վարուին իրեն հետ։

«Գիտցէ՛ք, ըսաւ անոնց, որ այս երկիրս լուսինը պիտի խաւարի, եւ ձեզի լոյս չպիտի տայ։»

Յիրաւի քանի մը ժամ ետքը՝ խաւարումն սկսաւ։ Վայրենիներն սարսափելով սկսան սոսկալի աղաղակներ ձգել, կարծեցին որ Գոլոմպոս մարգարէ մ'է եւ գացին անոր ոտքն ընկան. աղաչեցին որ իրենց ներէ եւ խօսք տուին ամեն ուզած ուտելիքը բերել։

Գոլոմպոս անոնց աղաչանքը նախ չլսելու պէս ըրաւ։ ապա ներեց եւ խօսք տուաւ իր Աստուծմէ խնդրել որ լուսինը դուրս հանէ։ Քիչ մը ետքը՝ լուսինը երեւցաւ եւ վայրենի բնակիչները, որք կը կարծէին արդէն թէ Գոլոմպոս գերբնային մարդ մ'է, բոլորովին համոզուեցան որ ուզածին պէս կը դարձնէ երկիրն ու երկինքը։

ԿԱՐԱՊ, ՁՈՒԿՆ ԵՒ ԽԵՉԱՓԱՌ

Օր մը կարապը, ձուկն ու խեչափառ, —
Զեմ գիտեր ուսկի՛ց ալ գտան զիրար, —
Բեռնաբարձ սայլ մը տանիլ կ'ուզէին,
Երեքը մէկէն լծուեցան սայլին.
Երեքն ալ արիւն քրտինք մրմնէին։
«Զարմա՜նք, կ'ըսէին նոքա մէկ մէկու.

Զենք գիտեր ինչո՞ւ

Այս սայլը առաջ տանիլ չենք կրնար.
Ոչ բեռը ծանր է, ոչ ճամբան դրժար։»

Հապա չե՞ս ըսեր.
Կարապը վեր կը քաշէր,
Խեչափառը ետ ետ,
Իսկ ձուկը դէպ ի գէտ։

Ծուռը ո՞ւն էր, կամ թէ ո՞ւմ էր իրաւունք,

Այն թողունք,
Բանն այս է որ
Մինչեւ ցայսօր

Սայլը հոն է բեռովը. —
Այսպէս կ'ըսէ ՖԻԼԻՊՊԸ։

ՀԱՆԳԱՌԱՆ ԳՐԻԳՈՐԸ

Գրիգոր կը սիրէ հանքարանութիւնը։ Ինք ձեռքովն այլ եւ այլ հանքեր հաւաքած եւ պահած է։ Բոլորն ալ պահարաններու մէջ կը գետեղէ եւ որպէս զի դիւրաւ գտնէ, ամէն մէկուն վրայ թիւ մը կը դնէ եւ կարգով կը շարէ։

Նայէ ինչ տեսակ հողեր ունի։ Ահա այս տեղ չատ թափանցիկ քարեղ կայ, որով գիտես արդէն թէ ապակի կը շինեն։ Այն տեղ կայ՝ որ չատ եղոտ է եւ զոր աղիւս, թաս եւ ուրիշ բաներ շինելու կը գործածեն։ Ասոր մօտն է կէնը, քիչ մը հեռու հոը, որով տակառ հողերը կը պարարեն։ Վերջապէս, տե՛ս բոհոհողը, սեւ հող մ'է որ փտած բոյսերէ յառաջ կուգայ եւ երկրիս երեսը տարածուած է։ Ահա այս հողին վրայ կը բուսնին տունկերը։

Գրիգոր ուրիշ զարակի մը մէջ դրած է հրէր եւ ժայռի բեկորներ։ Երբոր աւազները կը կցուին եւ քիչ քիչ կը պնդանան՝ քարեր կը շինուին։ Գրիգոր մի առ մի քարերը ձեռքը կ'առնէ եւ կ'սկսի ամէն մէկուն յատկութիւնն ու ինչպէս գործածուիլը բացատրել։ կ'ըսէ թէ ՐԷՐ-հրը տանիքները ծածկելու կը ծառայէ։ քոհը կը գործածուի պատերը ծեփելու համար։ գրէպոլն քար մ'է որով մետաղները կը փայլեցնեն, չէլհրը ծակուտ է, որ պղինձ յղկելու եւ գանակները մաքրելու կը ծառայէ, կէրն այրած քար է, որով չաղախ կը շինեն։ ռնկէրհրն կրակի կը դիմանայ։ Բրրհրն երբ փոշիանայ՝ թղթի վրայ կը թափեն որ մելանը ծծէ։ Ռուսաստանի մէջ անով ապակի կը շինեն՝ պատուհաններու եւ լապտերներու համար։ Կոհը ճերմակ է, որով սիրուն ամաններ կը շինեն։ հրմրն ալ չատ խիտ եւ ընտիր քար մ'է որով սեղաններ, արձաններ եւ սիւներ կը շինեն։ կոյհրէն կայծեր կը հանեն եւ արեւը կը բռնկցնեն։

Կան ուրիշ տեսակ քարեր որ չատ սուղ են, ինչպէս յուպէ-

ոը, ոկոոը չոֆիոդոյ, ըզոկը ոոոոկը դրոոիոը, որով այլ եւ այլ գոհարեղէններ կը չինեն մարդիկ։ Ակնահատներն այդ քարերը կը տաշեն, կը յղկեն եւ յետոյ ակնավաճառներու կը ծախեն։ ոսկերիչները կը գործածեն ֆոյոոոն որով ոսկին կը փորձեն եւ անոր տեսակը, կերատը կը հասկնան։ վոնկը ապակի մ'է որով բաժակներ կը չինեն։ կոնիոը կը գործածեն չէնքեր չինելու, խճոոոով փողոցի յատակներ կը չինեն եւ սուր գործիքներ կը սրեն։ ֆոյոնիոը փոշի ընելով թղթի վրայ կը փակցնեն եւ անով ապակի կը չինեն ու ժանգ կը հանեն. ոդոմանդը չատ հազուագիւտ քար մ'է, եւ որովհետեւ չատ կարծր է՝ ապակին կը կտրէ։

Ա. Դ Ա Մ Ա Ն Դ

Ադամանդը մաքուր ու պաղած ածուխ է, ամեն մարմիններէ կարծր է։ իր փոշիովը միայն կը մաշուի։ Կոչտ ադամանդը կը տաշեն փոշիովն եւ անոր այլ եւ այլ երեսներ կուտան։ Ադամանդը սովորաբար գոյն չունի, բայց սեւ, դեղին, կանաչ եւ վարդագոյն ադամանդներ ալ կը գտնուին եւ չատ յարգի են։ Ադամանդ մը չատ արժէք կ'ունենայ երբոր մէջը բիծ չունի, մաքուր է եւ պայծառ գոյներ ունի։

Ադամանդը Հնդկաստանի մէկ քանի գետերուն մէջ կը գտնուի. նոյնպէս Ուրալ լեռները եւ Պրէզիլ։ Միչտ հողով ծածկուած է եւ գայլախազէ տարբերութիւն չունի։ Ադամանդը հանելու համար պէտք է չատ անգամ գետին ջուրը դարձնել, աւազը հանել եւ փայտէ ակօսաւոր տախտակներու կամ մազոտ կաշիներու մէջ լուալ։ Ադամանդներն ակօսներուն կամ մազերուն մէջ կը մնան եւ ապա ստուգելով հողէն կը զատուին։ Ադամանդը կերատով կը ծախեն։ Երբոր ադամանդը 7 էն մինչեւ 8 կերատ ծանր է, գինը սահման չունի։

ՀԱՆՔԱՑԻՆ ԱՂԵՐ

Գրիգոր ուրիշ տուփի մը մէջ գրած է այլ եւ այլ հանքային աղերը։ Կայ անոր մէջ ծովային աղ որ ծովուն ջրէն կ'ելնէ, ինչպէս որ գիտես։ Աղերուն կարգէն է նաեւ բորակը կամ աղբորակը որ տեսակ մը ձիւն է եւ չտեմարաններու հին ու խոնաւ պատերուն վրայ կը գտնուի։ այս հողը վատօդ չինելու եւ փոքրագրելու կը գործածուի, վասնզի մեռաղը կը մաշեցնէ։ Բժիշկները կը գործածեն պոլէղը, որ հրաբուխներու մօտ կը գտնուի։ Պաղլեղը այլ եւ այլ կաւեայ նիւթերէ ալ կը շինուի, որոց մէջ ծծումբ կայ եւ բաց օդին կիր կ'ընեն եւ ապա տընկաղով մը մաքրեն։ Պաղլեղը կը պարունակէ ծծմրոյ թթու, անկաղ եւ պաղլեղի քար։ Ոչերմակ աղ մ'է պաղլեղը որ ջուրի մէջ շուտով կը հալի։

Մեռաղեայ նիւթերուն մէջ կան կոպր կամ հանքային խոզը, դաստրը, տորխոզը, որք հեղուկ են եւ բուսային խզին պէս կը վաճին, ինչպէս ձիթը, ծծումբը, զորս ծծմրատներու ծայրը կը գտնեն, նոյնպէս վառօդի մէջ։ տրոխոզը, որ երկրիս խորը հրաբուխներէ այրած ատագին ծառերու արտադրութիւնն է, կը գործածուի երկաթէ գործարաններ եւ շոգեշարժ մեքենաներ տաքցնելու համար։ Ածուխէն կը հանեն ջրածին ածխոյ կաղն որով փողոցները կը լուսաւորեն գիշերները։ անոր մնացորդը քոք կ'ըսուի, որ տաքցնելու կրնայ ծառայել։

ՄԵՏԱՂՆԵՐ

Գրիգոր։ — Դու գիտես, Յովսէփ, որ ես շատ կը սիրեմ մետաղներու գիտութիւնը։ դու որ Դոպոլոգիտ ես եւ մետաղներ կը գործես, արհեստիդ վրայ ինչե՞ր գիտես, խնդրեմ քիչ մը խօսէ։

Յովսէփ. — Պիտի խօսիմ քեզ, Գրիգոր, մեռաղագործութեան վրայ, այն պայմանաւ որ դու ալ ինծի հանքերու վրայ խօսիս, քանի որ հանքաքաղ ես։

Գրիգոր — Շատ սիրով։ Նախ երկուքը պիտի յիշեմ. մեռաղ մ'է այս որ հողին տակը կը գտնուի հանածոյքի ձեւով։ Շուէտէն, Նորվէկիայէն, Անգլիայէն կը հանեն լաւ երկաթ։

Յովսէփ. — Երկաթը հանքայէն կամ հանքային նիւթերէն կը հանեն՝ զայն հնոցներու մէջ հալեցնելով. յետոյ կը դարբնեն եւ տեսակ տեսակ գործիներ կը շինեն։ Երբոր երկաթն ածուխի մէջ կը տաքցնեն, դու�վ կը դառնայ։ Երկաթով սուր զէնքեր շինելու համար պէտք է սաստիկ կաքմրցնել եւ յանկարծ պաղ ջուրի մէջ թաթխել. թաթխեալ երկաթը՝ կարծր պողպատ կը դառնայ եւ շատ հատու կ'ըլլայ։ Հալած երկաթը կամ յուլոնդն կրակ բան շինելու համար կը գործածուի, նոյնպէս ուրիշ բաներու համար։ Զուլիչներ, դարբիններ, գործարաններ, կաթսայագործներ՝ երկաթը կը բանին, նոյնպէս մեքենագործներն։

Գրիգոր. — Կապարը կապուտակ ճերմակ է, շատ ծանր է եւ դիւրաւ կը հալի։ Այլ եւ այլ երկիրներու մէջ կը գտնուի։

Յովսէփ. — Երբոր կապարն արոյրի հետ խառնեն՝ կապարագործներու մածոյցը կը շինուի։ Կապարէն եղած սպիտակ դեղը թոյն է։ Կապարին ժանգը քարմարցանկն է (գրաֆիտ)։

Գրիգոր. — Անոթը սպիտակ է, կապարէն քիչ մը աւելի կարծր, բայց աւելի շուտ կը հալի։ Ծծումբի հետ կը գտնուի հողին տակ։

Յովսէփ. — Անագը կը գործածուի գգալ, ծորակ եւ անօթներ շինելու։ Երբ անով շատ բարակ թերթեր շինուին՝ տուրմ փաթթելու կը գործածուին։ Հայելիներն ալ անագով կ'օծեն։

Գրիգոր. — Զինկը կապուտակ մոխրագոյն է. Գերմանիա, Պելճիքա եւ Անգլիա կը գտնուի։

Յովսէփ. — Զէնկագործներն այլ եւ այլ բաներ կը շինեն զէնկով, ինչպէս տանիքի ուրդեր, լոգարաններ, գոյլեր եւ։

Գրիգոր. — Պղինձը կարմիր է, հրուտ ձեւով կը գտնուի

հողին տակ, այսինքն մանր կոյտեր են որ ծծումբ ալ կը պարունակեն։

Յովսէփ. — Պղինձով կը չինեն սաներ, թակոյկներ, բայց որովհետեւ կը ժանգոտի խոնաւութենէ՝ խոհանոցի անօթներն անագով դրուագել պէտք է, վասն զի ժանգը թոյն է։ Երբոր պղինձը զէնկի հետ խառնենք՝ արդ կ'ստանանք կամ դեղին պղինձ, որով ամեն տեսակ անօթներ կը չինուին։ Իսկ եթէ պղինձն անագով խառնուի՝ յառաջ կուգայ անոքֆոռաս պղինձը (թունաւ), որով զանգակներ, արձաններ ու ատակներ կը չինեն։ Չինաստանի Բէքին մայրաքաղաքը զանգակ մը կայ որ 60,000 քիլոկրամ կը կշռէ. իսկ Մոսկուայի մէջ եղած զանգակն աւելի ծանր է։

Գրիգոր. — Մետաղներու մէջ անդէն ամենէն աւելի ծանր է. այս մետաղը հեղուկ է. ծծումբ պարունակող հանածոյքէ կը հանեն որ երկաթ կ'բռնի։

Յովսէփ. — Այս մետաղն որ շատ վտանգաւոր է, օդաչափ ու ջերմաչափ չինելու կը գործածեն։ Թրուկէն կ'ելնէ կարմրագեղը։

Գրիգոր. — Լոնտոնէն սպիտակ է եւ արծաթէն նուազ փայլուն. աւազի մէջ կը գտնուի։

Յովսէփ. — Լուսնոսկին կը գործածեն ժամագործները. անով չքաղրամներ ալ կը չինուին։

Գրիգոր. — Ոսկին աւելի կակուղ է քան արծաթը։ Կոելի մետաղ մ'է։ Ոսկիով խիստ նուրբ թելեր կը չինուին։

Յովսէփ. — Արծաթը ճերմակ ու փայլուն մետաղ մ'է. կապարէն աւելի թեթեւ է. պղինձէն եւ մանաւանդ երկաթէն նուազ կարծր է, իսկ ոսկիէն աւելի կարծր է։ Օդէն չաւրուիր, եթէ տաքնայ անդամ, բայց ծծումբէն չուտով կը սեւնայ։ Զուտ արծաթին քիլոկրամը 222 ֆրանք եւ 22 սանտիմ է. Այս զուտ վիճակին մէջ չգործածուիր, ինչու որ շատ թոյլ է եւ չուտով կը մաշի. ուստի անոր մէջ կը խառնենք քիչ մը պղինձ որ կարծրանայ։ Արծաթով դրամներ ու անօթներ ալ կը չինեն։

Գրիգոր. — Ոսկի դեղին գոյն ունի. բաւական կակուղ է։ Նոյն չափով ջրէն տասնեւլինն անգամ աւելի ծանր է։ Օդէն չխանդարիր։ Երբեմն գետերու աւազին մէջ կը գտնուի ոսկին։

Յոսէփ. – Այս աւազը լուալով մաքրիչներն ոսկի հատիկները կը հաւաքեն։ Ոսկիի հանքեր շատ կան Բէլրու, Քալիֆորնիա, Աւստրալիա եւ այլն։

ԳՈՐԾԻՔ ՄԵՔԵՆԱՅ

Եթէ մարդ միայն ձեռքով աշխատէր՝ քիչ գործ պիտի ընէր։ Իր ոյժն աւելցնելու համար հեղգնեան այլ եւ այլ գործիքներ ու մեքենաներ հնարած է։ Ասոնք ոչ միայն մարդկան ոյժը կ'աւելցնեն այլ նաեւ աշխատանքը կը դիւրացնեն, կ'արդիւնաւորեն եւ աւելի ամուրութիւն կը բերեն։ Քանի մը պարզ գործիքներ նկարագրենք։

Լծակն ամենապարզ մեքենայ մ'է. մկրատներն, բազմակալը, հատիչն լծակի տեսակէն են։

Զփոփլանն կամ շրջանը (treuil) գլան մ'է, այսինքն կլորաձեւ գործի մը, որ երկու նեցուկի վրայ կը դրուի եւ նոյն շրջանակին բոլորտիքը չուան մը կը փաթթէ։ Այս չուանին ծայրէն ջուրի դոյլ մը կամ քարեր եւ կամ բարերով լեցուն կողով մը կը կախեն եւ ջրհորէն կամ քարաբովէն կը քաշեն։ Զգագլանը լծակով կամ շրջակոթով կը դարձնեն. այս շրջակոթը կամ ֆլանը (manivelle) երկաթէ կամ փայտէ կ'ըլլայ եւ ձեռքով կը դառնայ։

Անդրը տեսակ մը ձգագլան է որու գլանը հորիզոնական չէ այլ ուղղահայեաց. ցամաքի վրայ բեռներ քաշելու կը ծառայէ, մանաւանդ նաւահանգստի մէջ։

Ճոխրոնը արդէն ծանօթ անիւ մ'է. իսկ ճոխրակը (la moufle) շատ մը ճախարակներէ կը բաղկանայ որոց վրայէն կ'անցնի եւ կը դառնայ չուան մը։

Զրաքաշեակաձ անձառներ տախտակներ կամ պնակներ ունին, եւ ջուրն իր ծանրութեամբ զանոնք կը դարձնէ։ Ասոնք մեծ գործարաններու մէջ կը գործածուին՝ երկաթաքարեր, թակեր, աղոցներ եւ մուրճեր դարձնելու համար։

Բառալի (crie) գործիք մ'է որ գլխաւորապէս աղոցի պէս՝ «ղրոյկ» (crémaillère) մը եւ ձեռակ մը կը բաղկանայ եւ խոշոր քարեր ու կաւքեր վերցնելու կը ծառայէ։

Արքիմէդէսի պրոբոն գլան մ'է որու բոլորտիքը խղնջաձեւ ֆլնոցակ (cloison) մը կայ խցանների պէս։ այս գլանը խոզովակի կամ գոգաւոր գլանի մը մէջ փակուած է, որ ձեռնակով կը դարձնեն։ Այս մեքենան ջրով լեցուած ծակերը պարպելու եւ ճանիճներ չորցնելու համար կը գործածուի։

Գերանի ձեւով քեռաքարշ ճոխրոնները (grue) կը գործածուին որպէս զի փիղեր, ձիեր եւ ուրիշ ամէն տեսակ բեռներ վերցնեն նաւը դնելու համար։

Այծեկը (chèvre) տեսակ մը լայն բեռնարարձ է որու մէջտեղը գլուրաւ կը բառնան չինուած թեռնոց վերաբերեալ նիւթեր ամենէն բարձր շէնքերու վրայ։

Կշեռները, ինչպէս յայտնի է, մարմիններու ծանրութիւնը չափելու կը գործածուին։ Տեսակ տեսակ կշեռներ կան։ Դէրրաուր կշիռ, նշոյրդ (գանթար) Բառալի։ Կան այնպիսի թեթեւ կշեռներ որոց նժաբին վրայ փետուր մը միայն դնելով կը ծռին։ Այս տեսակ կշեռներով ոսկի կը կշռեն։

Ամեն մարդ գիտէ թէ ի՞նչ է ջրհորը, որու հիմը սրինգն է։ Ջրհորի եւ հրդեհի համար ջրհաններ կան։

Արհեստներու մէջ հետեւեալ գլխաւոր գործիքները կը գործածեն։

Օդաճառ գործին՝ որ օդը կը հանէ որ եւ է ամանի մը մէջէն։

Թորանը գործիք մ'է որ հեղուկները կը զատէ։ Օդին կը չինուի խաղողին չիւն թորանէն զանելով։

Ատեն մը միայն թոնիրներ վառելով մարդիկ կը տաքնային։ Վերջէն սկսան գործածել վառարաններ Ջերմաթեր կամ ԸՓԻԹԷԷ գործին ալ մեծ թոնիր մ'է չանմարանները դրուած, որով օդը կը տաքցնեն եւ զայն խողովակներու միջոցաւ տան մը այլ եւ այլ սենեակները կը բաշխեն



Հանքագործ բանուորները՝ որ ածուխը գետնին տակէն կը հանեն, ածխայէն կազի վտանգներէ չատ կը վախնան. այս կազը չուտով կը բռնկի եւ ասոր համար չատ մարդիկ դրոհ զոհած են այս կազի պատճառներուն։ Այսոր այս վտանգին առաջքը կ'առնուի ԱՊՈՀՎՈՐԵԱՆ ԼԱՄՊԵԸ գործածելով, զոր հնարած է Անգլիացի Տէյվիս քիմիագէտը։ Կատարելագործուած լամպեր մ'է այս՝ որու բոցն այնպէս պատուած է որ կազի հետ հաղորդակցութիւն չունի։



Ակնոցավաճառները կը ծախեն ԱԿՆՈՑՆԵՐ։ Ակնոց մ'է որ տարիքոնները կը մեծցնէ։ Այս գործիքն՝ ժամագործներուն ասպտաձեւ ապակիին պէս՝ խոշորացնող ապակիով մը չենուած է, որ ասպի մը ուռուցիկ ձեւն ունի։ Այս սեռակ ձեւ ունեցող (գմբեթաւոր) ապակիներ ԱԿՆԵՐԸ ՀԷՆԷՐԸ անչքին կը յարմարին, որ մարդուս բռնները չեն անաներ. մինչդեռ գոգաձեւ ապակիներու ակնոցը ԿՐՃԵՆԷՐԸ կը յարմարի։

ԹՈՒԵԻԿԻՆ ԿԱՊԱՆ

Թոնիկը կապա մ'ուներ,
Ինչպես եղաւ որ պատռեցաւ.
Նստեր երկար կը մտածեր:
Վերջապես ձարը գտաւ.
Տես հիմակ ի՛նչ կ'ընեմ ես,
Ըսաւ յանկարծ ինքնիրեն.
Մրկրատն առաւ կը տրտնջեց
Երկու թերին ծայրերեն,
Թերին տակը կարկըտեց.
Պատռուածքը պարտկ'ց.
Բայց միայն թերերը
Մէյմէկ բիզ որ կարձրցան,
Ամեն տեսնողները
Անոր վրայ ծիծաղեցան
Թոնիկը առնուեցաւ,
Ինքն իրեն դարձաւ ըսաւ,
Ես անոր ձարն ալ կը գտնեմ,
Թերերը այնպես երկնցընեմ
Որ առջինեն ալ աւելի
Կապան առնէ ձեր գլխէն.
Ինծի վարպետ թոնիկ կ ըսեն,
Ուրեմն թող խելքս տեսնեն.
Կապան առաւ նորեն ձեռք,
Կտրեց քղանցքն ու եզերք,
Երկու թերին խոշոր խոշոր
Զըգեց անոր մէյմէկ կրտոր.
Առաջ կապան էր խեղճուկ
Յետոյ եղաւ կարձրձուկ.
Զէիր գիտեր, կապա՞յ էր այն թէ բանկոն,
Վերջապես ծաղր եղաւ թոնիկն ամենուն.

ԹԻԻՈՎ.

ՇՈՂԵՇԱՐԺ ՄԵՔԵՆԱՅ

Գիտենք որ երբ ջուրը սանի մը մէջ կ'եռայ՝ եւած շոգին անոր խուփը կը վերցուներ։ Եթէ սանին վրայ թեւ մը կամ ձող եւ անիւ մը ըլլար, շոգին թեւը կամ ձողը պիտի հրէր, եւ անիւը պիտի դառնար։

Ահա այս բրաւ Ֆրանսացի Տրնի Բարէն եւ շոգեշարժ մեքենան գտաւ։ Վերջէն ուրիշ հանճարեղ մարդիկ, Նիւքոմէն, Ուատ եւ ուրիշներ՝ այդ մեքենան կատարելագործեցին։

Շոգեշարժ մեքենան փուռ մ'է որուն մէջ քարածուխ կը վառի. վրան կաթսայ մը կայ եռացող ջրով լեցուն, եւ ծխան մը ուսկից մուխը դուրս կ'ելնէ։ Շոգին կը հրէ գործի մը եւ դայն ինքնին կը շարժէ։



Մեր մարմինը՝ շոգեշարժ գործիքին նման բան մ'է։ Մեր կերած կերակուրին արիւն կը դառնայ, որ շնչերակներուն

մէջ կը վազէ, այսինքն այնպիսի խողովակներու մէջ որք բոլոր մեր մարմնոյն մէջ տարածուած են։ Մեր կեանքը պահողը կարմիր արիւնն է, իսկ մեր երակներուն մէջ վազած սեւ արիւնն կենաց անյարմար է, բայց մեր ծծած օդին թթուածինէն մաքրուելով՝ մեր թոքերուն կը դառնայ։

Մեր անդամներն ալ կը շարժին մեր ոսկորներուն բոլորտիքը գտնուած մկունքի միջոցաւ՝ երբոր կ'երկնցնան եւ կը քաշուին։ Այսպէս մկունքն շարժիչ գործիքի պաշտօն կը վարեն, իսկ մեր գործարաններն ալ կատարելագործուած անիւներ են։ Մարդկային մեքենաներէն դուրս եկած մուխն ածխայնն թթու կապն է կամ տաք օդն զոր չունչ առնելու ատեն մեր թոքերէն դուրս կը հանենք, վասնզի այն օդն աւրուած է եւ չի կրնար կենդանացնել ու շրջել տալ մեր արիւնը։ Այս է պատճառն որ ատեն ատեն պարտաւոր ենք մեր սենեակներուն օդը փոխել՝ պատուհանները բանալով։

Տունկերն ալ մեզի նման հեղուկ մը ունին, որ իրենց ներքին հիւթն է. ասոնք ալ մեզի պէս չունչ կ'առնուն՝ իրենց տերեւներուն միջոցաւ, եւ գիշերը ինքնակար կազեր կ'արտազրեն որ մեզի գլխի դաւ կը պատճառեն՝ եթէ այդ տունկերը մեր սենեկին մէջ պահենք անխոհեմութեամբ։

Բայց դառնանք չոգեշարժ մեքենային։ Այս մեքենան գործարաններու մէջ կը գործածեն ուրիշ մեքենաներ շարժելու համար, ինչպէս մամուլներ, գլանաներ եւ այլն։ Մշակութեան մէջ այս մեքենան ԼԵԼՅՈԲԻԼ (locomobile) կը կոչուի եւ մշակելու ու ցորենը ծեծելու կը ծառայէ։ Երկաթուղիներու մէջ՝ այս մեքենան ԼՈՅԿՈԼՈԲ (locomotive) կ'ըսուի, այն կառքն է որ կայարանէն ելնելով՝ երկաթէ ուղիներու վրայ ԼՈԿՈՄՈԼԻՎԸ կը քշէ եւ մեծ արագութեամբ տեղէ տեղ կը տանի։ Այս արագութիւնը այնքան մեծ է որ երկաթուղիի կառախումբ մը կրնայ, օրինակի համար, մինչեւ վաթսուն քիլոմեթր տեղ քալել կէս ժամու մէջ, մինչդեռ ամենէն լաւ ձին հազիւ քսան քիլոմէդր կրնայ քալել նոյնչափ ատենի մէջ։

Քիչ ժամանակէն ամեն տեղ երկաթուղիներ պիտի շինուին անշուշտ, եւ ժողովուրդներն աւելի շուտով իրարու հետ պիտի հաղորդակցին։ Նոյնպէս հեռագրոյն գործին շատ օգտակար գիւտ մ'է, որով հեռաւոր մարդիկ շուտ մը իրարու հետ կը խօսին։

Գիւտերու մէջ ամենէն հրաշալին այս հեռագրական գործին է։ Ժամանակաւ երբոր մարդիկ հեռուէն լուրեր իմացնել ուզէին՝ փողերով կը պոռային, կամ տեղ տեղ կրակ կը վառէին լեռներու վրայ։ 1790 ին Շ-ք անուն եղբարք՝ գործիք մը հնարեցին որով հեռուէն օդին մէջ նշաններ կ'ընէին եւ այս գործին անուանեցին օպտին հեռագիր։

Այս հեռագրին տեղ ուրիշ մը հնարուեր էր 1754 ին Մրլը։ սկոտֆացիին ձեռք եւ ըստացաւ Եվրոպոյն հեռագիր։ Հետգհետէ այս հեռագրական գիւտը կատարելագործեցին Ռուսը եւ Մորս 1837։ Ամեն ժամանակ կրնայ գործել այս հեռագործին Էլեքտրականութիւնը եւ ասոնք կը գրէ չրջանակի մը վրայ որ ժամերու տեղ այրուելնի գիրեր կը պատրաստէ։ Այսպէս մարդիկ աչխարհիս մէկ ծայրէն միւս ծայրը կրնան լուրեր հաղորդել ու ընդունիլ քանի մը վայրկեանի մէջ՝ այդ Էլեքտրական թելերու միջոցաւ։ Եւրոպա եւ Ամերիկա շատ հեռագրական գործիներ կան եւ հետգհետէ աչխարհիս ամեն կողմերը կը հասանուին։

Ի՞ՆՉՊԷՍ ԿԸ ՇԻՆՈՒԻՆ ԳԻՐԵՐԸ

Մարդիկ իրենց միտքը կը յայտնեն ուրիշներու երեք կերպով. գիրով, խօսքով ու շարժումով։ Հին ատեն գիր չկար, այլ պարզապէս պատկերներ կը գործածէին մարդիկ գրի տեղ. ինչպէս՝ թէ որ ուզէին ցոյ, արբ-ր-ՐՈ եւ ՐՈՐՈ յայտնել, քարի կամ կապարի վրայ կը փորագրէին ՈՒՆ, ԿՏԻ ՈՒՐԸ, եւ այս տեսակ գիրերը ԴՀԻՆԱԿԱՆ ՆԻՇԵՐ կը կոչուէին։ Բայց

այս գիրը գժուար էր կարդալ ու հասկնալ, ուստի մարդիկ ջանացին տառեր հնարել եւ այբուբենի գիրերը գտան։ Այս տառերը մելանով կը գրէին եղէգի մը մաշկին վրայ որ կ'ըսուէր պոպիրոս, կամ փայտի, մորթի, մագաղաթի վրայ։ Վերջէն թուղթ հնարեցին, որ հին քուրջերու զանգուածով կը շինուի։

Ամեն ժողովուրդ իր այբուբէնը ունի. ոմանք իրարմէ առած են քիչ շատ փոփոխելով։ Արդէն գիտես որ մեր հայերէն տառերը ով կատարելագործեց։ Առ հասարակ այս գծին պէս հորիզոնական գծի վրայ ձախէն աջ երթալով կը գրեն շատ ազգեր, ինչպէս մենք Հայերս. սակայն կան ժողովուրդներ որ ուղղահայեաց գծի վրայ կը գրեն վերէն վար իջնելով, ինչպէս Զինացիք. իսկ Տաճիկներն ու Հրէայք՝ աջէն ձախ կը գրեն եւ իրենց գիրքերն վերջի երեսէն կ'սկսին։

Գրիչ կ'ըսուի գիրքեր յօրինողը. վիպելիչներ այն է որ աղուր կը գրէ. մաղնիչներ կամ հեղնակ է գիրք շարադրողը, իսկ տպողը կ'ըսուի տպիչ կամ տպիչներ։

Արդէն գիտես որ կապարեայ տառեր իրարու մօտ շարելով երեսներ կը ձեւանան, եւ այս երեսներն իրարմէ քիչ մը հեռաւորութեամբ մամլոյ վրայ դնելով երկաթէ շրջանակի մը մէջ կը սեղմեն, որ ֆորմա կ'ըսուի եւ տպա կը տպեն։ Սովորական տառերը Բուքուիներ կ'ըսուին. կան նաեւ շեղներ, Նոտ գիր եւ այլն։ Տպելու համար կապարեայ տառերուն վրայ թանձր մելան կը քսեն կակուղ գլանով մը, յետոյ արդէն պատրաստուած կաղապարին վրայ թերթ մը թուղթ կը դնեն եւ մամուլով կը կոխեն. մելանը թղթին փակչելով տառերը կը տպուին. ասոր կ'ըսեն պոպիրոնիում։ Տպագրութեամբ հազարաւոր օրինակներ կարելի է հանել եւ այսպէս գիրք մը ամբողջացնել։ Առաջին անգամ որչափ օրինակներ որ տպուին՝ առաջին տիպ կ'ըսուի, եւ երրոր տպուին՝ երկրորդ անգամ կը տպուին եւ այն տեսն նոյն գրքին կամ գործին երէրորդ տիպը կ'ըլլայ։

Երրոր հարթ ու յղկեալ քարի վրայ նկարներ կամ գիրեր գրուին, այս կերպը կ'ըսուի քիմոգրոնիում, իսկ քարին վրայ

մելան գնելով ապուռածը՝ վնասէն կ'ըսուի։ Վիմատապարու-թիւնը հնարողը եղաւ Սընէֆելրէր։

Տպեալ թերթերը կարդաց, կարդաց, եւ վրան ծանկոյթ մը անցնողը կ'ըսուի կաղմիր կան, Բղնոկաղ, ինեալաղ, կաշեկաղ, փոռուկաղ եւ այլն։ Իր ծախքով գիրք մը ապել ուզողը կ'ըսուի հրատարակէր, իսկ գիրքեր ծախողը կ'ըսուի գրավաճառ։

ԱԳԱՂԱՂ ԵՒ ՄԱՐԳԱՐԻՏ

Ամաղաղին մէկին ապրիւսը գրուած ատեն
Ինչպէս եղաւ մարգրիտ մը գտաւ մէջեն,
Գառնայ ի՛նչ ըսէ ապէկ.
«Ը՛հ, ի՛նչ փուճ բան նայիցէք.
Մարդիկ ո՛րան անխելք են
Որ սրվոր մեծ գին կը դնեն.
Ինծի հաւար, կ'ուզէ՞ք ըսեմ ճշմարիտը,
Հաս մը գարին շատ է բան գայս մարգարիտը։
Իրաւ տեսնոս չէ գարին,
Բայց շատ յագուրդ տայ փորին։»

ՔԱՒԻԼՈՎ.

ՁՈԳԻԱՆՈՍ

(Ա. Ե. Դ. Գ. Ա. Ե. Ա. Ա. Ե. Ա. Ա.)

Պ. Գալուստ.— Զեզի ես խօսք տուի, էմ տղայքս, բացատրելու թէ ինչ է ղրէ-կոը։ Հիմակ, այս հանգստեան ժամս, յարմարագոյն ժամն է, քանի որ գաստրանէն ունկի ընդարձակ վայր մը պէտք է այդ բացատրութեան համար։ Գողոս, արեւն երկրիս բոլորտի՞քը կը դառնայ։

Պ.— Ո՛չ, պարոն, երկիրն է որ կը դառնայ արեւուն բոլորտիքը։

Գ.— Մարկոս, մեր տեսած աստղերն արեւո՞ւ թէ ոչ երկրի բոլորտիքը կը դառնան։

Մ.— Ո՛չ, պարոն, անշարժ են, եւ այս պատճառաւ հաստատուն աստղեր կը կոչուին։

Գ.—Բսէ նայիմ, Ստեփան, արեւէն ո՞րքան հեռու է երկիրը։

Ս.— 248 միլիոն հազարամէջ հեռու։

Գ.— Իսկ հաստատուն աստղերը, Կարապետ, մեզմէ չատ հեռո՞ւ են։

Կ.— Ամենէ մօտաւորն 200,000 անգամ աւելի հեռու է արեւէն։

Գ.— Այսպէս ուրեմն երկիրն արեւուն եւ հաստատուն աստղերուն մէջ կը թռչտի։

Մ.— Այո՛, պարոն, արեւն անոր առջեւն եւ աստղերն ետեւն են։

Գ.— Անշուշտ, ինչպէս անոր ետեւի, նոյնպէս առջեւի կողմն աստղեր կան, արեւէն աւելի չատ հեռու։

Մ.— Բայց չեն տեսնուիր։

Գ.— Վասն զի նոյն պահուն արեւն ալ կը տեսնենք եւ իր փայլը չթողուր որ աստղերուն լոյսը տեսնուի։ Ղուկաս գնա մոմ մը վառէ եւ ինձ բեր։

Կ.— Ուրեմն բաց լոյսին ալ աստղեր կան։

Գ.— Անտարակոյս, բայց տեսանելի չեն։ Ահա Ղուկաս իր մոմով. տեսէք հիմակ, տղայք, ինչպէս այդ մոմին լոյսը անփայլ է. հապա կը տեսնուի. եթէ արեւուն գնեմ լոյսն աւելի տկար պիտի ըլլայ։

Պ.— Իրօք՝ հիմակ բնաւ չտեսնուիր։

Կ.— Կարծես թէ մարած է։

Գ.— Եկուր մատդ վրան դիր եւ պիտի տեսնես որ դեռ կը վառի։ Այսպէս, տղայքս, արեւն անշարժ է, երկիրն անոր չուրջը 365 օրուան մէջ կը դառնայ, գիտէք հաստատուն աստղերը չատ հեռու են, եւ առատօրէն ցրուած երկինքը։

Այս անհամար աստղերը որոշելու համար, զատ զատ խումբ կամ հոյլ կազմած են աստղագէտներն զոր համաստեղ-ՐԻՆ կը կոչեն։ Մարկոս, մեծ չրջան մը գծէ սա բակին մէջ ... աւելի մեծ, մե՛ծ։ Դու, Կարապե՛տ որ այնքան թշեղ, այնքան կարմիր ու քաջառողջ ես, մէջ տեղ կեդրոնը կեցիր անշարժ. դուարեւը պիտի ըլլաս։ Մարկո՛ս չրջանակը տասն հաւասար մասի բաժնէ։ Լաւ մտիկ ըրէք. հիմակ Զոդիակոսի նշանները պիտի որոշեմ. Պոզ, Սիմոն, Սարգիս, Համբարձում, Խաչիկ, Գրիգոր, Պաղտիկ, Սահակ, Կիրակոս, Գասպար, Յովհաննէս, Պետրոս, դուք ամենքդ չրջանակին բոլորտիքը կեցիք այն կարգաւ որ Մարկոս մաս առ մաս բաժնեց։ Լաւ, այսպէս Կարապետին չուրջն մեծ չրջանակ մը կը կազմէք, այն որ արեւն է։ Զեզմէ իւրաքանչիւրն տասն եւ երկու նշաններէն մին կը ներկայացնէ։ Պոզ կը ներկայացնէ խոյը, Սիմոն՝ ցուլը, Սարգիս՝ երկաւորը, Համբարձում՝ խեցգետինն, Խաչիկ՝ առիւծը, Գրիգոր՝ կոյսը, Պաղտիկ՝ կշիռը, Սահակ՝ կարիճը, Կիրակոս՝ աղեղնաւորը, Գասպար՝ այծեղջիւրը, Յովհաննէս՝ ջրհոսը, Պետրոս՝ ձուկը։ Արդ՝ Ստեփանը պիտի ներկայացնէ երկիրն, եւ այն միայն պիտի չարժի։ Դուք ամենքդ անշարժ կեցիք։ Ստեփան, չրջանակին մէջ մտիր, Կարապետին եւ տասն եւ երկու ընկերներուդ մէջ կանգ առ։ Ենթադրեցէք որ Կարապետին եւ Ստեփանին մէջ 148 միլիոն հազարամէջ հեռաւորութիւն կայ։ Այնպէս կեցիր որ Պոզը տեսնես Կարապետին եւեւը. լա՛ւ, հիմակ կը տեսնես Կարապետն որ Արեւն է, Պոզին առջեւ, որ Խոյին նշանն է. Արեւն Խոյին մէջ կը տեսնես։ Հիմակ քալէ, զի երկիրը կը դառնայ, բայց ծանր գնա՛. Կարապետ Սիմոնին առջեւն է, կամ Ցուլ կոչուած նշանին առջեւ։ Առաջացի՛ր. ահա արեւն Սարգիսին առջեւ կամ Երկաւորին, եւ ապա Համբարձումին՝ որ Խեցգետինը կը ներկայացնէ, ապա Խաչիկի առջեւ, որ՝ իր երկար դեղձան մազերով՝ Առիւծն է։ Մի կենար. հիմակ կը տեսնես Գրիգոր կամ Կոյսն, ապա Պաղտիկը կամ Կշիռն, ապա Սահակն կամ Կարիճը։ Միշտ քալէ. Կիրակոս կամ Աղեղնաւորն արեւուն ետին է, ահա ըստ կար-

գի Գասպար կ'երեւի, որ Այծեղջիւրը կը ներկայացնէ, եւ Յովհաննէս, որ Ջրհորի դերն ունի, եւ վերջապէս Պետրոս որ Ձուկն է։ Բալէ միշտ, ահա նորէն արեւն Պողին կամ Խոյին առջեւ։ Կանգ առ, տարին կը վերսկսի։

Մարկոս։ – Միթէ Յունվար ամառուան հասա՞նք։

Գ։ – Ո՛չ, Մարտ 21 ին։

Երկնային տարին կ'սկսի գարնան հետ։ Գիտէք որ չորս եղանակ կայ, մէն մի եղանակին համար երեք նշան։ Գարունն ունի խոյն, ցուլն եւ երկաւորն։ ամառը, խեցգետինն, առիւծն եւ կոյսը։ աշունն կշիռը, կարիճն, աղեղնաւորն։ ձմեռն՝ այծեղջիւրն ջրհոսն, ձուկը։

Այս ամենը մի մոռնաք։ Այժմ գացէք խաղալու։

ՄԱՐՄՆՈՅՆ ԱՌՈՂՋՈՒԹԻՒՆԸ

Արդէն ըսինք որ մարդուս մարմինը մեքենայ մ'է, որուն չինուածքն աւելի փափուկ է քան թէ ժամացոյցինը, աւելի կնճռոտ ու զարմանալի է քան թէ ամենէն գօրաւոր շոգեշարժ գործիքը։



Մարմնոյն այլ եւ այլ մասերն են գործարաններն ու հիւսուածքը. այսինքն անդամները, սիրտը, ստամոքսը, թոքը, շնչերակները, միսունքը, ջիղերը. մորթը, եւ ասոնց ամէն մէկը զատ զատ պաշտօն ունի կատարելու։ Երբոր մարդկային մեքենային բոլոր մասերը կարգին են եւ իրենց գործը լաւ կը կատարեն՝ այն ատեն մարմինն ալ քաջառողջ վիճակի մէջ կը գտնուի։

Այս քաղառողջ վիճակը պիտանի է, որպէս զի՝ ոչ միայն մարմինը այժ առնէ եւ գործէ՝ այլ եւ միտքն ալ զօրանայ եւ լաւ գործէ։ Ուստի պարտաւոր ենք մեր ձեռքէն եկած խնամքը տանիլ որ մեր մարմինը միշտ ողջ ու առողջ վիճակի մէջ ըլլայ։

Քանի մը գլխաւոր պայմաններ կան այս վիճակին հասնելու համար, այս պայմաններն են. ՕԴ, ՀՈՒՐՐԻՆ, ԶԳԵՑՈՒ, ՕԳ, ԼՈՅՍ, ԿՐՈՒՐԻՆ ու ՀԱՆԳԻՍՏ։

ՍՆՈՒՆԴ

Սնունդը ողջ կը պահէ մարմինը, վասն զի զայն տաք կը բռնէ եւ կը չինէ այն նիւթն որով մարմնոյն ամեն մէկ մասը կազմուած է։

Յիրաւի՝ մեր մարմնական մեքենան սեռակ մը վառ կրակարան է, եւ մեր առած սնունդը նոյն կրակարանին վառիչ նիւթն է, ինչպէս որ ածուխը չոգեշարժ մեքենայինն է. ուրեմն սնունդ պէտք է տաքութիւն արտադրելու համար։

Բայց այրելու տեսն, մարմինն ալ այլ եւ այլ նիւթեր կ՝ապառէ եւ իր աւելորդ մասունքը դուրս կը նետէ։ Նոյնը կ՝ընէ եւ մեքենայի մը կրակարանը, այս տարբերութեամբ միայն որ երբ մեքենայինն կրակարանը մարդկային ձեռօք կը նորոգուի, մարմինն ինքնին կը նորոգուի։ Մարմնոյն մաշած մասերն անմիջապէս կը չինուին։ Արիւնը պարզապէս ոսկր, մկանունք եւ ուղեղ է հեղուկ վիճակի մէջ եւ ամեն մէկ գործարան՝ արիւնէն կ՝առնէ պէտք եղած նիւթը նորոգելու համար։ Ուրեմն սնունդ պէտք է նաեւ մարմինը չինելու համար։

Մարդուս կերած կերակուրը պէտք է սննդարար ըլլայ,

այսինքն՝ պէտք է որ արիւն չինող ըլլայ։ Եթէ մարմինը բաւական արիւնաշէն կերակուր չընդունի՝ չի կրնար դիմանալ ու տեւել։ Փուռի մը կրակը չի կրնար երկար տեւել եթէ անոր մէջ միայն քարեր կամ երկաթ նետենք վառելու համար։

Ամենէն լաւ սնունդը խառն կերակուրն է։ Արիւնն այլ եւ այլ նիւթերէ կը բաղկանայ. այս նիւթերէն մէկ քանին աւելի առատ կը գտնուին բոյսերու մէջ՝ մէկ քանին ալ միսերու մէջ։ Սովորական միսերու մէջ՝ կովու եւ ոչխարին միսն ամենէն անոգաբարն է եւ դիւրամարսը։ Հում կամ քիչ եփած միսը աւելի անոգաբար է. կովու միսը աւելի օգտակար է հորթի միսէն, իսկ ոչխարի միսն ալ գառնուկի միսէն։

Բուսական սնունդներ են հացն ու թանը, բրինձն ու գարին։ Ասոնք սովորաբար ալիւր կամ օսլայ պարունակող տունկեր են եւ շատ կարեւոր, քանի որ մեր մարմնոյն մէջ այրող նիւթերուն ամենէն գլխաւորներն են։ Օթեկ հացն աւելի դիւրամարս է քան նորը, թուխ հացն աւելի օգտակար է քան թէ ճերմակը։

Երբ կերակուրն եփեն՝ շատ անգամ իր աղային կամ հանքային մասունքը կը կորսուին, թէեւ անոնք ալ միւս մասերուն պէս պիտանի են կենդանական կենսոյ։ Այս կորսուած մասերուն տեղը լեցնելու համար պէտք է գործածել անեսի սնունդ, ինչպէս կաթ, կարագ, հատած պտուղներ, թարմ ջուր եւ հասարակ աղ եւ այնպիսի ընդեղէններ՝ զորս կարելի է հում ուտել։

Պէտք է լաւ ծամել կերակուրն եւ ապա կլլել։ Այսպէս աւելի շուտ կը մարսուի եւ սամոքսին գործը կը թեթեւնայ։ Շատ անգամ սամոքսի անհանգստութիւնն որ անմարսութիւն կ՚ըսուի, կերակուրը լաւ չծամելէն յառաջ կուգայ։ Մինչեւ անգամ կակուղ ուտելիքները, ինչպէս հացը, բրինձը, պէտք է առնն մը բերանին մէջ պահել որպէս զի թրջին, որով իրենց ալիւրոտ նիւթը շաքարի կը դառնայ եւ սամոքսի գործողութիւնը շատ կը թեթեւնայ։

Սովորաբար բաւական է օրն երեք անգամ կերակուր ուտել։ բայց աւելի կարեւոր է կանոն մը պահել ճաշի ժամանակաց մէջ։ Մարսողութիւնը կը պահանջէ որ բոլոր մարմինը հանդարտ ըլլայ, բայց մանաւանդ պէտք է որ մարսողութեան գործարանները չխանգարուին մարսելու ատեն։ Անուշդն ստամոքսի մէջ մնալով ուրիշ նիւթ մը կը դառնայ։ Ուստի կէս մը փոխուած ատեն եթէ նոր անուշդ խառնես անոր հետ՝ չփոթութիւն կը ծագի։ Ինչդ այն պիտի պատահէր՝ ինչ որ կը պատահի երբոր թուղթ չինելու պատրաստ գանգուածի մը հետ նոր քուրջեր խառնենք։ Կերակուրը մարսելու համար պէտք եղած ժամանակը՝ կերակուրին տեսակին համեմատ՝ երկուքէն մինչեւ չորս ժամ կը տեւէ։ Որ եւ է անուշդ ճաշէն գոնէ երկու ժամ հաքն առնելու է։ Իսկ կանոնաւոր միջոցը մէկ ճաշէն մինչեւ միւս ճաշը՝ պէտք է առնուազն չորս ժամ տեւէ։ Հարկ է պասկելէն առնուազն երկու ժամ առաջ ընթրել, որպէս զի ստամոքսն, ինչպէս նաեւ մարմնոյն միւս մասերն՝ հանդարտ մնան քնանալու ատեն։ Երկար ժամանակ ծոմ պահելն ալ վնասակար է, ինչպէս եւ չափէն աւելի ուտելը։

ՄԱՔՐՈՒԹԻՒՆ

Առողջութեան մէկ գլխաւոր պայմանն ալ մաքրութիւնն է, այսինքն մարմնոյն մորթը միշտ մաքուր եւ թարմ պահելն է։ Ինչպէս մեր նեարդին գործարանները, նոյնպէս մորթն իր յատուկ գործն ունի, եւ այդ գործը չի կրնար կատարել եթէ աղտոտ մնայ։

Մորթին մէջոցաւ դուրս կ'ելնեն արեան աղտոտ մասերը։ Այս է պատճառն որ մեր մարմնոյն վրայ երկու երեք միլիոն մանր խողովակներ կան որք ծակոտիք կ'ըսուին, եւ որոցմէ

քրտինքով դուրս կը թափէ արիւնն իր աւելորդ նիւթերը։ Այս ծակտիքը մարմնոյն բարեխառնութիւնը կը կանոնաւորեն։ Երբոր մարմինը սաստիկ տաքնայ՝ յոգնելէն կամ կրակէն, այն ատեն կը քրտնի եւ քրտինքը ծակտիքներէն դուրս ելնելով՝ կը զովանայ։

Ասկէ զատ մորթը փափուկ եւ կակուղ կը մնայ իւղային նիւթով մը որ մանր խղիկներու պէս մորթին երեսը կը սրսկի։

Արդ՝ թէ որ ծակտիքն ու իւղոց խղիկներն աղտոտութեամբ գոցուին՝ իրենց պաշտօնը չեն կրնար կատարել։ Այն ատեն կա՛մ մորթը պիտի հիւանդանայ, կա՛մ արիւնը պիտի խանգարի իր աղտոտ մասերը պահելով, կա՛մ կարելի է որ ուրիշ գործարան մը, զոր օրինակ երիկամունքը մորթին պաշտօնն ալ կատարէ իր պաշտօնէն զատ եւ այն ատեն կրնայ ծանր հիւանդութիւն պատահիլ։

Ուրեմն մորթը լուալն՝ առողջութեան համար անհրաժեշտ է։ Պէտք է ամեն օր ջրով լուալ մարմինն կամ գէթ թաց սպունգով չփել։ Դէմքն ու ձեռքերն որ միշտ բաց են, օրը երեք չորս անգամ լուալ պէտք է։

Ծովու բաղնիքն ամենէն առողջարար լուացումն է, քանի որ ուրիշ օգուտներու հետ թարմ օդ ծծելու եւ կրթութիւն ընելու զրպիռ կ՚ըլլայ։ Ճաշէն գոնէ երկու ժամ առաջ բաղնիք մտնել պէտք է։ Պաղ օդին պէտք չէ ծովու բաղնիք մտնել կամ երկար ատեն մնալ ջրի մէջ։

ԶԳԵՍՏ

Բաւական չէ մարմինը մաքուր պահել, պէտք է նաեւ ցուրտէն ու տաքէն պահպանել զգեստով։ Զգեստը տաք կը պահէ մարմինը, մեր բնական տաքութիւնը պահելով՝ քան թէ մեզի տաքութիւն տալով։ Երբ մարմինը թեթեւ հագուած է, իր այրելիքն՝ այսինքն մեռնդն աւելի շուտով կ'ոգտէ եւ հետեւապէս աւելի ուտելիք կը պահանջէ։ Ուրեմն հարկ է մարմնոյն բնական ջերմութիւնը պահել. վասն զի երբ ջերմութիւնը քիչնայ՝ արիւնը նեղս կը քաշուի, ներքին գործարանները կը ճնշուին եւ առողջութիւնը կը վնասուի։ Այս է պատճառն որ շատ ծեր մարդիկ եւ մանուկներ կը մեռնին երբոր ձմեռը կուգայ։

Ամենէն տաք լաթերը ամենէն քիչ տաքութիւն դուրս կը թողուն. ուստի փետուրն աւելի տաք է քան բուրդը, բամպակը քան կտաւը, բարակ լաթը քան հաստը, բաց գոյն հանդերձը քան մութը։

Ամառն եւ տաք կլիմայի տակ դարձեալ զգեստի պէտք ունին որպէս զի մեր մորթին արեւուն տաքութենէն պաշտպանուի։ Այն լաթերը լաւ են որք ամենէն աւելի տաքութիւն դուրս կը հանեն։ Այսպէս ճերմակ կամ բաց գոյն հագուստներ շատ աւելի կը դործածուին ամառը, վասն զի շատ ջերմութիւն չեն պահեր։ Գիշերները մեր ներքին եւ արտաքին լաթերը պէտք է հանել եւ գիշերոց հագուիլ եւ շաբաթը մէկ երկու անգամ ճերմակեղէն փոխել։

Այնպէս հագուիլ պէտք է որ մէկ կողմէն լաթերը չսեղմեն մարմնոյն որ եւ է գործարանը եւ անոր գործողութիւնը չարգելեն, եւ մէաս կողմէն ալ ցուրտ եւ խոնաւութիւն չընդունին։

Մէջքը շատ սեղմելը գօտիով կամ ուրիշ բանով՝ շնչառութիւնը կ'արգիլէ, լեարդը կը ճնշէ եւ արիւնը մարմնոյն ծայրերը կը քշէ, անոր անշնորհ ձեւ մը տալով։ Նոյնպէս վնասա-

կար են նեղ վզնոցներն ու փողկապները, կարգելն արիւնը գլխուն գալու եւ կրնան կաթուած բերել։

Պէտք է որ գլխանոցները թեթեւ ըլլան եւ գլխուն երակները չճնշեն՝ արեան չրջանն արգիլելով։ Կ'ըսեն թէ ճաղատ կ'ըլլան մարդիկ ծանր եւ նեղ գլխարկներ գնելով։ Ցաղց արունքը սովորաբար բաց այսենքն երարմէ հեռու մնալով՝ որ գէշ սովորութիւն մ'է, ապայք չատ անգամ պաղ կ'առնեն եւ կը հիւանդանան։ Նոյնպէս երբ ծեր մարդիկ իրենց կուրծքն ու կռնակը ցուրտին բաց պահեն՝ իրենց առողջութեան կը վնասեն։

ՕԳԱՌՈՒԹԻՒՆ

Թարմ ու մաքուր օդը պէտանի է կենաց եւ առողջութեան՝ որչափ լաւ մնունդը։ Իրօք օդը մնունդ է, անոր համար որ մեր նիւթական մնունդն անօգուտ պիտի ըլլար առանց օդի։ Մեր ծծած օդին թթուածինն է որ արեան ածխածնին հետ միանալով՝ մեր մնունդին տաքութիւն կուտայ եւ մարմինը կը մնուցանէ։ Ամէն անգամ որ չունչ կ'առնենք՝ մեր թոքերը բաւական թթուածին կ'ընդունին օդէն։ Իսկ երբ չունչ կուտանք՝ մեր թոքերը թթուածինի տեղ նոյնչափ ածխայրն թթուգուրս կը հանեն։ Ածխայրն թթուն թոյն մ'է, ուստի եւ մեր չունչը քիչ չատ թունաւոր օդ է։ Եթէ թարմ օդ ծծելու տեղ միշտ չունչ տանք՝ ոչ միայն արիւնը կը զրկենք թթուածինէն՝ որ կարեւոր է մարմինը տաքցնելու ու կազդուրելու, այլ իրօք արիւնը կը թունաւորենք, եւ եթէ այսպէս շարունակենք՝ ուշ կամ կանուխ հիւանդութիւն եւ մահ կրնան պատահիլ։

Երբոր մարդիկ տեղ մը կը գումարուին բազմութեամբ՝ ինչպէս եկեղեցի կամ ուրիշ հասարակաց վայր մը, եւ չատ

ժամեր միատեղ կը կենան՝ յանկարծ ոմանք կը մարին վար կ'իյնան, վասնզի ներսի օդը տաքցած եւ թունաւորուած է։ Եթէ քանի մը ժամ եւս այնպէս գոցուած մնան՝ անտարակոյս շատերը կը մեռնին։

Եթէ ոչ յանկարծ, քիչ քիչ նոյն վիճակը կը հասնի նաեւ գործարաններու մէջ գումարուած բանուորներու եւ դպրոցաց աշակերտներու, որոնք ընդհանրապէս օդառէտ եւ լայն բնակարաններ չունին։ Բժիշկները կ'ըսեն թէ շատ հիւանդութիւններ, ինչպէս թոքացաւ եւ խոյլ՝ շատ անգամ ոչ այնչափ պաղ եւ փոփոխական օդէ, որքան թունաւորուած օդէն յառաջ կուգան, մանաւանդ երբ գործատուներու եւ նեղ տուներու մէջ կը բնակինք։

Ուրեմն այն տեղուանքն ուր մարդիկ բազմութեամբ կը լեցուին — ինչպէս եկեղեցիներ, դպրոցներ, գործարաններ, ընթերցատուններ եւ թատրոններ — պէտք է որ օդառու ըլլան, այսինքն այլուայլ միջոցներով՝ շնչուած օդը դուրս հանեն եւ թարմ օդ ներս բերեն։ Թերի՝ օշառութիւնէ է որ շատ անգամ մարդիկ եկեղեցւոյ մէջ կը փնտռեն եւ ապայր դպրոցի մէջ անմասնիր կ'ըլլան։

Պզտիկ սենեակներն այլ ուր շատ մը հոգի կը բնակին, օդի պէտք ունին, վասնզի եթէ գոյ մնան՝ քիչ քիչ օդը կ'ապականի։ Պզտիկ սենեակի մը մէջ նստող մարդն անդամ իր շնչառութենէն կրնայ թունաւորուիլ եթէ երկար ատեն անոր մէջ փակուած մնայ։ Բայց աւելի անօր ենջարաններու մէջ վասնգներ կը պատահին. բոլոր օրը գոց կը պահեն կարծելով թէ օդը վնասակար է եւ ենջողները բոլոր գիշեր երարու շունչը կը շնչեն։ Այս է պատճառն որ առաւօտեան դէմ բազմաթիւ ենջարանէն հոտ անտանելի է, մանաւանդ գրեթէ ներս մտնողին համար։

Օդը ոչ միայն մեր թոքերէն ելած ածխայնն թթուէն կրնայ աւրուիլ՝ այլ եւ ուրիշ բաներէ։ Բարեհաճաբար կրնայ քարի մանր հատիկներ շնչել, երկաթասրիչը մեռաղէ մանրիկներ եւ բամպակ մանողը՝ բամպակի մանրիկներ կլլել՝ որոնք թոքե-

բուն վրայ մնալով չատ անգամ հիւանդութիւն եւ մահ կը պատճառեն։

Բայց ամենէն վտանգաւոր եւ օդը ապականող նիւթերն՝ ժանտոտ կենդանիներն ու բոյսերն են որք չատ անգամ մահաբեր հիւանդութիւններ կը պատճառեն. այսպիսի նիւթերն երբէք տուներու մէջ թողուլ պէտք չէ, վասն զի չատ անգամ տենդային հիւանդութիւններն այդ ապտեղութիւններէն կը ծագին։

ԿՐԹՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱՆԳԻՍՏ

Մարմնոյն մկունքը գործածուելով կ՚աճին ու կը զօրանան. ուրեմն զանոնք առողջ վիճակի մէջ պահելու համար կրթութիւն ու մարզանք պէտք են։ Մարմնային մարզանքն արեան շրջանը կը գիւրացնեն եւ սրտին, թոքերուն ու մորթին օգտակար են, ջիղերը կը զօրացնեն, ախորժակ կը բանան եւ մարսողութեան կ՚օգնեն։

Ամեն մարդ կարող է իրեն յարմար մարմնական կրթութիւն մը գտնել։ Քալել, վազել, լողալ, այլ եւ այլ խաղեր խաղալ, ձիավարել եւ այլն չատ օգտակար խաղեր են։ Բայց աւելի օգտակար է կանոնաւոր մարմնամարզը։

Մարմինն ինչպէս մարզանքի՝ նոյնպէս հանգստի կարօտ է, թէեւ սիրան ու թոքերը միշտ շարժման մէջ են։ Բուն հանգիստը քունն է. որչափ որ արթուն եղած ատեննիս ալ մեր մկանունքը կրնան հանդչիլ, բայց որովհետեւ ուղեղն եւ մեր ջիղերն՝ երբոր արթուն ենք կը գործեն, պարտաւոր ենք քնանալ որպէս զի անոնք ալ հանդչին։

Մարդ սովորաբար պէտք ունի քսան եւ չորս ժամուան մէջ ութ ժամ քնանալու։ Անոնք որ քիչ աշխատանք ու քիչ հոգ ունին, կրնան աւելի քիչ քնանալ, բայց առհասարակ

աւելի քնասէր են։ Ընդհակառակն անոնք որ ցերեկը գլխով աւելի կ՚աշխատին եւ գիշերը աւելի շատ քնանալու պէտք ունին, ատոնք աւելի քիչ կը քնանան. այս կարգի մարդիկ սովորաբար երկայնակեաց չեն լներ։ Հասուն մարդէն աւելի պէտք ունի քնանալու պատանի մը, իսկ մանուկ մը պէտք է օրուան կէսը քունով անցնէ, վասն զի քունը կը սնուցանէ տղայքը։

Շատ քունը մեզի ծոյլ կ՚ընէ, որովհետեւ անմարդութիւնէ դանդաղութիւն կ՚ունենանք եւ մեր միտքերը եղ կը կապէ. բայց աւելի վնասակար է քիչ քունը։ Պէտք է միշտ չափ մը պահել թէ կրթութեան եւ թէ հանգստի ժամերու մէջ։

ՑԱՆԿ

	Եր-ե-
Յառաջաբան	3
Ի՞նչ է պատճառը	5
Տղուն պարտիքը	6
Այլատեսակ պահարաններ	8
Կենդանիներու լեզուն	8
Խումբ	9
Բաղդատութիւն	10
Հինգ զգայարանք	10
Ճշմարտութեան սէրը	11
Դիտողութիւն	12
Ծանրութեան կեդրոն	14
Կաղնին ու ճառատունկը	15
Աղուեսը ու պաշտօն	16
Բարի գիշեր եւ բարի լոյս	17
Ջուր	19
Պզտիկ աստղաբաշխը	21
Ջերմաչափ	23
Հանրի Դ. եւ գիւղացին	24
Երկիրը կը դառնայ	25
Մկունջ	28
Բնութիւն	29
Ճարտարութիւն	30
Բենիամին	31
Ժրութիւն	33
Երկրաշարժ հրաբուխ	34
Համեստութիւն	35
Սահակ	36

Օդ 38
Մեծ մարդիկ 41
Ծնողասիրութիւն 42
Կենդանիք 43
Զափաւորութիւն 46
Երկու մեղու 47
Հացն ի՞նչպէս կը շինուի 49
Քիչով գոհ ըլլալ 50
Գոյները 51
Հովիւը 54
Առածներ 56
Շաքարն ի՞նչպէս կը շինուի 56
Երկու գրեանք 59
Աղուէս ու առիւծ 60
Բնագէտ եւ արհեստաւոր 60
Արթուն միտք 68
Որդիական սէր 70
Խաւուէ 71
Փոթորիկ 73
Եւեկտրականութիւն 75
Նահանջ տարի 79
Բնագէտ եւ արհեստաւոր 81
Աղ 86
Աչուպներ 89
Եղ 91
Ծոյլ 93
Թուղթ 94
Գերանին վրայ գամեր 96
Թեթեւ պակասութիւններ 97
Սողուններ 98
Իժ ու տզրուկ 100
Խնայողութիւն 101
Խնձորն ընկաւ 101

Երկու մոմ 104
Ֆրանքլինի սուլիչը 104
» առաջները 105
Մեղուն 107
Նաւ 108
Ծովային թաթառ 110
Օդապարիկ 111
Ցովհաննէս 112
Թռչունները 114
Գիսաւորներ 117
Աքծիւ 119
Անգղ 120
Ծիծեռնիկ 121
Բոյսեր 121
Աղբայաթուչնիկ, սարեկիկ, պապկայ 123
Փետրաւոր երէ հաւեր 124
Աղաւնի, տատրակ 125
Գիւղին դարբինը 126
Ձայլամ 128
Վեհանձնութիւն 129
Մակեդոնիոյ Փիլիպպոս թագաւորը 130
Վայրահաչ մարդիկ 131
Ջրագուաւ, սագ եւ կարապ 132
Գինի 133
Քացախ 135
Աշխէն 136
Փոշրիկ քոյր 138
» Մարիամ 141
Ջուկեր 141
Շանաձուկ 144
Դաս մը 144
Թոյլատարը եւ կենդանաբոյս 147
Ճշմարիտ գթասիրութիւն 148

Բոյս 149
Գոլոմպոս 151
Լուսին 154
Սարեակ 157
Աւելորդապաշտ 158
Թաւարում 160
Կարապ, ձուկ եւ խեչափառ 162
Հանքաբան Գրիգորը 163
Ադամանդ 164
Հանքային աղեր 161
Մետաղներ 165
Գործիք, մեքենայ 168
Թունիկին կապան 171
Շոգեշարժ մեքենայ 172
Ի՞նչպէս կը շինուին գիրքերը 174
Աքաղաղ եւ մարգարիտ 176
Զոդիակոս 176
Մարմնոյն առողջութիւնը 179
Մնունդ 180
Մաքրութիւն 182
Զգեստ 184
Օդառութիւն 185
Կրթութիւն եւ հանգիստ 187

ԴԱՍԱԳՐԵԱՆՔ
ՄԱՄՈՒՐԵԱՆ ԳՐԱՏԱՆ

Գրս. 2 մէջիս 20ն

Նոր այբբենարան		½
Մանկական պարտէզ	5 ղրշ Տպ-էր·	1 ½
Առաջին ընթերցարան	4 ղրշ »	3
Երկրորդ ընթերցարան		4
Երրորդ ընթերցարան	7 ղրշ »	5
Չորրորդ ընթերցարան կամ Գիտելիք	8 ղրշ Տպ-էր·	6
Առողջաբանութիւն աղջկանց		4
Աստղագիտութիւն		6
Բանալի Հայ. շարադրութեան·	2 ղրշ Տպ-էր·	3
Ընդհ. պատմութիւն համառօտ Ա· հատոր	2 ղրշ Տպ-էր·	5
» » » Բ· »	» »	7 ½
» » » Գ· »	» »	10
Իրաքանչիւրն	2 ղրշ Տպ-էր·	5
Համառօտ պատմ· բնական գիտութեան		5
Պատմութիւն Հայոց		7
Ուսումն քրիստոնէական	Ս· Վարժապետեան Ա-դ-ը 2, դ-ը·	2 ½
Երգեցողութիւն	Ս· Պատարագի	20

معارف نظارت جلیله‌سنك ٥٦٨ نومرولی و١٥ تشرین اول ١٣١٤
تاریخلو رخصتنامه‌سیله طبع ونشر اولنمشدر